Մարդու իրավունքների ձեռնարկ. ուսուցիչների գործունեությունը հավաքների ընթացքում

Մարդու իրավունքների ձեռնարկ. ոստիկանության գործունեությունը հավաքների ընթացքում

Սույն ուղեցույցն ի սկզբանե հրատարակվել է ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի (ԺՀՄԻԳ) կողմից 2016թ. «Human Rights Handbook on Policing Assemblies» («Մարդու իրավունքների ձեռնարկ. ոստիկանության գործունեությունը հավաքների ժամանակ») վերնագրով: Հայերեն տարբերակը ոչ պաշտոնական թարգմանություն է, որը պատրաստվել և հրատարակվել է ԺՀՄԻԳ-ի օժանդակությամբ: Այստեղ զետեղված կարծիքները և տեղեկությունները կարող են չհամընկնել ԺՀՄԻԳ-ի քաղաքականության և դիրքորոշման հետ: Տեքստում առկա տարբերությունների պարագայում հարկ է առաջնորդվել անգլերեն բնագրով՝ որպես առաջնային և պաշտոնական տարբերակ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երախտիքի խոսք 5
Առաջաբան..... 7
Ներածություն..... 9

Մաս I.
Սահմանումներ, սկզբունքներ և կանոններՐ 13

ԳԼՈՒԽ 1. ԽԱՂԱՂ ՀԱՎԱՔՆԵՐԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ.....14
Հավաքների տեսակները.....16
Բռնություն և հավաքներ.....19
Հավաքների ազատության սահմանափակումը 20
Հավաքն արգելելը 24
Ծախսեր 24

ԳԼՈՒԽ 2. ՀԱՎԱՔՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ 25
Ոստիկանության գործունեության ժողովրդավարական հիմքերը 25
Մասնակիցների վարքի մասին իմացությունը..... 27
Հավաքների ընթացքում ոստիկանության գործունեության սկզբունքները 28
Գիտելիքը 28
Աջակցումը 29
Հաղորդակցությունը 30
Տարբերակումը 30
Արդյունքները 31
Սկզբունքի ընդհանուր կիրառումը 31
Բազմազանությունը և հավասարությունը..... 32
Ուժի կիրառումը որպես ծայրահեղ միջոց 34
Ոստիկանությունը և զանգվածային լրատվության միջոցները 37

ԳԼՈՒԽ 3. ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՈՒՄ ԵՎ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ 40
Որոշումների կացման մոդել.....41
Ռիսկերի գնահատում 44

Մաս II.
Նախքան հավաքը, կազմակերպում և պլանավորում 47

ԳԼՈՒԽ 4. ՀՐԱՄԱՆԱՏԱՐԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ.....48
Ռազմավարական հրամանատարություն 50
Օպերատիվ հրամանատարություն 52
Մարտավարական հրամանատարություն 55
Դերեր և պարտականություններ 57

ԳԼՈՒԽ 5. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓՈՒԼ.....58
Գիտելիք.....58
Աջակցում.....59
Հաղորդակցություն.....60
Հաղորդակցություն.....63
Ռիսկերի գնահատում.....63
Ռազմավարական մտադրություններ..64

ԳԼՈՒԽ 6. ՕՊԵՐԱՏԻՎ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓՈՒԼ 69
Գիտելիք 70
Ռիսկերի գնահատում 71
Աջակցում 72
Հաղորդակցություն 74
Տարբերակում 76
Արտակարգ իրավիճակներ 76
Օպերատիվ տարբերակներ 77
Ոստիկանության դերերը 78
Ռեսուրսներ և սպառազինություն 85
Սպառազինություն 89

ԳԼՈՒԽ 7. ՄԱՐՏԱՎԱՐԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓՈՒԼ 99
Գիտելիք 99
Աջակցում 100
Հաղորդակցություն 102
Տարբերակում 104

Մաս III.
Հավաքների ընթացքում 107
ԳԼՈՒԽ 8. ԱՋԱԿՑՈՒՄ ԽԱՂԱՂ ՀԱՎԱՔՆԵՐԻՆ 108
Գիտելիք 108
Աջակցում 109
Հաղորդակցություն 110
Տարբերակում 111
Ոստիկանության վարքագիծը 112
Ինքնաբուխ հավաքներ 113
Մասնակիցներին հավաքը լքելու հնարավորության ընձեռում 115

ԳԼՈՒԽ 9. ՀԱԿԱԶԴՈՒՄ ԱՆԿԱՐԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԵՎ ԲՌՆՈՒԹՅԱՆԸ 117
Լարվածության թուլացում (դեէսկալացիա) 117
Ձսպում 118
Հավաքի ցրում 120

Մաս IV.
Հավաքից հետո 125
ԳԼՈՒԽ 10. ԳՈՐԾՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՈՒՄ 126
Ռեսուրսների կառավարում 126
Ուժի կիրառման արձանագրում 127
Ոստիկանների ստացած վնասվածքները 127
Սպառազինության վերադարձը 127
Ձերբակալված անձինք 128

ԳԼՈՒԽ 11. ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ ԵՎ ՔԱՂՎԱԾ ԴԱՍԵՐ . 130
Արդյունքների ամփոփման ձևերը 130
Քաղված դասեր 134

Հավելված 139
ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ 139
ՆԱԽՔԱՆ ՀԱՎԱՔԸ, ԴՐԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԵՎ ԴՐԱՆԻՑ ՀԵՏՈ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԱԿԱՆ ՏԱՐԲԵՐ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԻ ԴԵՐԵՐԻ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐ 141
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ԵՎ ՕԳՏԱԿԱՐ ՀՂՈՒՄՆԵՐ 145

Երախտիքի խոսք

ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակն (ԺՀՄԻԳ) իր երախտագիտությունն է հայտնում ոստիկանության հարցերով միջազգային խորհրդատու Ալլան Զոնսին (Միացյալ Թագավորություն), ում գիտելիքը, հմտությունները և նվիրումը խիստ կարևոր էին «Մարդու իրավունքները ձեռնարկ. ոստիկանության գործունեությունը հավաքների ընթացքում» ձեռնարկը պատրաստելու գործում:

ԺՀՄԻԳ-ը և ԵԱՀԿ Անդրազգային սպառնալիքների վարչության Ոստիկանության ռազմավարական հարցերի բաժինը (ԱԱՍՎ/ՈՌՀԲ) իր երախտագիտությունն է հայտնում նաև Հավաքների ազատության փորձագետների խմբին և այլ փորձագետների, ովքեր իրենց կարծիքն ու մեկնաբանություններն են տրամադրել ուղեցույցների մշակման ընթացքում՝

Օտտո Աղանգ, Նիդերլանդների ոստիկանության ակադեմիայի Հասարակական կարգի պահպանության ամբիոնի վարիչ, Նիդերլանդներ,

Անյա Բիյեներթ, «Ամնեսթի Ինթերնեյշնլ»-ի Նիդերլանդների մասնաճյուղ, Ոստիկանության և մարդու իրավունքների ծրագիր, Նիդերլանդներ, ԺՀՄԻԳ-ի Հավաքների ազատության փորձագետների խումբ,

Թոմաս Կազար, Ոստիկանության ազգային բյուրոյի Ծավալման վարչություն, Գերմանիայի ոստիկանություն, Գերմանիա,

Այան Չափիել, Լոնդոնի ոստիկանության ավագ սպա (պաշտոնաթող), Միացյալ Թագավորություն,

Դավիթ Գոլդբերգեր, Օհայո նահանգի համալսարանի Իրավունքի պատվավոր պրոֆեսոր, Միացյալ Նահանգներ, ԺՀՄԻԳ-ի Հավաքների ազատության փորձագետների խումբ,

Մայքլ Համիլթոն, Արևելյան Անգլիայի համալսարանի Հանրային բողոքի ակցիաների իրավունքի ավագ դասախոս, Միացյալ Թագավորություն, ԺՀՄԻԳ-ի Հավաքների ազատության փորձագետների խումբ,

Էդդի Հենդրիքս, Ոստիկանության հարցերով միջազգային փորձագետ, Բելգիա,

Սալլի Զեկսոն, Գենդերային հարցերով փորձագետ, «Standing Together» (Միացյալ ճակատ) ՀԿ, Միացյալ Թագավորություն,

Նիլ Զարման, Կոնֆլիկտների հետազոտությունների ինստիտուտի տնօրեն, Միացյալ Թագավորություն, ԺՀՄԻԳ-ի Հավաքների ազատության փորձագետների խումբ,

Անդրե Կոնզե, Գերմանիայի ոստիկանության համալսարանի Ոստիկանական ծառայության հետազոտությունների և վերապատրաստումների բաժին, Գերմանիա,

Կատարժենա Լոպուշինսկա, Ազգային ոստիկանության Օպերացիաների և ճգնաժամային կառավարման հրամանատարական կենտրոն, Լեհաստան,

Մանուել Ավգուստո Մաջինա դա Սիլվա, Պորտուգալական ոստիկանության ավագ սպա, Պորտուգալիա,

Զորան Միսիչ, Սերբական ոստիկանության Համազգեստ կրող ոստիկանության տնօրինության պետի տեղակալ, Սերբիա,

Աննեկե Օսսե, Ոստիկանության և մարդու իրավունքի հարցերով խորհրդատու, Քենիա,

Սերգեյ Օստաֆ, Մարդու իրավունքների ռեսուրսային կենտրոնի տնօրեն (CReDO), Մոլդովա, ԺՀՄԻԳ-ի Հավաքների ազատության փորձագետների խումբ.

Ռալֆ Փրայս, Չիկագոյի ոստիկանության պետի տեղակալ և գլխավոր իրավախորհրդատու, Միացյալ Նահանգներ,

Մարտինա Շրայբեր, Հասարակական կարգի պահպանման և ամբոխի դինամիկայի փորձագետ, Գերմանիա,

Ժիլբեր Սինիսկալկո, Ֆրանսիական ազգային ոստիկանության հրամանատար, Ֆրանսիա,

Մարտին Սվենսոն, Շվեդիայի ազգային ոստիկանության Մալմոյի բաժին, Շվեդիա,

Գարի Ուայթ, Գործառնությունների տնօրեն, «Ineqe» խումբ, Միացյալ Թագավորություն:

Առաջաբան

Խաղաղ հավաքների ազատությունը մարդու հիմնարար իրավունք է, որն արմագրված է մարդու իրավունքների միջազգային մի շարք փաստաթղթերում, այդ թվում՝ ԵԱՀԿ 1990 թվականի Կոպենհագենյան փաստաթղթում: Փաստաթուղթը ներկայացնում է ժողովրդավարական հասարակության հիմքը՝ յուրաքանչյուր անձի հնարավորություն տալով ազատորեն արտահայտել իր կարծիքը, որը կարող է լինել տարակարծիք կամ չվայելել ժողովրդականություն: Պետությունները պարտավոր են հարգել, պաշտպանել և իրագործել այս իրավունքը: Խաղաղ հավաքի իրավունքը երաշխավորվում է միայն այնքան ժամանակ, քանի դեռ այն խաղաղ է: Ապօրինի, սակայն խաղաղ հավաքները, երբ կազմակերպիչը կամ անհատները չեն ապահովել օրենքի պահանջի կատարումը, վայելում է պաշտպանության նույն մակարդակը, ինչ բոլոր խաղաղ հավաքները:

Հավաքների սպասարկման հարցում ոստիկանության դերը չափազանց կարևոր է: Հանդիսանալով պետական իշխանության ամենատեսանելի դրսևորումը՝ ոստիկանությունը ցուցադրում է իրավունքի գերակայությունն ապահովելու և մարդու հիմնարար իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու պետության հանձնառությունը: Ոստիկանությունը պետք է սպասարկի բոլոր խաղաղ հավաքները՝ ինքնաբուխ և համընթաց հավաքները և հակընդդեմ ցույցերը, պաշտպանի հավաքների մասնակիցներին՝ նրանց հնարավորություն ընձեռելով թիրախային լսարանին տեսանելի և լսելի կերպով անկաշկանդ ներկայացնել իրենց կարծիքները: Այս ձեռնարկն առաջարկում է փոխել հավաքների ընթացքում ոստիկանության գործունեության մտայնությունը և մոտեցումը հավաքներին՝ դադարելով դիտարկել դրանք որպես հնարավոր վտանգավոր միջոցառումներ և ընդունել հավաքները որպես մարդու կարևոր իրավունքի դրսևորում, որը ոստիկանությունը պարտավոր է հարգել և պաշտպանել: Հավաքների մեծ մասը, իրականում, խաղաղ են և հասարակական կարգի համար առանձնակի մարտահրավերներ չեն առաջացնում: Ոստիկանության համար, սակայն, կարևոր է լինել լավ պատրաստված և վարժ՝ հավաքներին առնչվող ցանկացած կոնֆլիկտ նախականխելու և, ի հայտ գալու դեպքում, լարվածությունը թուլացնելու համար:

Այս ձեռնարկը ԺՀՄԻԳ-ի՝ հավաքների ազատության ոլորտում ԵԱՀԿ պարտավորությունների կատարմանն աջակցելու ավելի ծավալուն աշխատանքի մի մասն է: ԺՀՄԻԳ-ը մշտադիտարկում է հանրային հավաքները ԵԱՀԿ

մասնակից պետություններում և հրապարակում զեկույցներ, որոնք պարունակում են եզրակացություններ և առաջարկություններ, այդ թվում՝ հավաքների ընթացքում ոստիկանության գործունեության վերաբերյալ: Եվրոպայի խորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) հետ համատեղ հրապարակած ԺՀՄԻԳ-ի՝ «Խաղաղ հավաքների ազատության մասին ուղեցույցները» մարդու իրավունքների միջազգային չափանիշներին համապատասխանությունը գնահատելու ուղենիշ և հենանիշ են ծառայում: Այս գործիքների մշակման համար մենք պարտական ենք ԺՀՄԻԳ-ի Հավաքների ազատության փորձագիտական խմբի անդամ հանդիսացող անկախ փորձագետներին: ԵԱՀԿ տարածաշրջանում հավաքների ազատությանն առնչվող օրենսդրության ուսումնասիրության և կարողությունների ամրապնդման հարցերում շարունակելու ենք ապավինել նրանց փորձագիտական գիտելիքներին և օբյեկտիվությանը:

Ձեռնարկը համալրում է ոստիկանության գործունեության ժողովրդավարական սկզբունքների և առաջատար փորձի մասին ուղեցույցների շարքը, որոնք, ԺՀՄԻԳ-ի հետ սերտ համագործակցությամբ, պատրաստել է ԵԱՀԿ Անդրազգային սպառնալիքների վարչության Ոստիկանության ռազմավարական հարցերի բաժինը (ԱԱՍՎ/ՈՌՀԲ): Հուսով եմ, որ այս ձեռնարկում ներկայացված հավաքների ընթացքում ոստիկանության գործունեության առաջատար փորձը լայն տարածում կգտնի և համատարած կկիրառվի ոստիկանության կողմից ԵԱՀԿ տարածաշրջանում:

Միքայել Գեորգ Լինկ
ԺՀՄԻԳ-ի տնօրեն

Ներածություն

Բողոքի, ցույցի, տոնակատարության, հիշատակության և, ընդհանրապես, իշխանություններին և այլ քաղաքացիներին սեփական տեսակետների համատեղ ներկայացման նպատակով խաղաղ հավաքվելու իրավունքը ժողովրդավարական համակարգերի գործունեության առանցքն է: Այն անմիջականորեն փոխկապակցված է ժողովրդավարության և բազմակարծության մյուս անկյունաքարերի՝ արտահայտվելու ազատության և միավորումների ազատության հետ: Խաղաղ հավաքների ազատության իրավունքն ամրագրված է մարդու իրավունքների մի շարք միջազգային փաստաթղթերում և երաշխավորված է 1990 թվականի ԵԱՀԿ-ի Կոպենհագենի փաստաթղթում:

Խաղաղ հավաքների ազատության իրավունքի ապահովումը կարող է մարտահրավեր լինել իշխանությունների համար: Դա հատկապես բարդ է ոստիկանության պարագայում, որն առաջնային պատասխանատվություն է կրում մի կողմից՝ հավաքի անցկացումն ապահովելու, իսկ մյուս կողմից՝ այլ անձանց իրավունքների և ազատությունների անհամաչափ սահմանափակումը կանխելու և հասարակական կարգի պահպանումն ապահովելու համար:

Ձեռնարկի նպատակն է ուղղորդել ոստիկանությանը խաղաղ հավաքվելու իրավունքի ապահովման հարցերում: Ձեռնարկը գլխավորապես գրվել է ԵԱՀԿ տարածքի ոստիկանության այն աշխատակիցների համար, որոնք տարբեր աստիճանի հրամանատարական պատասխանատվություն են կրում հանրային հավաքների ժամանակ ոստիկանական գործունեություն իրականացնելու ընթացքում: Ձեռնարկում նախանշվում են հավաքների ընթացքում ոստիկանության բարեխիղճ աշխատանքի առանցքային քայլերը և սկզբունքները, որոնք իրականացվում են մտածված և համաչափ գործողությունների միջոցով և որոնց կենտրոնում դրված է խաղաղ հավաքների իրավունքն ապահովելու նպատակը: Ձեռնարկը տալիս է հավաքների ընթացքում ոստիկանության արդյունավետ գործունեություն իրականացնելու ցուցումներ, որոնք բխում են մարդու իրավունքների ոլորտում միջազգային իրավունքից և ԵԱՀԿ ամբողջ տարածաշրջանում ձևավորված առաջատար փորձից: Թեպետ ձեռնարկի ուշադրության կենտրոնում «հավաքներն» են, ցուցումներն ու առաջարկվող պրակտիկան կիրառելի են նաև այլ տեսակի հանրային միջոցառումների ժամանակ (օրինակ՝ հանդիսավոր պետական միջոցառումներ, սպորտային իրադարձություններ):

Ձեռնարկը հատուկ շեշտում է միջոցառումից առաջ ոստիկանության կողմից պլանավորման և նախապատրաստման գործողությունների համար ժամանակ և ռեսուրսներ հատկացնելու կարևորությունը: Դա չափազանց կարևոր է կազմակերպիչների համար ցանկալի եղանակով միջոցառման ընթացքը և այլոց իրավունքներին ու ազատություններին նվազագույն միջամտությունը երաշխավորելու համար: Նման մոտեցումը կարող է նվազեցնել բռնության կամ հանրային անկարգությունների վտանգը, ինչպես նաև նպաստել ոստիկանության հանդեպ հանրային վստահության ամրապնդմանն ու կարծիքի բարելավմանը: Ձեռնարկի հիմքում ընկած են չորս սկզբունքներ՝ գիտելիքը, հաղորդակցությունը, աջակցումը և տարբերակումը, որոնք ոստիկանությունը պետք է նկատի առնի հանրային միջոցառումներին նախապատրաստվելու և դրանք սպասարկելու բոլոր փուլերում կոնֆլիկտները կանխելու և լարվածությունը նվազեցնելու նպատակով:

Ձեռնարկն ուղղորդում է ոստիկանության հրամանատարներին առ այն, թե ինչպես իրականացնեն համայնքի ներգրավման և պլանավորման գործընթացները: Ձեռնարկը սահմանում է նրանց խնդիրներն ու պարտականությունները, անդրադառնում որոշումների կայացման խնդրին: Ձեռնարկը տալիս է բազմատեսակ հավաքների ընթացքում ոստիկանական գործունեություն իրականացնելու և հավաքին մասնակցող անհատների և խմբերի վարքագծին առնչվող մարտավարությունների մասին ցուցումներ: Այն անդրադառնում է նաև ոստիկանության մտադրությունների և նպատակների խնդրին, սահմանում է ոստիկանության կողմից ուժի կիրառման չափորոշիչներ, որոնք բխում են մարդու իրավունքների միջազգային իրավունքի համակարգից:

Ձեռնարկն անդրադառնում է ինչպես նախապես պլանավորած, այնպես էլ ինքնաբուխ հավաքներին, ուղղություն է տալիս նման միջոցառումների պլանավորման և կազմակերպման հարցերում: Ներկայացնում է միջոցառման ավարտին հաջորդող պրակտիկայի կառուցվածքը և զեկույցների ներկայացման գործընթացները, որոնք հնարավորություն են տալիս բարելավել ոստիկանության աշխատանքը՝ ապագայում դրանում ներառելով առաջադեմ փորձը: Ձեռնարկում նկարագրված մոտեցումներից շատերը կարող են ծանոթ լինել ազգային մի շարք համատեքստերում և ավելի քիչ տարածում ունենալ այլ երկրների համատեքստերում: Միաժամանակ, ներկայացված բոլոր մոտեցումներն արտացոլում են ԵԱՀԿ մասնակից պետություններում հավաքների ընթացքում ոստիկանության գործունեության առաջադեմ փորձը, որը բխում է ժողովրդավարական ոստիկանական ծառայության սկզբունքներից և, հետևաբար, պետք է հեշտությամբ ադապտացվի տարածաշրջանի ոստիկանության ծառայությունների կողմից: Ձեռնարկը մշակել են ոստիկանությունում ծառայության բազմամյա փորձ ունեցող հրամանատարներ, այն անցել է ոստիկանության՝ հավաքների ազատության ոլորտի գիտակ այլ հրամանատարների և մարդու իրավունքների փորձագետների վերանայման մի շարք փուլեր:

Հանրային հավաքների կարգավորումը և դրանց ընթացքում ոստիկանական ծառայությունը մարդու իրավունքների միջազգային չափանիշներին համահունչ իրականացնելու նպատակով ԺՀՄԻԳ-ը ներգործուն օրենսդրական և այլ օժանդակություն է տրամադրում ԵԱՀԿ մասնակից պետություններին: Տվյալ աշխատանքների շրջանակում մշակվել է այս ձեռնարկը, որը նպատակ ունի աջակցել մասնակից պետություններին կատարել խաղաղ հավաքների ազատությանն առնչվող իրենց պարտականությունները: Ձեռնարկին զուգահեռ ԺՀՄԻԳ-ն առաջարկում է վերապատրաստում՝ նպատակ ունենալով աջակցել ոստիկանությանը հավաքներին նախապատրաստվելու և դրանց ընթացքում ոստիկանական ծառայություն իրականացնելու հարցերում՝ ոստիկանության հրամանատարների համար կազմակերպելով նախնական, ինչպես նաև կանոնավոր դասընթացներ ծառայության ընթացքում:

Մաս I

ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ, ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ ԵՎ ԿԱՆՈՆՆԵՐ

ԳԼՈՒԽ 1. ԽԱՂԱՂ ՀԱՎԱՔՆԵՐԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Խաղաղ հավաքների ազատությունը մարդու հիմնարար իրավունք է և համարվում է ժողովրդավարական հասարակության անկյունաքարերից մեկը: Այս բաժնում ուրվագծված են մի շարք հիմնական սկզբունքներ, որոնք ընկած են այդ իրավունքի հիմքում, և ընդգծված են ոստիկանության որոշ առանցքային պարտականություններ, որոնք վերաբերում են հանրային հավաքների ընթացքում վերջինիս իրականացրած ծառայությանը:

Խաղաղ հավաքների ազատության իրավունքն ամրագրված է մարդու իրավունքների վերաբերյալ բոլոր կարևոր միջազգային գործիքներում, ներառյալ՝

- Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 20-րդ հոդվածը (1948թ.),
- Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 21-րդ հոդվածը (1966թ.),
- Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 11-րդ հոդվածը (1950թ.) և
- Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի 15-րդ հոդվածը (1989թ.):

ԵԱՀԿ-ի Կոպենհագենի փաստաթղթում (1990թ.) ԵԱՀԿ մասնակից պետությունները պարտավորություն են ստանձնել հարգել խաղաղ հավաքների և ցույցերի իրավունքը:

Խաղաղ հավաքի իրավունքը վերապահված է բոլոր անհատներին և խմբերին, չգրանցված միավորումներին, իրավաբանական անձանց և կորպորատիվ մարմիններին: Ռասայի, մաշկի գույնի, սեռի, լեզվի, կրոնի, քաղաքական կամ այլ հայացքների, ազգային կամ սոցիալական ծագման, գույքային, ծագման կամ այլ կարգավիճակի հիմքով խտրականության ցանկացած դրսևորում արգելված է: Վերոնշյալ հիմքերից որևէ մեկով խտրականության դրսևորումը, որը ծառայում է մարդկանց խաղաղ հավաքի իրավունքը սահմանափակելու նպատակներին, կհամարվի միջազգային իրավունքով ամրագրված մարդու իրավունքների խախտում:

Թեպետ հավաքվելու իրավունքի ընդհանուր սկզբունքն ամրագրված է միջազգային գործիքներում, ազգային սահմանադրությունը սովորաբար վերահաստատում, իսկ ներպետական օրենսդրությունը և ենթաօրենսդրական ակտերը պարզաբանում են այն՝ ապահովելով հավաքների իրավունքի իրականացմանն առնչվող առանձին ընթացակարգերի մանրամասները:

«Խաղաղ հավաքների ազատության ուղեցույցներում» ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը և Վենետիկի հանձնաժողովը հավաքի սահմանման[1] (այսուհետ՝ *Ուղեցույցներ*) մեջ ընդգծում

---

1 «Խաղաղ հավաքների ազատության ուղեցույցներ», 2րդ հրատարակություն (Վարշավա. ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ/Վենետիկի հանձնաժողով, 2010թ.), <http://www.osce.org/odihr/73405>.

են, որ հավաքները միջոցառումներ են, որոնց նպատակն է ինչ-որ բանի մասին ուղերձ փոխանցել ինչ-որ մեկին: Թեպետ հավաքները սովորաբար ժամանակավոր են իրենց բնույթով, դրանք կարող են նաև տևական ժամանակ ձգվել՝ ամիսներ շարունակ գործող կիսամշտական կառույցներով: Ոստիկանությունն աջակցում է բոլոր տեսակի խաղաղ հավաքներին՝ անկախ դրանց ստատիկ կամ տեղաշարժվող բնույթից և այն հանգամանքից, որ հավաքների որոշ ձևեր կարող են ակնհայտ խնդիրներ առաջացնել նորմատիվ իրավական կարգավորման հետ կապված:

Հավաքները կարող են ծառայել զանազան նպատակների, որոնց շարքում են տոնախմբությունը, հիշատակությունը և բողոքը: Խաղաղ հավաքի իրավունքի իրականացումը հավաքականորեն ուղերձ փոխանցելու կամ կարծիք հայտնելու միջոց է, ինչը ենթադրում է նաև չհամընկնող, քննադատական, արմատական և ժողովրդականություն չվայելող կամ փոքրամասնության կարծիքների արտահայտում: Արմատական և փոքրամասնական կարծիքների արտահայտումը կարող է ինչ-որ չափով վիրավորական լինել համայնքի մյուս անդամների համար, սակայն հարկ է պաշտպանել այդ իրավունքը և աջակցել դրա իրագործմանն այնքան ժամանակ, քանի դեռ գործողությունները կրում են խաղաղ բնույթ:

Բազմաթիվ հավաքներ որոշ չափով խաթարում են կյանքի բնականոն ընթացքը՝ փակելով ճանապարհներն ու մայրուղիները կամ ազդելով երթևեկության, հետիոտների և գործարար համայնքի վրա: Հիմնարար ազատությունների իրականացման հետևանքով առաջացած նման անհարմարությունների հարկ է վերաբերվել որոշակի հանդուրժողականությամբ: Հարկ է գիտակցել, որ հանրային տարածքները նախատեսված են մարդկանց հավաքների համար նույնքան, որքան գործունեության այլ ձևերի համար, հետևաբար՝ հարկ է նպաստել հավաքների իրավունքի իրացմանը:

Խաղաղ հավաքի իրավունքը մշակութային և սոցիալական նորմերն ու արժեքները պահպանելու և զարգացնելու, ինչպես նաև դրանք քննադատելու գործընթացների կարևոր տարր է: Այն կարևոր է փոքրամասնությունների ինքնությունը պահպանելու և արտահայտելու, կառավարությանը պատասխանատվության ենթարկելու համար: Խաղաղ հավաքների ազատության պաշտպանությունը վճռորոշ է հանդուրժող և բազմակարծիք հասարակություն ստեղծելու համար, որտեղ տարբեր խմբեր կարող են խաղաղ համագոյակցել:

Մարդու իրավունքների միջազգային սկզբունքները հստակ սահմանում են, որ պետությունը և դրա ներկայացուցիչները կրում են մարդու բոլոր իրավունքները հարգելու և պաշտպանելու պարտավորություն և պատասխանատվություն: Այդ թվում՝

- Մարդկանց իրավունքները սահմանափակելու նպատակով չմիջամտելու պարտավորություն («բացասական» պարտավորություն) և

- Մարդկանց իրավունքները պաշտպանելու և դրանց իրացմանն աջակցելու նպատակով անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու պարտավորություն («դրական» պարտավորություն):

Հավաքների ազատության իրավունքի իրացման դեպքում պաշտպանելու և աջակցելու հիմնական պատասխանատվությունը կրում է ոստիկանությունը՝ որպես հասարակական կարգի պահպանության ոլորտի հիմնական լիազոր մարմին: Սա ենթադրում է սադրիչ և վիրավորական դրսևորումներով, նաև կյանքի բնականոն ընթացքը որոշ չափով խաթարող և, որպես հետևանք, մասնակից չհանդիսացողների համար անհարմարություններ առաջացնող խաղաղ հավաքները պաշտպանելու պատասխանատվությունը: Երբ բողոքի խաղաղ ակցիան միջամտում է այլոց իրավունքներին և ազատություններին, ոստիկանությունն է պարտավոր հավասարակշռել այլոց իրավունքների հանդեպ հարգանքը և հավաքների ազատության իրավունքը:

Հավաքվելու իրավունքը խաղաղ հավաքի իրավունքն է: Գոյություն չունի հավաքի իրավունքն իրագործելու ընթացքում բռնի գործողությունների դիմելու իրավունք: Եթե ինչ-որ անհատ հավաքին մասնակցելու ընթացքում դիմում է բռնության, ապա տվյալ անհատն այլևս չի օգտվում մարդու պաշտպանված իրավունքից: Սակայն առանձին անհատների բռնի գործողությունները պարտադիր չէ, որ ազդեցություն ունենան այն անձանց հավաքվելու իրավունքի վրա, ովքեր պահպանում են խաղաղ վարքագիծ:

Մի կողմից՝ խաղաղ հավաքի իրավունքը կարող է ներառել վիրավորական գործողություններ կամ կոչեր, մյուս կողմից՝ պետությունը կարող է օրինական կարգով անհրաժեշտ և համաչափ սահմանափակումներ կիրառել կամ արգելել այն հավաքները կամ գործողությունները, որոնց նպատակն է ահաբեկել, հետապնդել կամ սպառնալ ուրիշներին:

Հարկ է նշել, որ հավաքի կազմակերպչի կամ որոշ մասնակիցների կողմից հավաքներին ներկայացվող օրինական պահանջները չբավարարելը չի ազատում ոստիկանությանը խաղաղ բնույթը պահպանող հավաքը պաշտպանելու և դրան աջակցելու պարտավորությունից: Հավաքներին ներկայացվող օրինական պահանջները չբավարարելու ցանկացած դեպք կարելի է կարգավորել՝ իրավախախտ անհատների նկատմամբ համաչափ պատժամիջոցներ կիրառելով:

Հավաքների տեսակները

Գոյություն ունեն հանրային հավաքների բազմազան ձևեր, որոնք պաշտպանվում են խաղաղ հավաքի իրավունքով: Դրանց թվում են հանդիպումները, հանրահավաքները, պիկետները, ցույցերը, երթերը, թափորները, շքերթները և ֆլեշմոբերը:

Խաղաղ հավաք. Հավաքը համարվում է խաղաղ, եթե դրա կազմակերպիչները հայտարարել են խաղաղ մտադրությունների մասին, իսկ մասնակիցների վարքագիծը ոչ բռնի է: Խաղաղ մտադրությունը և վարքագիծը ենթադրվում են, եթե չկան համոզիչ և ակներև ապացույցներ, որ տվյալ միջոցառման կազմակերպիչները կամ մասնակիցները մտադիր են կիրառել, քարոզել կամ հրահրել անմիջական բռնություն: «Խաղաղ» եզրույթի մեկնաբանությունը պետք է ընդգրկի այնպիսի վարքի դրսևորումը, որը կարող է լինել վրդովվեցնող կամ վիրավորական, և նույնիսկ այնպիսի վարքի դրսևորում, որը կարող է ժամանակավորապես խանգարել, խոչընդոտել կամ խափանել երրորդ անձանց գործունեությունը:[2] Հավաքը պետք է խաղաղ համարվի և վայելի իշխանությունների աջակցությունը նույնիսկ այն դեպքերում, երբ կազմակերպիչները չեն կատարել օրենքի բոլոր պահանջները: Պահանջները չկատարելը չպետք է հանդիսանա հավաքին խոչընդոտելու, այն ընդհատելու կամ արգելելու պատճառ:

Պաշտպանված չեն համարվում այն հավաքները, որոնք, խախտելով գործող օրենսդրությունը, հրահրում են ատելություն, բռնություն կամ պատերազմ, դիտավորությամբ սահմանափակում կամ ժխտում են այլ անձանց իրավունքները կամ նպատակ ունեն ահաբեկել, հետապնդել կամ սպառնալ ուրիշներին: Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 20-րդ հոդվածը սահմանում է, որ «պատերազմի ցանկացած քարոզչություն պետք է արգելվի օրենքով, և ազգային, ռասայական կամ կրոնական ատելության օգտին խտրականության, թշնամանքի կամ բռնության սադրանքի բնույթ կրող ցանկացած ելույթ պետք է արգելվի օրենքով»:[3]

Իշխանությունները և ոստիկանությունը պետք է հիշեն, որ հավաքների իրավունքն անհատական իրավունք է, և անհատի կամ փոքրաթիվ մարդկանց ագրեսիվ կամ բռնի գործողությունները չեն վերացնում այն անձանց իրավունքը, ովքեր շարունակում են գործել խաղաղ կերպով: Երբ խաղաղ հավաքի գործողություններն ազդում են այլ անձանց իրավունքների և ազատությունների վրա, իշխանությունները պետք է լուծեն խնդիրը՝ հավասարակշռելով խնդրո առարկա բոլոր իրավունքները և ազատությունները: ԵԱՀԿ մասնակից մի շարք պետություններում նման լիազորությունները վերապահված են ոստիկանությանը, մյուսներում՝ խնդիրները կարգավորում են տեղական ինքնակառավարման մարմինները կամ դատական իշխանությունը:

---

2 *Նույն տեղում:*

3 «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր» (ՔՔԻՄԴ), (Նյու Յորք, ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեա, 1966թ.), Բանաձև 2200Ա (XXI), <http://www.ohchr.org/en/professionalinterest/pages/ccpr.aspx>

Ինքնաբուխ հավաք. Հավաք, որը տեղի է ունենում ի պատասխան ինչ-որ միջադեպի կամ իրադարձության. սա անհնար է դարձնում օրենքի՝ նախնական իրազեկման ֆորմալ պահանջի կատարումը, և/կամ չունի պաշտոնական կազմակերպիչ: Նման հավաքները հաճախ ժամանակային առումով կապված են դրանք խթանող իրադարձության հետ, և այսպիսի հավաքների անցկացման հնարավորությունը կարևոր է, քանի որ իրազեկման գործընթացով պարտադրված ուշացումը թուլացնում կամ չեղարկում է ուղերձի արդյունավետությունը:

Թեպետ «ինքնաբուխ» բառը չի արգելում, որ հավաքն ունենա կազմակերպիչ՝ ինքնաբուխ հավաքները կարող են նաև ընդգրկել այնպիսի հավաքույթներ, որոնք չունեն ակնհայտ կազմակերպիչ: Նման հավաքներ կարող են տեղի ունենալ, երբ մի խումբ մարդիկ հավաքվում են որոշակի վայրում առանց նախնական հայտարարության կամ հրավերի: Հաճախ դրանք ուշագրավ իրադարձության (օրինակ՝ օտարերկրյա պետության ղեկավարի այցի) մասին համընդհանուր իրազեկության կամ լրատվամիջոցներով և, այժմ ավելի ու ավելի հաճախ, սոցիալական ցանցերով տարածված տեղեկությունների արդյունք են: Մասնակիցների իրական թիվը կարող է ուռճանալ այն անցորդների պատճառով, որոնք որոշում են միանալ հավաքին: Թեպետ հնարավոր է նաև, որ հավաքվելուն զուգահեռ ակնթարթային հաղորդակցության զանազան ձևերով (հեռախոս, տեքստային հաղորդագրություն, բանավոր խոսք, համացանց, սոցիալական ցանցեր և այլն) տեղի ունենա լրացուցիչ մոբիլիզացիա: Ինքնին նման հաղորդակցությունը չպետք է մեկնաբանվի որպես նախապես կազմակերպված լինելու ապացույց: Երբ միայնակ ցուցարարին միանում է մեկ ուրիշը կամ ուրիշները, ապա նման դեպքին պետք է վերաբերվել ինչպես ինքնաբուխ հավաքի: Ինքնաբուխ հավաքին պետք է տրվի պաշտպանության նույն մակարդակը, որից օգտվում են նախնական իրազեկումով հավաքները՝ պայմանով, որ այն համապատասխանում է «խաղաղ հավաքի» սահմանմանը:

Համընթաց հավաք. Երբ նույն վայրի և ժամի համար ներկայացվում է երկու կամ ավելի չփոխկապակցված ցույցերի իրազեկում, ապա հնարավորության սահմաններում երկուսն էլ ստանում են աջակցություն: Հավաքի արգելումը միայն այն հիմքով, որ այն տեղի է ունենալու նույն վայրում և ժամին, ինչ մեկ այլ հավաք, ամենայն հավանականությամբ անհամաչափ պատասխան է, եթե երկու հավաքն էլ հնարավոր է խելամիտ կերպով տեղավորել: Խտրականությունը բացառելու սկզբունքը պահանջում է նաև, որ համադրելի հանգամանքներում գտնվող հավաքների նկատմամբ չկիրառվեն տարբերակված սահմանափակումներ: Սա օրինակ է նրա, թե ինչպես ոստիկանության և կազմակերպիչների միջև երկխոսությունը կարող է նվազեցնել ռիսկերը և խնդիրները լուծել պլանավորման վաղ փուլում:

Եթե երկու հավաքների միաժամանակ անցկացումը հնարավոր չէ, ապա այն ցույցը, որի մասին ստացված իրազեկումն առաջինն էր,պետք է տեղի ունենա ըստ ծրագրածի, իսկ մյուս հավաքը պետք է անցկացվի կազմակերպիչներին հարմար մոտ վայրում կամ այլ ժամի: Հավաքը այլ վայր տեղափոխելու կամ հետաձգելու որոշում կայացնելիս հարկ է նկատի առնել բազմաթիվ գործոններ՝ հավաքների մասնակիցների թիվը, ձայնի ուժեղացման համակարգի և տրանսպորտային միջոցների օգտագործումը և այլն: Բացի այդ, բոլոր կողմերի անվտանգությունը և հավաքի նրանց իրավունքն ապահովելու համար հարկ է ուսումնասիրել՝ արդյո՞ք մրցակից խմբերն ունեցել են բռնի ընդհարումների նախապատմություն, թե՞ ոչ:

Հակընդդեմ ցույց. Համընթաց ցույցի հատուկ ձև, որի միջոցով մասնակիցները ցանկանում են արտահայտել իրենց անհամաձայնությունը մեկ այլ հավաքում արտահայտած տեսակետների հետ: Հակընդդեմ ցույցի դեպքում շեշտը դրվում է պետության՝ երկու միջոցառումներն էլ պաշտպանելու և դրանց աջակցելու պարտավորության վրա: Պետությունը պարտավոր է համարժեք ոստիկանական ռեսուրսներ հատկացնել միմյանցից տեսանելի և լսելի հեռավորության վրա ընթացող համաժամանակյա ցույցերին հնարավորինս աջակցելու համար:

Հարկ է նշել սակայն, որ հակընդդեմ ցույցի իրավունքն արգելք չի հանդիսանում մյուսների հավաքի իրավունքի համար: Որոշ հանգամանքներում, հավաքը պաշտպանելու նպատակով, իշխանությունները կարող են օրինական կերպով արգելել հակընդդեմ ցույցի անցկացումը այն հավաքից տեսանելի և լսելի հեռավորության վրա, որի դեմ բողոքում են դրա մասնակիցները:

Բռնություն և հավաքներ

Հավաքվելու իրավունքը խաղաղ հավաքի իրավունք է: Սակայն հարկ է վերահաստատել, որ փոքրաթիվ անձանց բռնի գործողությունները պետք է տարանջատվեն մյուսների դրսևորած խաղաղ վարքից և չպետք է զրկեն խաղաղ մասնակիցներին հավաքը շարունակելու իրավունքից:

Եթե հավաքի ընթացքում որոշ անհատներ կամ մարդկանց փոքրաթիվ խմբեր դիմում են ֆիզիկական բռնության գործողությունների, ապա ոստիկանությունը պարտավոր է ապահովել, որ իր արձագանքը լինի համաչափ և ուղղված լինի բռնի վարքագիծ դրսևորածների, ոչ թե ընդհանրապես հավաքի բոլոր մասնակիցների դեմ: Այս մոտեցումը չի կորցնում իր վավերությունը, անկախ այն հանգամանքից, թե բռնությունն ուղղված է ոստիկանության, անհատների, գույքի, հավաքի մասնակիցների կամ ընդդիմություն համարվողների դեմ,:

Ոստիկանությունը պետք է մշտապես գիտակցի, որ հավաքի մասնակիցների դեմ ուժի կիրառման ցանկացած դեպք կարող է առաջացնել մասնակիցների զայրույթը կամ ագրեսիվ արձագանքը, ինչը միայն ավելի կսրի իրավիճակը: Այս պատճառով էլ ոստիկանությունը պետք է պարզ տեղեկացնի իր մտադրության և պլանավորած գործողության մասին: Հնարավորության դեպքում ուժի կիրառմանը պետք է նախորդի համարժեք նախազգուշացումը:

Բոլոր մասնակիցներին խաղաղ հավաքի իրավունքի իրացումը երաշխավորելու համար ոստիկանությունը պետք է մշտական զգոնություն ցուցաբերի գենդերային, տարիքային, հաշմանդամության, էթնիկ, դավանանքի, ազգային պատկանելիության կամ սեռական կողմնորոշման հողի վրա հավաքի մասնակից որոշակի խմբերի ներկայացուցիրների դեմ հնարավոր ագրեսիվ գործողությունների հարցում:

Հավաքների ազատության սահմանափակումը

Խաղաղ հավաքների ազատության իրավունքը պաշտպանելու և դրան աջակցելու պետության պարտավորությունը չի ենթադրում, որ խաղաղ հավաքները չեն կարող սահմանափակվել կամ օրինական միջոցներով խելամտորեն կարգավորվել ազգային կամ հասարակական անվտանգության, հասարակական կարգի, բնակչության առողջության կամ այլոց իրավունքների ու ազատությունների պաշտպանության նկատառումներով: Սակայն նման սահմանափակումները պետք է լինեն անհրաժեշտ և համաչափ: Այլ կերպ ասած՝ սահմանափակումները պետք է ճշգրիտ կերպով հասցեագրեն հրատապ սոցիալական կարիքը: «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի» (ՔՔԻՄԴ) 21-րդ հոդվածն ամրագրում է հավաքը սահմանելու հիմքերը.

«Այդ իրավունքից օգտվելը ենթակա չէ ոչ մի սահմանափակման, բացի նրանցից, որոնք դրվում են օրենքին համապատասխան և որոնք անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակության մեջ՝ ի շահ պետական կամ հասարակական անվտանգության, հասարակական կարգի, բնակչության առողջության ու բարոյականության պահպանության կամ մյուս անձանց իրավունքների ու ազատությունների պաշտպանության»:[4]

Սահմանափակումներ կարող են կիրառվել նախքան հավաքը, հավաքի ընթացքում կամ էլ և՛ մինչև հավաքը, և՛ դրա ընթացքում: Որոշ պետություններում հավաքից առաջ սահմանափակումներ կիրառելու լիազորությունը վերապահված է

4 *Նույն տեղում:*

ոստիկանությանը, իսկ այլ երկրներում՝ տեղական իշխանություններին կամ դատարաններին: ԵԱՀԿ տարածաշրջանի բոլոր իրավապահ համակարգերում ոստիկանությունն իրավասու է հավաքի ընթացքում խելամիտ սահմանափակումներ կիրառել, սակայն ժողովրդավարական հասարակությունում ցանկացած սահմանափակում պետք է միշտ լինի օրինական, անհրաժեշտ և համաչափ:

Երբ դիտարկվում է հավաքի սահմանափակումներ կիրառելու հարցը, Ուղեցույցները սահմանում են հետևյալ հիմնական սկզբունքները, որոնք պարտավոր են հաշվի առնել ոստիկանության ծառայությունները:[5]

Կանխավարկած հավաքների օգտին. Որպես հիմնարար իրավունք՝ խաղաղ հավաքների ազատությունը հարկ է հնարավորինս իրականացնել առանց կարգավորման: Այն, ինչ բացահայտ արգելված չէ օրենքով, պետք է համարվի թույլատրված, իսկ հավաք անցկացնելու ցանկություն ունեցողներին պետք չէ պարտադրել դրա թույլտվությունը ստանալ: Հարկ է օրենքով հստակ և բացահայտ կանխավարկած սահմանել այս ազատության օգտին:

Խաղաղ հավաքներին աջակցելու և դրանք պաշտպանելու դրական պարտավորությունը. Խաղաղ հավաքների ազատության գործնական կիրառումը և անհարկի բյուրոկրատական կարգավորումներից այդ ազատության զերծ լինելը երաշխավորելու նպատակով՝ պետությունը պետք է ձևավորի համարժեք մեխանիզմներ և ընթացակարգեր: Մասնավորապես՝ պետությունը պետք է մշտապես ձգտի կազմակերպիչների նախընտրած ժամին, վայրում և եղանակով աջակցել հանրային հավաքներին և պաշտպանել դրանք, ինչպես նաև ապահովի, որ չխոչընդոտվեն տեղեկատվության տարածման այն աշխատանքները, որոնք հանրահռչակում են գալիք հավաքները:

Օրինականություն. Սահմանափակումները պետք է ունենան օրենքում ամրագրված ֆորմալ հիմք և համապատասխանեն մարդու իրավունքների միջազգային գործիքներին: Լավ մշակված օրենսդրությունը կենսական նշանակություն ունի իշխանություններին վերապահված հայեցողությունը սահմանելու համար: Օրենքները պետք է համահունչ լինեն մարդու իրավունքների միջազգային չափանիշներին և լինեն բավականին հստակ՝ անհատին հնարավորություն տալով գնահատել, թե արդյոք իր վարքը կխախտի՞ օրենքը, և ինչպիսի՞ հետևանքներ կառաջանան խախտման դեպքում: Ավելին, համապատասխան իշխանությունները պետք է ապահովեն, որ միջոցառման ընթացքում հարկադրված սահմանափակումները լիովին համապատասխանեն օրենքին և համահունչ լինեն ձևավորված դատական պրակտիկային: Վերջապես,

5 «Խաղաղ հավաքների ազատության ուղեցույցներ»

արգելվում է հավաքից հետո կիրառել պատժամիջոցներ և տուգանքներ, որոնք նախատեսված չեն օրենքով:

Համաչափություն. Հավաքի ժամի, վայրի կամ անցկացման եղանակի նկատմամբ կիրառվող սահմանափակումները պետք է համաչափ լինեն: Իշխանությունները պետք է մշտապես նախապատվություն տան օրինական նպատակին հասնելու համար ընտրված միջամտության նվազագույն միջոցներին: Համաչափության սկզբունքը իշխանություններից պահանջում է չհարկադրել սահմանափակումներ, որոնք հիմնովին կփոխեն միջոցառման բնույթը (օրինակ՝ տեղափոխել հավաքը քաղաքի կենտրոնից արվարձան կամ արգելել հավաքը իրականացնել թիրախային լսարանի համար տեսանելի և լսելի հեռավորության վրա):

Անհրաժեշտություն. Ժողովրդավարական հասարակությունում հավաքների ազատության իրավունքի իրացման սահմանափակումները պետք է անհրաժեշտաբար բխեն ազգային կամ հասարակական անվտանգության, հասարակական կարգի, բնակչության առողջության կամ բարոյականության պահպանման կամ այլոց իրավունքների ու ազատությունների պաշտպանության շահերից: Անհրաժեշտության չափանիշի բավարարման համար հարկ է ապացուցել հավաքների ազատությունն առանձին հանգամանքներում սահմանափակելու «հրատապ սոցիալական կարիքը»:

Իրազեկում. Մարդու իրավունքների ոլորտում միջազգային իրավունքի համաձայն ներպետական օրենսդրությամբ հավաքի մասին նախնական իրազեկման պահանջ սահմանելը պարտադիր չէ: Իրականում, բաց հասարակությունում հավաքների բազմաթիվ ձևերի համար պետական որևէ կարգավորում չի պահանջվում: Նախնական իրազեկումը, հետևաբար, պետք է պահանջվի միայն այն դեպքերում, երբ պետությունը պարտավոր է ձեռնարկել հավաքների ազատության ապահովման և ազգային կամ հասարակական անվտանգության, հասարակական կարգի, բնակչության առողջության կամ բարոյականության պահպանման կամ այլոց իրավունքների ու ազատությունների պաշտպանության համար անհրաժեշտ միջոցներ: Օրենքում ամրագրված ցանկացած նմանատիպ դրույթ պետք է պահանջի հավաքի կազմակերպիչներից ներկայացնել մտադրության մասին ծանուցում, ոչ թե թույլտվության հայտ:

Իրազեկման գործընթացը չպետք է լինի բարդ կամ բյուրոկրատական, իսկ իրազեկման ժամկետը՝ անհարկի երկար: Փոխարենը, իրազեկման ժամկետը սահմանվում է այնպես, որ՝

ա. համապատասխան մարմինները բավարար ժամանակ ունենան անհրաժեշտ պլանները մշակելու և իրենց դրական պարտավորությունների կատարմանը նախապատրաստվելու համար, և

բ. կազմակերպիչները բավարար ժամանակ ունենան հարկադրված սահմանափակումների հետ անհամաձայնության դեպքում դրանք բողոքարկելու և դատարանի որոշում ստանալու համար:

Եթե իշխանությունները կարճ ժամկետում չեն առարկում իրազեկմանը, ապա հավաքի կազմակերպիչները պետք է կարողանան ենթադրել, որ իրազեկման մեջ ներկայացված պայմաններով և առանց սահմանափակումների կարող են իրականացնել իրենց առաջարկած գործողությունները:

Արտահայտվելու ազատությունը երաշխավորելու համար ընդհանուր առմամբ սահմանափակումներ չպետք է կիրառվեն այն ուղերձների նկատմամբ, որոնք փորձում է հաղորդել տվյալ հավաքը:[6] Ոստիկանությունը կարող է ստիպված լինել արձագանքել խտրականություն, թշնամանք կամ բռնություն հրահրող խոսքի առանձին դեպքերին: Սակայն ոստիկանության աշխատակիցները պետք է տարանջատեն նմանատիպ խոսք օգտագործողներին հավաքի մյուս մասնակիցներից, ում խաղաղ հավաքների իրավունքը չի կարող անհարկի սահմանափակվել: Միաժամանակ, խոշոր օպերացիայի կամ առանձնապես վիճահարույց միջոցառումների ընթացքում գործողություն կատարելու որոշումը պետք է անցնի հրամանատարական շղթայով և պետք է լինեն նախապես մշակված համապատասխան պլաններ՝ առանձին ոստիկանների անհատական գործողությունները բացառելու համար: Ոստիկանությունը պետք է մշակի նման իրավիճակներին արձագանքելու պլան և, մասնավորապես, իմանա՝ ո՞վ է իրավասու կայացնել որոշումներ միջամտության մասին և ո՞ր տեքստերը կամ կարգախոսներն են պահանջելու ոստիկանական արձագանքում: Որոշ երկրներում սահմանների որոշարկման աշխատանքներում ներգրավվում է դատախազությունը:

Այլ անձանց իրավունքներին և ազատություններին անհարկի միջամտությունը կանխելու նպատակով, սակայն, կարող են կարգավորվել հանրային առանձին հավաքների անցկացման ժամը, վայրը և եղանակը: Դա վկայում է մասնակիցների՝ իրենց տեսակետները հավաքի միջոցով արտահայտելու իրավունքների և մասնակից չհանդիսացողների իրավունքներն անհարկի չսահմանափակելու միջև պատշաճ հավասարակշռություն ապահովելու անհրաժեշտության մասին:

Եթե գոյություն ունեն հավաքի անցկացման սահմանափակումներ կիրառելու օրինական պատճառներ, իշխանությունները պարտավոր են երաշխավորել, որ այդ սահմանափակումները լինեն անհրաժեշտ նվազագույն չափով, իսկ կազմակերպիչներին առաջարկվի նրանց համար ընդունելի և հարմար այլընտրանքային ժամ կամ վայր: Այլընտրանքը պետք է լինի այնպիսինը, որ

6 «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր», Հոդված 19

հավաքի փոխանցելիք ուղերձը հնարավոր լինի արդյունավետ կերպով հաղորդել նրանց, ում այն ուղղված է: Այլ կերպ ասած՝ հավաքը լինի թիրախային լսարանի տեսանելիության և լսելիության դաշտում:

Եթե հավաքին հակադրվում է հակընդդեմ ցույց, որը փորձում է սահմանափակել խաղաղ հավաքվելու մարդկանց իրավունքները, ապա հակընդդեմ ցույցն այլևս պաշտպանված չէ մարդու իրավունքների ոլորտի միջազգային իրավունքով:

Հավաքն արգելելը

Հավաքն արգելվում է միայն բացառիկ հանգամանքներում: Այդ թվում՝ այնպիսի իրավիճակներում, երբ առկա է հանցագործության կատարման կամ հասարակական անկարգությունների նշանակալի և իրական սպառնալիք, առկա է անմիջական սպառնալիք ազգային անվտանգությանը կամ հավաքների նպատակը ատելության կամ բռնության հրահրումն է, այլ անձանց վախեցնելը կամ ահաբեկելը, կամ այլ անձանց՝ իրենց օրինական իրավունքներից օգտվելու իրավունքից դիտավորությամբ զրկելը:

Այն փաստը, որ հավաքը, ամենայն հավանականությամբ, կհանդիպի հակընդդեմ բռնի բողոքի կամ նույնիսկ կենթարկվի հակառակ կարծիք ունեցող անձանց ուղղակի հարձակմանը, չի կարող սկզբունքորեն հանգեցնել խաղաղ հավաքի արգելմանը: Այս դեպքում խաղաղ հավաքի մասնակիցների պաշտպանությունը հակընդդեմ բողոքի ակցիայի մասնակիցների հարձակումներից կամ բռնությունից ոստիկանության պարտականությունն է:

Կոնկրետ վայրում կամ որոշակի ժամկետով բոլոր հավաքների ընդհանուր արգելքը կարող է համարվել խաղաղ հավաքների իրավունքի ոչ համաչափ սահմանափակում: Հարկ է ապահովել հավաքն արգելելու կամ սահմանափակելու որոշումը բողոքարկելու իրավունք:

Ծախսեր

Պետությունը պարտավոր է ամբողջ ծավալով ֆինանսավորել համարժեք անվտանգություն և հասարակական կարգ ապահովելու (այդ թվում՝ ոստիկանական ծառայության իրականացման և երթևեկության կանոնակարգման) ծախսերը: Ոչ առևտրային հանրային հավաքների կազմակերպիչներից չպետք է պահանջեն միջոցառման համար քաղաքացիական պատասխանատվության ապահովագրություն ձեռք բերել:

ԳԼՈՒԽ 2. ՀԱՎԱՔՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Մարդու իրավունքների վրա հիմնված մոտեցումը պետք է լինի ժամանակակից ոստիկանական գործունեության բոլոր ձևերի, այդ թվում՝ հանրային հավաքների ընթացքում ոստիկանության գործունեության հիմքը: Այս դեպքում հիմքում ընկած է այն գիտակցությունը, որ ոստիկանությունը պարտավոր է ողջամիտ և պատշաճ միջոցներ ձեռնարկել, որոնք հնարավորություն կտան մարդկանց օգտվել իրենց իրավունքներից, ինչպես նաև անհարկի չմիջամտել այդ իրավունքների իրականացման ընթացքին և մշտապես դրսևորել անաչառ վերաբերմունք:

Ոստիկանության գործունեության ժողովրդավարական հիմքերը

ԵԱՀԿ «Ոստիկանական գործունեության ժողովրդավարական հիմքերի ուղեցույցը»[7] սահմանում է մի շարք հիմնարար սկզբունքներ, որոնք պետք է լինեն ոստիկանական գործունեության բոլոր ձևերի հիմքում և որոնք ձևավորում են հավաքների ժամանակ ոստիկանական գործունեության հիմնարար շրջանակը՝

Հետամուտ լինել ոստիկանության ժողովրդավարական գործունեության նպատակների իրականացմանը. Ոստիկանությունը պետական իշխանության ամենատեսանելի դրսևորումն է, որին վերապահված են հասարակական կարգն ու օրինականությունը պահպանելու, հիմնարար ազատություններն ու իրավունքները հարգելու և պաշտպանելու, հանցագործությունները նախականխելու և հանցավորության դեմ պայքարելու, հանրությանն օժանդակելու և ծառայություններ մատուցելու հիմնական պարտականությունները:

Ապահովել իրավունքի գերակայությունը. Ոստիկանությունը պարտավոր է գործել ներպետական օրենսդրությանը և ԵԱՀԿ մասնակից պետություններում իրավապահ մարմինների գործունեության համար ընդունված միջազգային չափանիշներին համահունչ և գործնականում ցուցադրել հավատարմությունը իրավունքի գերակայության սկզբունքին:

Ոստիկանական էթիկա և մարդու իրավունքներ. Հասարակության վստահությունն արդարացնելու համար ոստիկանությունը պետք է հավատարիմ մնա մասնագիտական վարքականոնին և ցուցաբերի արհեստավարժություն ու

---

7 «Ոստիկանական գործունեության ժողովրդավարական հիմքերի ուղեցույց» (Վիեննա. Ոստիկանության հարցերով ԵԱՀԿ ավագ խորհրդական, 2008թ.), ՈՌՀԲ-ի հրապարակումների շարք, հատոր 1, 2-րդ հրատարակություն, <http://www.osce.org/spmu/23804>

բարեվարքություն: Կյանքի պաշտպանությունը և պահպանումը պետք է լինի ոստիկանության առաջնահերթ խնդիրը:

Ոստիկանության հաշվետվողականությունը և թափանցիկությունը. Ոստիկանական գործունեության ժողովրդավարական սկզբունքները պահանջում են, որ ոստիկանությունը հաշվետու լինի քաղաքացիներին, նրանց ներկայացուցիչներին, պետությանը և օրենքին, ինչպես նաև գիտակցի, որ հաշվետու է վերջիններիս առջև: Ոստիկանության գործողությունները, այդ թվում՝ ոստիկանության առանձին աշխատակիցների վարքը, ոստիկանական օպերացիաների ռազմավարությունները, պաշտոնի նշանակման կարգերը և բյուջետավորումը պետք է բաց լինեն վերահսկողական զանազան հաստատությունների քննության առաջ:

Ավելին, ժողովրդավարական ոստիկանական գործունեության կարևոր հատկանիշերից է այն ըմբռնումը, որ այդ գործունեությունը պետք է արժանանա մարդկանց հավանությանը: Հասարակության աջակցությանն արժանանալու նախապայմաններից են ոստիկանության օպերացիաների թափանցիկությունը և այն հասարակության հետ հաղորդակցության ու փոխըմբռնման մշակույթի ձևավորումը, որին ծառայում ու պաշտպանում է ոստիկանությունը:

Ոստիկանության կառուցվածքը և կառավարման խնդիրները. Պետությունները պարտավոր են ստեղծել կառուցվածքային և կառավարման միջավայր, որը ոստիկանությանը հնարավորություն է տալիս արդյունավետ և ներգործուն կերպով բավարարել իրավունքի գերակայության, ներպետական օրենսդրության և միջազգային իրավունքի պահանջները, ինչպես նաև մարդու իրավունքների ընդունված չափանիշները: Այստեղ ներառվում են հրամանատարական շղթան, վերահսկողության ընթացակարգերը, ոստիկանության կազմը, ոստիկանության աշխատակիցների իրավունքները, համարժեք ռեսուրսների ու վերապատրաստման ապահովումը:

Այս հիմնական սկզբունքները կիրառելի են ժողովրդավարական ոստիկանական գործունեության բոլոր ձևերի և, մասնավորապես, հանրային հավաքների ընթացքում ոստիկանության աշխատանքի նկատմամբ, որը կարող է լինել բարդ և դժվարին խնդիր: Հավաքները կարող են էապես տարբերվել իրենց մասշտաբով, բնույթով, մասնակիցների թվով և առաջացրած հնարավոր տարաձայնությունների մակարդակներով: Հավաքները կարող են խանգարել կյանքի ամենօրյա ընթացքին և, այդպիսով, բացասաբար ազդել ուրիշների՝ սեփական իրավունքներից օգտվելու կարողության վրա: Ոստիկանությունը, հետևաբար, պետք է հավասարակշռի տարբեր խմբերի և անհատների իրարամերժ պահանջները:

Մասնակիցների վարքի մասին իմացությունը

Մասնակիցների վարքի մասին հիմնական գիտելիքները կարևոր հիմք են հավաքների ընթացքում ոստիկանության ծառայության իրականացման մեթոդները որոշելու համար: Այս իմացությունն այն հիմքն է, որի վրա կառուցվում են հետագա բոլոր գործողությունները, այդ թվում՝ պլանավորումը, հարկադրումը և զեկուցումը:

Ամբողջ հավաքին միանման մոտեցում ցուցաբերելու փոխարեն ոստիկանությունը պետք է ծանոթ լինի խմբային վարքի տարբեր տեսակներին՝ հավաքի ընթացքում այդ խմբերը նույնականացնելու, մարդկանց զանազան խմբերի և նրանց վարքագծի միջև տարբերակում կատարելու, վարքի յուրաքանչյուր դրսևորմանը համարժեք վերաբերմունք ցուցաբերելու համար: Հավաքի ընթացքում խմբի ներսում անհատի վարքագիծը կարող է ենթարկվել և՛ դրական, և՛ բացասական փոփոխության: Գոյություն ունեն բազմաթիվ գործոններ, որոնք կարող են ազդեցություն ունենալ և դրանց շարքում կարող են լինել՝

- Անհատին շրջապատող անձանց վարքագիծը,
- Անհատի անձնական համոզմունքները և չափանիշները,
- Իր գործողությունների համար պատասխանատվություն կրելու մասին պատկերացումը,
- Ընդունելի վարքագծի մասին անհատի պատկերացումը,
- Անհատի տրամադրությունը (զայրացած, ուրախ, հիասթափված, վախեցած կամ անհանգիստ) և
- Ոգելից խմիչքի և/կամ թմրամիջոցների օգտագործումը:

Վարքագծի վրա ազդող բազմաթիվ գործոնների առկայությամբ զարմանալի չէ, որ մասնակիցները ամբողջ ընթացքում միանման վարքագիծ չեն դրսևորում: Ոմանք կարող են ջանքեր գործադրել, որ մասնակիցները մնան խաղաղ և կատարեն օրենքի պահանջները, մյուսները կարող են խրախուսել քաղաքացիական անհնազանդությունը, ուրիշները կարող են առճակատում կամ անգամ բռնություն հրահրել: Կարող են լինել խռովության կամ անկարգապահ վարքագծի առանձին օջախներ այն պարագայում, երբ մասնակիցների ճնշող մեծամասնությունը շարունակում է դրսևորել կարգապահ վարք և մասնակցում է խաղաղ հավաքին՝ չներքաշվելով որևէ այլ գործողության մեջ:

Ոստիկանության համար մշտական մեկնակետ պետք է ծառայի ոստիկանական նախականխող գործունեությունը՝ ոչ թե անկարգություններին արձագանքումը: Ոստիկանության համապատասխան ծառայության հրամանատարը պետք է մշտապես հետևի իրավիճակին, գնահատի հավաքի, անցորդների և, ըստ անհրաժեշտության, հակընդդեմ ցուցարարների շարժին, որպեսզի լավագույնս կառավարի իրավիճակը՝ խաղաղ կարգի պահպանումն ապահովելու

համար: Սրա համար կարող է պահանջվել ոստիկանության ճկունությունը հավաքի և օրենքի աննշան խախտումների նկատմամբ կիրառվող օրինական սահմանափակումների հարցում: Չափազանց խիստ մոտեցումը կարող է և՛ մեծացնել լարվածությունը, և՛ սադրել մասնակիցների ավելի թշնամական կամ ագրեսիվ արձագանքները: Նույնիսկ այնպիսի իրավիճակներում, երբ հնչում են առճակատման կամ բռնության որոշ կոչեր, ոստիկանությունը պետք է կարողանա դիմակայել այդ ազդեցություններին, եթե շարունակի տարբերակված մոտեցում ցուցաբերել մասնակիցներին, օգտագործի ներկա գտնվող խմբերի և անհատների մասին ունեցած գիտելիքները, պահպանի մարդկանց հետ դրական փոխհարաբերությունները և գործի խոհեմության ու հանդուրժողականության ոգով:

Հավաքների ընթացքում ոստիկանության գործունեության սկզբունքները

Մարտահրավերների հասցեագրման գործում ոստիկանական կառույցները պետք է ուղղորդվեն հետևյալ չորս հիմնական սկզբունքներով՝ գիտելիք, աջակցում, հաղորդակցություն և տարբերակում, բացի այդ, դրանք պետք է ընկած լինեն հավաքներին ոստիկանության մոտեցման հիմքում:[8] Հավաքների խաղաղ ընթացքն ապահովելու նպատակով ոստիկանության հրամանատարները պետք է օգտվեն այս չորս սկզբունքներից և կիրառեն դրանք պլանավորման, նախապատրաստման, իրականացման և օպերացիաների վերլուծության բոլոր փուլերում: Ոստիկանության բոլոր մակարդակների ծառայողները պետք է հիմնվեն այս սկզբունքների վրա և կիրառեն դրանք հավաքների ընթացքում ոստիկանական ծառայություն իրականացնելու ժամանակ:

Գիտելիքը

Կենսական նախապայման է հավաքին մասնակցող բոլոր խմբերի մասին իմացությունը: Կարևոր է իրազեկ լինել նրանց նորմերի, արժեքների, մտադրությունների ու նպատակների, ընդունելիի և պատշաճի նրանց պատկերացումների, այլ խմբերի նկատմամբ ունեցած կարծրատիպերի ու ակնկալիքների, նրանց պատմության (այդ թվում՝ անցյալում նրանց կազմակերպած հավաքների) և խորհրդանշական հատուկ նշանակություն ունեցող այլ տարրերի մասին:

---

8 Reicher, S., C. Stott, J. Drury, O. Adang, P. Cronin & A. Livingstone, “Knowledge-Based Public Order Policing: Principles and Practice” [«Հասարակական կարգի գիտելիքահեն պահպանում. սկզբունքներ և պրակտիկա»] *Policing*, Vol. 1, No. 4, 2007, pp. 403-415.

Նման գիտելիքը հնարավորություն է տալիս ոստիկանությանը հասկանալ խմբերի շահերն ու նպատակները, աջակցել դրանց օրինական նպատակների ձեռքբերմանը, ինչպես նաև պատկերացում է տալիս այն մասին, թե ոստիկանության ո՞ր գործողությունը կարող է խմբի կողմից ընկալվել որպես հարձակողական կամ սադրիչ, ինչը և կարող է հանգեցնել ընդհարման:

Նախքան օպերացիան ոստիկանության կողմից տեղեկությունների հավաքումը պետք է նպատակ հետապնդի ձևավորել և ընդլայնել իմացությունը հավաքի հավանական մասնակից խմբերի և նրանց շարժառիթների, ինչպես նաև հնարավոր վտանգավոր անհատների մասին (քրեական օպերատիվ-հետախուզական աշխատանք):

Աջակցումը

Ոստիկանական ռազմավարությունները պետք է առաջին հերթին աջակցեն խաղաղ հավաքի կազմակերպիչների և մասնակիցների՝ օրինական նպատակների իրագործմանն ուղղված ջանքերին: Հիմնական գաղափարը հիմնվում է այն ենթադրության վրա, որ հավաքին մասնակցողների մեծ մասի մտադրությունները կլինեն խաղաղ բնույթի: Ոստիկանությունը պետք է պարզի մասնակիցների մտադրությունները և քննարկի՝ ինչպես կարելի է դրանք իրագործել: Դյուրացնելով նրանց նպատակների իրագործումը՝ ոստիկանությունը կարող է ոչ միայն կանխել բռնությունը, այլև ստանալ մասնակիցների աջակցությունը՝ անկարգությունների հնարավորությունը նվազեցնելու և հասարակական կարգի հնարավոր խախտումներին արդյունավետ արձագանքելու համար:

Ենթադրվում է, որ գոյություն ունի տեղեկատվություն, որը հնարավորություն է տալիս ոստիկանությանը հասկանալ խմբերի առաջնահերթությունները և օգտագործել ոստիկանական մոտեցումներ և մեթոդներ, որոնք հնարավորություն կտան խմբերին հասնել իրենց օրինական նպատակներին: Փորձը և ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ սահմանափակումները և հսկողության միջոցները հաճախ բավարար չեն հասարակական կարգը պահպանելու համար:

Եթե առկա է խռովության կամ բռնության վտանգ, առանձնակի կարևոր է պարզաբանել և տեղեկացնել կազմակերպիչներին և մասնակիցներին այն մասին, թե ինչու են անհրաժեշտ սահմանափակումները: Բացի այդ, հարկ է մասնակիցներին առաջարկել իրենց նպատակներին հասնելու այլընտրանքային ուղիներ:

Հաղորդակցությունը

Վստահության մթնոլորտ ձևավորելու և հավաքի բոլոր փուլերում այդպիսի մթնոլորտը պահպանելու համար ոստիկանության, կազմակերպիչների և այլ շահագրգիռ կողմերի միջև հաղորդակցությունը պետք է ղեկավարվի «անակնկալների բացառման» քաղաքականությամբ, որը նախականխման և լարվածության նվազեցման կարևոր մարտավարություններից է:

Ոստիկանությունը պետք է ակտիվորեն հաղորդակցվի, որպեսզի հարաբերություններ հաստատի ակցիայի մասնակիցների հետ և հիմքեր ստեղծի ապագայում կոնֆլիկտի նախականխման համար: Փորձը ցույց է տալիս կոնֆլիկտի առաջացումից կամ սրումից խուսափելու համար հավաքի մասնակիցների հետ ոստիկանության հարգալից և հանդարտ հաղորդակցման կարևորությունը: Հաղորդակցությունը պետք է տեղի ունենա օպերացիայի բոլոր փուլերում, և դա հատկապես կարևորվում է, երբ լարվածությունը սկսում է աճել: Սահմանափակումներ կիրառելու դեպքում կարևոր է տեղեկացնել մարդկանց դրանց պատճառների մասին՝ առնվազն թյուրըմբռնումներից խուսափելու և այլընտրանքներ առաջարկելու համար: Կարևոր է, որ ոստիկանության բոլոր աշխատակիցները կարողանան մասնակիցների և հասարակության անդամների հետ հաղորդակցվել և տեղեկացնել նրանց ոստիկանության՝ միջացառման հետ կապված մտադրությունների մասին:

Ոստիկանությունը տարբեր միջոցներով՝ հավաքի մասնակիցների և կազմակերպիչների հետ ուղղակի զրուցելով, շարժական բարձրախոսներով, հատուկ բարձրախոս մեքենաներով, լրատվամիջոցներով և սոցիալական ցանցերով պետք է հայտնի սեփական մտադրությունների մասին: Ոչ խոսքային հաղորդակցությունը (ոստիկանության վարքագիծը և արտաքին տեսքը, հանդերձանքը և սպառազինությունը, որ կրում կամ ցուցադրում են) նույնպես կարևոր է և ուղերձներ է փոխանցում մասնակիցներին և լայն հանրությանը:

Բազմաէթնիկ հասարակություններում կարևոր է, որ ոստիկանությունը կարողանա ուղերձները հաղորդել տարբեր լեզուներով:

Տարբերակումը

Հավաքների համատեքստում ռիսկի կարևոր գործոն է այն վտանգը, որ խմբի բոլոր մասնակիցներին համարում են նույնը և նրանց հանդեպ դրսևորում են նույն վերաբերմունքը: Անհատին տարբերակելու ձևերից մեկն այն է, երբ առաջնորդվում ես նրա արարքներին հետևելու եզրակացություններով, ոչ թե նրա դասակարգային պատկանելությամբ: Բազմաթիվ օրինակներ կան, երբ

ոստիկանության չտարբերակված միջամտության հետևանքով առաջացել են կոնֆլիկտներ և մեծացել է լարվածությունը:

Ամենասկզբում մարդկանց որևէ խումբ երբեք միատարր չէ, սակայն մարդիկ կարող են նմանատիպ վարքագիծ դրսևորել, եթե նրանց վերաբերվեն որպես մեկ անձի: Հետևաբար, կարևոր է իմանալ՝ ինչ խմբավորումներ են մասնակցում հավաքին, ինչպիսին են լինելու նրանց գործելու և արձագանքելու տարբեր եղանակները: Եթե մի անհատ կոնֆլիկտ է ստեղծում, կարևոր է, որ ոստիկանության արձագանքը չհանգեցնի այդ կոնֆլիկտին ուրիշների ներքաշմանը:

Խմբում եղող անհատներին նույնացնելով և խաղաղ մասնակիցներից հասարակական կարգի հնարավոր խախտողներին արագ մեկուսացնելով՝ ոստիկանությունը կարող է հարգանքի արժանանալ իր գործողությունների համար և ստանալ մասնակիցների լայն շրջանակի աջակցությունը: Կարևոր է գիտակցել, որ հավաքներին կարող են մասնակցել զանազան խմբեր, որոնք ունեն իրարից տարբերվող օրակարգեր և նպատակներ, ինչպես նաև տարբեր կարծիքներ ոստիկանության մասին:

Արդյունքները

Ինքնակարգավորում. Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ վերոնշյալ սկզբունքների կիրառումը կարող է օգնել հավաքի մասնակիցներին ավելի դրական կարծիք ձևավորել ոստիկանության մասին: Դա տեղի է ունենում այն բանի շնորհիվ, որ մասնակիցները հասկանում են, որ ոստիկանությունն անաչառորեն աջակցում է իրենց իրավունքների իրացմանը: Այս դեպքում հավաքի մասնակիցները կարող են պատասխանատվություն ստանձնել և կարգի հրավիրել խաղաղ ընթացքը խանգարել փորձող անհատներին՝ այդպիսով նպաստելով հավաքի ցանկալի ընթացքին: Երբ մասնակիցները պատասխանատվություն են ստանձնում, հնարավոր է դառնում կանխել ոստիկանության և հավաքի միջև «մենք ընդդեմ նրանց» փոխհարաբերությունը և ձևավորել հուսալի համագործակցություն:

Սկզբունքի ընդհանուր կիրառումը

Վերոնշյալ հիմնական սկզբունքներից ելնելով՝ ձեռնարկն ուրվագծում է, թե ինչպես ոստիկանության հրամանատարները պետք է մոտենան խաղաղ հավաքների ընթացքում ոստիկանական ծառայությանը: Թեպետ ձեռնարկի հետագա հատվածները քայլ առ քայլ ներկայացնում են հավաքները պլանավորելու, նախապատրաստելու և դրանց աջակցելու զանազան տարրերը, կարևոր է

ավելի մանրամասն անդրադառնալ մի շարք խնդիրների, որոնց անհրաժեշտ է ընդհանուր ուշադրություն դարձնել: Դրանք վերաբերում են հավաքների հնարավոր մասնակիցների առանձին խմբերին, ոստիկանության կողմից ուժի կիրառմանը և լրատվամիջոցների հետ աշխատանքի նկատմամբ մոտեցումներին:

Բազմազանությունը և հավասարությունը

Խաղաղ հավաքների իրավունքը համընդհանուր է, իսկ ոստիկանությունը պատասխանատվություն է կրում ապահովել այդ իրավունքի իրացումը հասարակության բոլոր խմբերի համար, որպեսզի յուրաքանչյուր ոք կարողանա մասնակցել հանրային տարածքներում կարծիքի արտահայտման տարատեսակ միջոցառումների: Հավաքի բնույթով կամ մասնակիցների կազմով պայմանավորված՝ կարող են լինել անձինք, որոնք խաղաղ հավաքների իրենց հիմնարար իրավունքն իրագործելու ընթացքում պահանջեն հատուկ ուշադրություն:

Ապահովել հավաքի անցկացումն անվտանգ և խաղաղ միջավայրում նշանակում է, որ ոստիկանությունը պետք է տեղեկություններ ունենա (գիտելիքներ) հավանական մասնակիցների շրջանակի մասին, հատուկ ուշադրություն դարձնի այն աջակցությանը, որ հարկ է ցուցաբերել տարբեր խմբերի կողմից սեփական կարծիքն արտահայտելու իրավունքի իրացան համար: Դրա համար պահանջվում է հաղորդակցության պատշաճ միջոցների կիրառում հավաքից առաջ, դրա ընթացքում և դրանից հետո, իսկ հավաքի ոստիկանական ապահովման գործում ներգրավված բոլոր ոստիկաններից պահանջվում է անհատներին ու խմբերին տարբերակելու կարողություն:

Կանայք. Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի (CEDAW) 3-րդ հոդվածը սահմանում է, որ մասնակից պետությունները «ձեռնարկում են բոլոր համապատասխան, ներառյալ՝ օրենսդրական միջոցները՝ ապահովելու կանանց լիարժեք զարգացումն ու առաջխաղացումը, որպեսզի նրանց համար երաշխավորվեն տղամարդկանց հետ հավասարության հիման վրա մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները ու դրանց իրացումը»:[9] Թեպետ կանանց, ըստ էության, չի կարելի համարել խոցելի խումբ, դեպքեր են եղել, երբ կանայք մեկուսացվել են և հավաքների ընթացքում ենթարկվել այդտեղ ներկա քրեածին տարրերի հարձակմանը կամ տուժել սեռական բնույթի բռնի գործողություններից:

---

9 Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիա (CEDAW), (Նյու Յորք, ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեա, 1979թ.), Բանաձև 34/180, <http://www.un.org/womenwatch/daw/cedaw/text/econvention.htm>

Ոստիկանությունը պետք է աչալուրջ և պատրաստ լինի պաշտպանելու նրանց: Կանայք, հաճախ, ոչ թե փոքրամասնություն են, այլ քանակական մեծամասնություն: Սակայն, եթե նրանց կարիքները հատուկ ուշադրության չեն արժանանում, հավանական է, որ ոստիկանության ընկալումն ու պատրաստությունները կհիմնվեն այն ենթադրության վրա, որ հավաքների մասնակիցների մեծամասնությունը տղամարդիկ են: Հետևաբար, չափազանց կարևոր է, որ ոստիկանությունը պատշաճ ուշադրություն դարձնի կանանց կարիքներին:

Լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր և ինտերսեքսուալ անձինք (ԼԳԲՏԻ). ԼԳԲՏԻ անձինք, ինչպես մնացած բոլորը, օգտվում են մարդու նույն իրավունքներից և հիմնարար ազատություններից, այդ թվում՝ հավաքների և արտահայտման ազատություններից: Այդուհանդերձ, ԼԳԲՏԻ անձինք շատ դեպքերում և բազմաթիվ երկրներում դեռևս ստիպված են դիմակայել հասարակության մեջ իրենց ներկայության դեմ կատաղի և հաճախ բռնի դիմադրությանը: Ոստիկանությունը պետք է բավարար ռեսուրսներ հատկացնի՝ աջակցելու նրանց հավաքներին, ինչպես կաներ ցանկացած այլ խմբի դեպքում, և ապահովելու մասնակիցների անվտանգությունը:

Երեխաներ. Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի 15-րդ հոդվածի համաձայն «Մասնակից պետությունները ճանաչում են երեխայի՝ միավորումների և խաղաղ հավաքների ազատության իրավունքը»:[10] Սակայն կազմվածքի փոքր լինելու պատճառով երեխաները կարող են ավելի խոցելի լինել որոշ հավաքների դեպքում, և ոստիկանությունը պետք է նկատի առնի այս հանգամանքը, երբ դիտարկում է օպերատիվ գործողությունների տարբերակները:

Հաշմանդամություն ունեցող անձինք. Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիան նշում է, որ անհրաժեշտ է «աջակցել, պաշտպանել եւ ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց՝ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների լիարժեք և հավասար իրացումը և դրանցից օգտվելը ...»[11], ինչպես նաև ապահովել նրանց լիարժեք և արդյունավետ մասնակցությունը հասարակության կյանքին մյուսների հետ հավասար հիմունքներով, մասնավորապես՝ նրանց ազատ արտահայտվելու և քաղաքական, հասարակական ու մշակութային կյանքին մասնակցելու իրավունքները: Հավաքի պլանավորման և աջակցման ընթացքում ոստիկանությունը պետք է հաշվի առնի հավաքին հաշմանդամություն ունեցող անձանց ներկայությունը:

---

10 Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա, (Նյու Յորք, ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեա, 1989թ.), Բանաձև 44/25, <http://www.ohchr.org/en/professionalinterest/pages/crc.aspx>

11 Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիա (Նյու Յորք, ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեա, ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեա, 2006թ.), Բանաձև 61/106. հոդված 1, <http://www.un.org/disabilities/con – vention/conventionfull.shtml>

Ազգային, կրոնական և լեզվական փոքրամասնություններ. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 27-րդ հոդվածն ամրագրում է, որ «...էթնիկական, կրոնական և լեզվական փոքրամասնություններին պատկանող անձանց չի կարելի մերժել այդ նույն խմբի այլ անդամների հետ համատեղ սեփական մշակույթից օգտվելու, կրոնը դավանելու և դրա ծեսերը կատարելու, ինչպես նաև մայրենի լեզվից օգտվելու իրավունքը»:[12] Միաժամանակ 2-րդ հոդվածը երաշխավորում է, որ դաշնագրով պաշտպանված իրավունքները կիրառելի են բոլոր անհատների նկատմամբ՝ առանց բացառության: Փոքրամասնություն հանդիսացող խմբերի դեպքում հավանաբար հարկ է ավելի մեծ ուշադրություն՝ բռնի ընդդիմացումից, հարձակումներից և վիրավորանքներից նրանց պաշտպանելու համար: Ոստիկանությունը պետք է հաշվի առնի խմբերից յուրաքանչյուրի խոցելիությունը, երբ աջակցում է նրանց հավաքներին կամ ապահովում է անվտանգությունը այդ հավաքների ժամանակ:

Ուժի կիրառումը որպես ծայրահեղ միջոց

Հաճախակի հանդիպող մտահոգություններից մեկն այն է, որ հավաքները կարող են հանգեցնել ապակայունացման տարբեր ձևերի, իսկ հանրային տարածքում մարդկանց մեծ խմբերով կուտակումը կարող է պատճառ դառնալ անկարգությունների և բռնության: Իրականում, հանրային հավաքների ճնշող մեծամասնությունը խաղաղ է անցնում՝ սահմանափակ անհարմարություն պատճառելով կյանքի առօրյա բնականոն ընթացքին, և իրավիճակը հնարավոր է ավելի բարելավել, եթե ոստիկանությունն ուշադրություն դարձնի չորս սկզբունքներին: Եթե ոստիկանությունը լավ է տեղեկացված (գիտելիք) կազմակերպիչների նպատակների և մտադրությունների մասին, որդեգրում է հավաքներին աջակցելու մոտեցում, իր այս մտադրության մասին տեղեկացնում է կազմակերպիչներին, մասնակիցներին և համայնքի այլ անդամներին (հաղորդակցություն), մշտապես ձգտում է տարբերակում կատարել զանազան մասնակիցներին միջև, ապա անկարգությունների ռիսկերը և հնարավորությունները կնվազեն:

Հավաքների ընթացքում ոստիկանական ծառայության իրականացման տեսանկյունից ոստիկանության մեկնակետը մշտապես պետք է լինի աջակցումը, որին հնարավոր է հասնել երկխոսության, բանակցությունների և հաղորդակցության այլ միջոցներով: Այս ամենի հետ մեկտեղ, մի շարք հանգամանքներում ոստիկանությունը կարող է ստիպված լինել ուժ կիրառել:

---

12 ՔՔԻՄԴ

Ոստիկանության կողմից ուժի կիրառումը պետք է մշտապես լինի բացառություն, այլ ոչ թե նորմ: Նախապատվությունը պետք է միշտ տրվի խաղաղ ճանապարհով լարվածության թուլացմանը՝ որպես ուժի կիրառման այլընտրանք օգտագործելով երկխոսությունը, համոզելը և բանակցելը:

Երբեմն, բռնի վարքագծին դիմակայելու համար, ոստիկանությունը կարող է անհրաժեշտ համարել ուժի կիրառումը: Ուժի կիրառումը պետք է մշտապես լինի համաչափ և կարգը վերականգնելու համար նվազագույն անհրաժեշտ չափով: Ուժի կիրառման կամ ոստիկանության խոշոր ուժերի ծավալման ցանկացած դեպքին պետք է արագ հաջորդի ուժերի հետքաշումը՝ իրավիճակը հսկողության տակ առնելուց անմիջապես հետո: Ոստիկանական մարմինները պետք է միշտ ունենան զանազան տարբերակներ, որոնցից հնարավոր կլինի օգտվել հավաքների ընթացքում ոստիկանական ծառայություն իրականացնելիս:

Եթե ոստիկանությունը որոշում է, որ անհրաժեշտ է ուժ կիրառել, ապա միշտ պետք է հիշել մասնակիցների բազմազանության մասին և տարբերակում կատարել հավաքին ներկա տարբեր խմբերի միջև: Պետք չէ ուժ կիրառել հավաքի խաղաղ մասնակիցների դեմ կամ խաղաղ հավաք ցրելու համար, նույնիսկ այն դեպքում, երբ հավաքն անօրինական է կամ պատճառում է անհարկի, բայց ոչ վտանգավոր անհարմարություններ ուրիշների առօրյա կյանքին: Ուժի կիրառման դիմելիս՝ ոստիկանությունը միշտ պետք է նկատի առնի իրավիճակի սրման հնարավոր վտանգը, ինչը կհանգեցնի ավելի վատ հետևանքների: Նախքան գործողություն ձեռնարկելը պետք է միշտ հաղորդել և բացատրել ուժ կիրառելու մտադրությունը, ինչը կապահովի թափանցիկություն և կպահպանի վստահությունը:

Անձի դեմ ուժի կիրառումը կարող է ունենալ լուրջ հետևանքներ: Հնարավոր բոլոր դեպքերում պետք է խուսափել երեխաների, տարեցների և հաշմանդամություն ունեցողների դեմ ուժի կիրառումից, սակայն երբ դա հնարավոր չէ, ուժի մակարդակը պետք է համարժեք լինի հանգամանքներին:

Որոշ դեպքերում ոստիկանությունը կարող է ստիպված լինել ուժ կիրառել՝ հավաքի մասնակիցներին թշնամաբար կամ ագրեսիվ տրամադրված հակընդդեմ ցույցի մասնակիցներից պաշտպանելու համար: Նմանատիպ իրավիճակներում ոստիկանությունը պետք է ձգտի տարբերակել հարձակվողներին և հարձակման թիրախներին՝ չմոռանալով, որ պատասխանատվություն է կրում խաղաղ հավաքների իրավունքից օգտվողների իրավունքները պաշտպանելու համար:

1990 թվականին ընդունված «Իրավապահ մարմինների աշխատակիցների կողմից ուժի և հրազենի կիրառման» ՄԱԿ-ի հիմնական սկզբունքներն ուրվագծում են ուժի կիրառման հիմնական սկզբունքները, որոնք կիրառելի են ոստիկանության

բոլոր ծառայողների նկատմամբ: «Հիմնական սկզբունքները» ընդգծում են, որ ուժի կիրառումը պետք է միշտ լինի ծայրահեղ միջոց՝ ոչ թե նորմ, և այն պետք է լինի համաչափ՝ միտված մարդու կյանքը պաշտպանելուն:[13]

Նախքան հավաքի ընթացքում ուժի կիրառման հարցը դիտարկելը, ոստիկանությունը պետք է նախ քննարկի դրա անհրաժեշտությունը: Եթե նույն նպատակին հնարավոր է հասնել խաղաղ միջոցներով, ապա հարկ չկա ուժ կիրառել: Երկրորդ, ուժի կիրառման պարագայում հարկ է նկատի առնել դրա համաչափությունը ոստիկանական գործողության օրինական նպատակին հասնելու համար: Երբ հավաքի նկատմամբ ուժ է կիրառվում, ոստիկանության ղեկավարությունը (ռազմավարական, օպերատիվ և մարտավարական մակարդակներում) պետք է կարողանա բացատրել հանրությանը՝ հասարակական կարգի պահպանման ի՞նչ նպատակի են ուզում հասնել (աջակցում, զսպում, շուրջկալում կամ ցրում), և տվյալ հանգամանքներում ինչու՞ է ընտրված մոտեցումն ամենապատշաճ տարբերակը: Չափազանց կարևոր է նաև, որ պլանավորման և հավաքի սպասարկման ողջ ընթացքում հրամանատարական մակարդակների միջև լինի հաղորդակցություն և երկխոսություն, հատկապես երբ խոսքը գնում է ուժի կիրառման մասին: Ապօրինի հրամանները չպետք է կատարվեն:[14]

Ընդհանուր առմամբ, հավաքների ընթացքում հրազեն չպետք է գործածվի, բացառությամբ կյանքի կամ ծանր վնասվածքների անմիջական սպառնալիքի դեպքում ինքնապաշտպանության կամ այլ անձանց պաշտպանության, կյանքին լուրջ սպառնալիք ներկայացնող առանձնակի ծանր հանցագործության նախականխման, նման վտանգ ներկայացնող և ոստիկանության հրահանգներին չենթարկվող անձի ձերբակալման կամ նման անձի փախուստը կանխելու նպատակներով, և միայն այն դեպքում, երբ նվազ ծայրահեղ միջոցները բավարար չեն այս նպատակներին հասնելու համար: Բոլոր դեպքերում, հրազենի կանխամտածված մահացու կիրառումը կարելի է միայն այն դեպքում, երբ դա բացարձակ անխուսափելի է որևէ մեկի կյանքը պաշտպանելու համար:[15] Հրազենի կիրառման անխուսափելիության դեպքում, որպես կանոն, պետք է տրվի նախազգուշացում:[16] Բռնի ամբոխի վրա անխտիր կրակոցներ արձակելը որևէ կերպ այն ցրելու օրինական կամ ընդունելի մեթոդ չէ:[17]

---

13 «Իրավապահ մարմինների աշխատակիցների կողմից ուժի և հրազենի կիրառման հիմնական սկզբունքներ» (Հավանա, Հանցագործությունների կանխմանը և իրավախախտների հետ վարվելաձևին նվիրված ՄԱԿ-ի ութերորդ կոնգրես, 1990թ.), <http://www.ohchr.org/EN/ProfessionalInterest/Pages/UseOfForceAndFirearms.aspx>

14 Նույն տեղում, հոդված 27

15 Նույն տեղում, հոդված 9

16 Նույն տեղում, հոդված 10

17 Նույն տեղում, հոդված 14

Միաժամանակ, ոստիկանության տրամադրության տակ գտնվող մարտավարական տարբերակների ոչ ճիշտ կամ անզգույշ օգտագործումը կարող է նույնքան մահաբեր լինել, որքան հրազենը: Հետևաբար, կարևոր է, որ հավաքների ընթացքում ոստիկանական գործողություններին մասնակցեն պատշաճ պատրաստված ծառայողներ: Նրանց ուսուցումը պետք է լինի արդյունավետ և համապատասխանի մարդու իրավունքների պահանջներին: Պետք է մշտապես գործի արդյունավետ հրամանատարական աստիճանակարգություն՝ ոստիկանության անհարկի կոշտ արձագանքումից և ուժի չարդարացված կիրառումից խուսափելու համար: Պետք է լինեն պատասխանատվության հստակ մակարդակներ, ինչը խիստ հսկողություն կերաշխավորի ծանր վնասվածքների կամ մահվան ավելի մեծ վտանգ պարունակող մարտավարական գործողությունների հանդեպ: Հարկ է ապահովել նաև քննության մեխանիզմ՝ ոստիկանության կողմից ուժի ենթադրյալ չարդարացված կիրառման դեպքերի լիարժեք և արդար քննությունը երաշխավորելու համար:

Համապատասխան ծառայողը պարտավոր է արձանագրել ուժի կիրառման ցանկացած դեպք, ինչպես նաև պետք է գործեն ընթացակարգեր, որոնք երաշխավորում են ուժի կիրառման մասին վերադասին հնարավորինս արագ զեկուցելը: Երբ որպես մարտավարական տարբերակ կայացվում է ուժ կիրառելու որոշում, հրամանատարը պետք է արձանագրի որոշման իր հիմնավորումը և արդյունքը: Եթե առկա է համոզվածություն կամ կասկած, որ ուժի նմանօրինակ կիրառումը ապօրինի է, ապա պետք է կատարվի հանգամանքների լիարժեք քննություն:

Ոստիկանությունը և զանգվածային լրատվության միջոցները

Ժողովրդավարական ոստիկանական գործունեության սկզբունքներից մեկը վերաբերում է հաշվետվողականությանն ու թափանցիկությանը և ընդգծում է, որ ոստիկանությունը պետք է հաշվետու լինի քաղաքացիների և նրանց ներկայացուցիչների, պետության և օրենքի առջև: Լրատվամիջոցների աշխատանքը և ոստիկանության գործողություններն ու շարժառիթները լուսաբանելու, տեսագրելու, վերլուծելու և հետաքննելու կարողությունը ոստիկանությանը հանրային հավաքների ընթացքում տեղի ունեցող գործողությունների համար հաշվետու պահելու ձևերից մեկն է:

Լրատվամիջոցների հետ աշխատանքը լայն հասարակության հետ հաղորդակցության կարևոր ձև է, որը կարող է հանդես գալ որպես հավաքին աջակցելու ոստիկանության մտադրությունների և դրա խաղաղ ընթացքը երաշխավորելու նպատակով ձեռնարկելիք միջոցների մասին լայն հասարակությանը և մասնակիցներին տեղեկատվություն տարածելու մի եղանակ:

Ոստիկանությունը պետք է միշտ հարգի հանրային հավաքներին մասնակցելու և դրանք լուսաբանելու լրագրողների իրավունքը: Ոստիկանությունը կրում է նմանօրինակ միջոցառումներին լրագրողների իրավունքներին աջակցելու դրական պարտավորություն և ԶԼՄ-ների աշխատանքին չխոչընդոտելու կամ այն չարգելելու բացասական պարտավորություն: Հավաքներին լրագրողների աշխատանքին օգնելը բխում է ոստիկանության շահերից: Երբ լրագրողներն ազատ մուտք ունեն միջոցառման վայր, մեծանում է հավանականությունը, որ միջոցառման սպասարկման ընթացքում ոստիկանության դերի մասին լուսաբանումը կլինի ավելի դրական: Դա նաև վստահություն է ձևավորում լրագրողների և ոստիկանության միջև:

«Վերաբերմունքը զանգվածային լրատվամիջոցներին քաղաքական ցույցերի ընթացքում» ԵԱՀԿ զեկույցը[18] ներկայացնում է հանրային հավաքներին ոստիկանության և լրագրողների միջև փոխգործակցությունից ունեցած ակնկալիքները.

1. Սահմանադրությունը պարտավորեցնում է իրավապահ մարմինների աշխատողներին հանրային ցույցերի ընթացքում չարգելել և չխոչընդոտել լրագրողների աշխատանքին: Լրագրողներն իրավունք ունեն ակնկալել ոստիկանության արդար և զուսպ վերաբերմունքը,

2. Ոստիկանության վարքի համար պատասխանատու բարձրաստիճան պաշտոնյաները պարտավոր են երաշխավորել ոստիկանության աշխատակիցների համարժեք տեղեկացվածությունը լրագրողների դերի և գործառույթի մասին, մասնավորապես՝ ցույցի ընթացքում: Ոստիկանության կողմից չափազանց կոշտ արձագանքման դեպքերում ոստիկանության վերաբերմունքը լրագրողներին պետք է դիտարկվի առանձին՝ անկախ հավաքի թույլատրված կամ չթույլատրված լինելու հանգամանքից: Անհրաժեշտ է ոստիկանության բարձրաստիճան ղեկավարների արագ և համարժեք պատասխանը, ինչը կերաշխավորի, որ նման չափազանց կոշտ արձագանքումն ապագայում այլևս չի կրկնվի և հստակ ազդանշան կուղարկի, որ նման վարքագիծը չի հանդուրժվելու:

Մարդու իրավունքների միջազգային չափանիշները տարբերություն չեն դնում միջազգային լրատվամիջոցների և անկախ լրագրողների միջև: Լրատվամիջոցները ավելի ու ավելի են հիմնվում սիրողական լրագրողների վրա, ովքեր նյութեր են հավաքում կիսապրոֆեսիոնալ տեխնիկայի կամ

---

18 Վերաբերմունքը զանգվածային լրատվամիջոցների նկատմամբ քաղաքական ցույցերի ընթացքում, Հատուկ զեկույց (Վիեննա, ԵԱՀԿ 2007թ), http://www.osce.org/fom/25744>

նույնիսկ բջջային հեռախոսների օգնությամբ, իսկ բազմաթիվ լրատվամիջոցներ ակտիվորեն խրախուսում են հասարակությանը տեսագրելը և նկարահանված նյութերը իրենց կայքեր վերբեռնելը: Հավաքին աշխատող բոլոր լրատվամիջոցների աշխատակիցները պետք է վայելեն ոստիկանության նույն հարգալից վերաբերմունքը, և նրանց համար օրենքով չպետք է սահմանվեն պաշտոնական հավատարմագրման փաստաթուղթ կրելու կամ ցուցադրելու պարտավորություն կամ հատուկ պահանջներ: Լրագրողներին չի կարելի բերման ենթարկել հավաքը ցրելու հրահանգից հետո տարածքը չլքելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ նրանց ներկայությունն անհարկի միջամտում է ոստիկանության գործողությանը:

Անհատներն իրավունք ունեն բաց լուսանկարելու կամ այլ միջոցներով տեսաձայնագրելու հավաքների ընթացքում տեղի ունեցող գործողությունները, քանի որ դրանք բաց հանրային տարածքում իրականացվող հանրային միջոցառումներ են: Դա վերաբերում է նաև ոստիկանության գործողություններին ծառայողական պարտականությունները կատարելու ընթացքում: Հարկ է պահպանել օրինականության սկզբունքները՝ հաշվի առնելով, որ որոշ պետությունների օրենքներ արգելում են այսպիսի տեսաձայնագրումը: Ոստիկանության աշխատակիցները, հետևաբար, պետք է միշտ հիշեն, որ հավաքի ընթացքում իրենց կարող են տեսագրել կամ լուսանկարել: Ոստիկանության բոլոր աշխատակիցները պետք է դրսևորեն այնպիսի վարքագիծ, ասես իրենց գործողություններն ուղիղ հեռարձակվում են: Նրանց պետք է վերապատրաստել ու հրահանգել, որ լրատվամիջոցների ուշադրության կենտրոնում հայտնվելու դեպքում չափից ավելի կոպիտ չարձագանքեն: ԵԱՀԿ զեկույցը նաև նշում է, որ՝

3. Լրագրողների սարքավորումները դիտավորությամբ առգրավելու, վնասելու կամ կոտրելու փորձերը, որոնց նպատակն է լռեցնել լուսաբանումը, քրեորեն պատժելի արարքներ են, իսկ դրանք գործած անձինք պետք է պատասխանատվություն կրեն օրենքով: Տպագիր կամ տեսագրված նյութերի, ձայնագրությունների կամ ռեպորտաժի այլ ձևերի առգրավումն իշխանությունների կողմից ուղղակի գրաքննության դրսևորում է և, որպես այդպիսին, միջազգային չափանիշներով արգելված արարք: Լրատվամիջոցների դերը, գործառույթը, պարտականությունները և իրավունքները պետք է կազմեն զանգվածային միջոցառումների անցկացման ընթացքում անվտանգություն ապահովելու համար պատասխանատու իրավապահների ուսումնական ծրագրի անբաժանելի մասը:

Լրատվամիջոցների աշխատակիցների իրավունքները սահմանափակելու, միջամտելու, նրանց սարքավորումները վնասելու կամ առգրավելու փորձերը պետք է համարվեն անհատի մարդու իրավունքների և ժողովրդավարական ոստիկանական գործունեության հիմնարար սկզբունքների խախտում:

ԳԼՈՒԽ 3. ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՈՒՄ ԵՎ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Որոշումների կայացումն առանցքային է խաղաղ հավաքները պլանավորելու ու դրանց աջակցելու գործընթացների և ոստիկանության գործողությունների համաչափությունն ու անհրաժեշտությունը երաշխավորելու համար: Որոշումների կայացումը պետք է հիմնվի նախորդ գլխում սահմանված չորս հիմնական սկզբունքների վրա (գիտելիք, աջակցում, հաղորդակցություն և տարբերակում): Գործնական կիրառման և օգտագործման դեպքում, որոշումների կայացման՝ ստորև սահմանված հիմնական սկզբունքները կարող են իրազեկել և ուղղորդել ոստիկանության գործողությունները, որոնք կարող են իրականացվել թե՛ անհետաձգելի միջամտություն պահանջող և զարգացող իրավիճակին արձագանքելու համար, թե՛ օպերացիայի նախապատրաստման ու պլանավորման փուլում:

Որոշումների կայացումը միշտ էլ սկսվում է գոյություն ունեցող տեղեկություններից, որոնք օգնում են ստանալ փաստացի կամ սպասվող իրավիճակի հնարավորինս լիարժեք պատկեր՝ առանց դրա լուծման հարցում շտապողական որոշումներ կայացնելու: Դա պահանջում է վերլուծել ռիսկերը և մշակել իրավիճակի հնարավոր զարգացման մի շարք սցենարներ: Իրավիճակը կարգավորելու եղանակի վերաբերյալ որոշում կայացնելուց հետո պետք է սահմանվի նպատակ: Նպատակի իրագործումը մշտապես պահանջելու է համագործակցություն այլ իրավապահների հետ, որոնցից յուրաքանչյուրն ունի սեփական խնդիրներ, լիազորություններ և պարտականություններ: Հետևաբար, չափազանց կարևոր է ցանցային վերլուծությունը, որը ցույց է տալիս՝ ինչպես են իրար հետ փոխկապակցված տարբեր աշխատակիցների անելիքները և ինչպես ավելի լավ փոխանակել տեղեկատվությունը: Երբ դա հստակ է, թիմը կարող է դիտարկել իրավիճակի կարգավորման եղանակը՝ ձևակերպելով միջամտության տարբերակներ, որոնք մշակվում են միջոցառմանը աջակցելու համար: Կրկին անհրաժեշտ է մշակել տարբեր սցենարներ, որոնք հաշվի կառնեն իրադարձությունների հնարավոր զարգացումները՝ ի պատասխան կոնկրետ գործողությունների, ինչպես նաև կներառեն տարբեր դերակատարների զանազան արձագանքները և առաջացող հնարավոր ռիսկերը:

Ամբողջ ընթացքում կարևոր է հետևել փաստացի զարգացումներին, տարբերակում կատարել ներկա գտնվող դերակատարների միջև և գնահատել, թե արդյո՞ք կոնկրետ միջամտությունները տալիս են նախատեսած արդյունքը: Սխալ է կարծել, որ հնարավոր է ամբողջությամբ վերահսկել մարդկանց քայլերը, սակայն հնարավոր է աջակցել միջոցառումների դրական ընթացքին՝ գործածելով մարդկային վարքագծի և փոխհարաբերությունների մասին պատշաճ գիտելիքներ: Խնդիրը լուծելու ընթացքում երբեք պետք չէ մոռանալ, որ գործ ունենք մարդկանց հետ, ովքեր, գիտակցաբար կամ ենթագիտակցաբար, ընտրություն են կատարում:

Արհեստավարժ ոստիկանական գործունեությունը ոչ թե հարկադրման գործողություն կիրառելն է, այլև հաղորդակցություն և երկխոսություն ապահովելը, ջանք է՝ համոզելու մարդկանց կայացնել օրինական որոշումներ և գործել օրենքի շրջանակում: Մարդկանց իրավունքների իրագործմանն աջակցելու համար դա պետք է արվի անվտանգ և պատասխանատու կերպով: Անվտանգ՝ ոստիկանության ու հանրության համար հավասարապես, իսկ պատասխանատու նշանակում է մշտապես գործել օրենքի հիմնական սկզբունքներին համաձայն:

Որոշումների կայացման մոդել

Ձեռնարկում օգտագործված որոշումների կայացման մոդելը, որը ոստիկանության ծառայությունները լայնորեն օգտագործում են բոլոր իրավիճակներում, սխեմատիկ ներկայացված է ստորև՝ գծապատկեր 1-ում: Մոդելը ցիկլիկ է և ունի յոթ բաղադրիչ: Այն ենթադրում և պահանջում է գիտելիքի և գործողությունների շարունակական մշտադիտարկում: Բոլոր վեց փուլերը պետք է համապատասխանեն մարդու իրավունքների պահանջներին: Բոլոր մակարդակների հրամանատարները (իրենց պատասխանատվության մակարդակին համապատասխան) կարող են և պետք է կիրառեն մոդելը բոլոր որոշումների կայացման դեպքում:

Որոշումների կայացման մոդելի յոթ բաղադրիչներն են՝

1. Օպերատիվ տվյալներ. Առաջին փուլում անհրաժեշտ է ուսումնասիրել և գնահատել պատասխանատու աշխատակիցներին մատչելի ողջ տեղեկատվությունը և օպերատիվ-հետախուզական տվյալները (օրինակ՝ վայրը, մասնակիցները, հնարավոր ազդակիրները, նույն խմբի կազմակերպած այլ հավաքների վերլուծությունները): Սա նախորդ գլխում ներկայացված գիտելիքի սկզբունքի տարր է, որ նաև հիմնվում է հաղորդակցության սկզբունքի վրա, քանի որ գիտելիքը կուտակվում է հավաքի կազմակերպիչների և շահագրգիռ այլ կողմերի հետ հաղորդակցության և երկխոսության շարունակական գործընթացի միջոցով:

2. Ռիսկեր և սպառնալիքներ. Երկրորդ փուլը (հավաքի մասնակիցների, հավաքի բոլոր ազդակիրների, հավաքները սպասարկողների՝ ոստիկանության և արտակարգ ծառայությունների համար առկա) ռիսկերի և սպառնալիքների գնահատումն է հաղորդակցության զանազան միջոցներով ստացված գիտելիքների լույսի ներքո: Այս նպատակով հարկ է դիտարկել տարբեր հնարավոր սցենարներ և կանխատեսել հնարավոր ռիսկերն ու սպառնալիքները:

3. Ռազմավարական մտադրություններ. Ռիսկերն ու սպառնալիքները գնահատելուց հետո հրամանատարը սահմանում է ոստիկանական օպերացիայի ռազմավարական մտադրությունները և վերանայում դրանք:

4. Ոստիկանական գործունեության նպատակներ և արտակարգ պլաններ. Հաջորդիվ հրամանատարը վերլուծում է, թե ոստիկանական գործունեության խնդիրներից որո՞նք են լավագույնս իրագործում հավաքների աջակցման ռազմավարական մտադրությունները:

5. Մարտավարական տարբերակներ. Հետո հրամանատարը վերլուծության շնորհիվ որոշում է՝ ոստիկանական մարտավարություններից ո՞րն է լավագույնս իրագործում ռազմավարական մտադրությունները:

6. Գործողություն և գնահատում. Ցիկլի վեցերորդ փուլը համապատասխան մարտավարության գործադրումն է: Այստեղ կարող է պահանջվել ռազմավարական կամ օպերատիվ պլանների փոփոխություն կամ տեղում միջոցների ձեռնարկում օպերացիայի ընթացքում: Ավելին, հրամանատարը հնարավորություն կունենա ուսումնասիրել առկա ապացույցները և սկսել որոշումներ կայացնելու ցիկլի նոր փուլ:

7. Անհրաժեշտություն և համաչափություն. Բոլոր փուլերում էլ ոստիկանության մոտեցումները պետք է համապատասխանեն մարդու իրավունքների միջազգային չափանիշներին և, հետևաբար, պետք է լինեն համաչափ, անհրաժեշտ և ցանկալի նպատակներին հասնելու համար ոստիկանության նվազագույն միջամտությամբ: Այս սկզբունքները պետք է պահպանվեն որոշումների կայացման ողջ ընթացքում:

Որոշումների կայացման գործընթացի տարբեր փուլերում ոստիկանության հրամանատարները պետք է ապահովեն, որ աշխատանքը տարվի հասանելի ամենաթարմ տվյալների հետ, կայացված որոշումները հիմնված լինեն մասնակիցների և այլ դերակատարների միջև տարբերակման վրա, գործընթացը մշակված լինի տեղի ունեցող միջոցառումներին աջակցելու և համապատասխան անձանց (ոստիկանության աշխատակիցներ, հավաքի կազմակերպիչներ, հանրահավաքին ներկա այլ անձինք) որոշումների մասին պատշաճ տեղեկացնելու համար:

Թեպետ ձեռնարկում ներկայացված որոշումների կայացման մոդելը վերաբերում է հրամանատարների կողմից որոշումների կայացմանը, այս հիմնական սխեման պետք է գործնականում օգտագործեն ոստիկանության բոլոր աշխատակիցները՝ հրամանատարական հիերարխիայի տարբեր մակարդակներում գտնվող ծառայողներից մինչև հավաքների ընթացքում փողոցում անկախ աշխատող ոստիկանները:

Գծապատկեր 1. Որոշումների կայացման մոդելի ցիկլը



Որոշումների կայացման մոդելն օգտագործվում է հավաքների նախապատրաստման և պլանավորման փուլերում, ինչպես նաև բոլոր տեսակի (նախապես իրազեկված կամ ինքնաբուխ) և չափերի հավաքներին առնչվող մարտավարական գործողությունների զանազան փուլերում: Ինչպես նշված է վերը, որոշումների կայացումը պետք է հաշվի առնի չորս կարևոր սկզբունքներ՝ գիտելիք, աջակցում, հաղորդակցություն և տարբերակում:

Երբ միջոցառման ընթացքում որոշում է կայացվում փոխել ոստիկանական գործողության պլանները, օրինակ՝ հավաքի նկատմամբ կիրառել անհրաժեշտ սահմանափակում կամ արձագանքել նոր տեղեկատվությանը, կարևոր է, որ որոշման մասին տեղեկացվեն կազմակերպիչները և, հնարավորության դեպքում, սահմանափակումների կիրառումը կատարվի նրանց համաձայնությամբ և երկխոսության միջոցով:

Երբ որոշում է կայացվում սահմանափակել հավաքի մասնակիցների իրավունքները, ուժ կիրառել կամ միջամտել որևէ այլ իրավունքների և ազատությունների (օրինակ՝ ծպտված ոստիկանների ներգրավումը, որը միջամտություն է անձնական կյանքի գաղտնիության իրավունքին) իրագործմանը, ապա հարկ է կազմել որոշման հստակ և թափանցիկ գրավոր արձանագրություն՝ նշելով այն աշխատակցի անունը, որը կայացրել է այդ որոշումը: Նմանօրինակ ցանկացած որոշում պետք է վերլուծել և գնահատել հավաքի արդյունքների մասին զեկուցելու ժամանակ: Հավանական է, որ այն հարկ լինի ներկայացնել նաև ոստիկանության գործողությունները քննելու ընթացքում:

Որոշումների կայացումը, հատկապես երբ դրանք ազդում են մարդու իրավունքների վրա, և որոշումների հիմքում ընկած գործընթացը պետք է արձանագրվեն հետագա փուլերում քննության առնելու համար: Կարևոր է, որ ոստիկանությունը բոլոր մակարդակներում ներկայացնի այն տեղեկատվությունը, որի հիման վրա գործողություն է կատարվել, այն նպատակները, որոնց փորձում էին հասնել օրինական միջոցներով, այն տարբերակները, որոնք նրանք քննարկել են, եթե քննարկման համար ժամանակ է եղել, այն գործողությունը, որը ձեռնարկել են և, ի վերջո, դրա արդյունքը:

Ռիսկերի գնահատում

Ռիսկերի գնահատումը հանրային հավաքներին առնչվող պլանավորման, նախապատրաստման և աջակցման բոլոր փուլերում որոշումների կայացման գործընթացի անբաժանելի մասն է:

Գնահատման գործընթացում առանցքային դեր ունի գիտելիքը, որը ձևավորվում է օպերատիվ-հետախուզական տվյալներով: Առաջարկվող միջոցառման, այն պլանավորողների և դրան աջակցողների (և հնարավոր ընդդիմացողների), նմանօրինակ նախորդող միջոցառումների պատմության մանրակրկիտ ուսումնասիրումը և գնահատումն օպերատիվ-հետախուզական բաժնի կողմից հնարավորություն է տալիս հրամանատարներին պատշաճ գնահատել հավաքի հետ կապված հնարավոր ռիսկերը:

Գոյություն ունեն կոնկրետ միջոցառման, դրա մասնակիցների, ազդակիրների և դրան աջակցողների (օրինակ՝ ոստիկանություն կամ գործընկեր արտակարգ ծառայություններ) հետ կապված ռիսկերը գնահատելու մի շարք մեթոդներ: Սահմանափակ թվով հնարավոր (այլընտրանքային) սցենարների և հավաքի մասնակիցների, ազդակիրների և դրան աջակցողների համար դրանց առաջացրած ռիսկերի նախանշումը գործնական և արդյունավետ մոտեցումներից մեկն է:

Հրամանատարները պետք է սահմանեն կոնկրետ ռիսկերը (օրինակ՝ սպասվածից շատ ավելի մեծ թվով մասնակիցների կամ հակընդդեմ ցուցարարների ներկայության հետ կապված ռիսկերը) և դրանց կարգավորման եղանակները: Արտակարգ իրավիճակների և վատագույն սցենարներով իրավիճակի զարգացման համար (օրինակ՝ անսպասելի վատ եղանակային պայմաններ) պետք է մշակվեն արտակարգ պլաններ:

Որոշումների կայացման մոդելի համաձայն ռիսկերն ու վտանգները պետք է հատկորոշվեն *նախքան* ռազմավարական մտադրությունները, ոստիկանական գործունեության նպատակները և արտակարգ պլանները ձևակերպելը: Հարկ է ռիսկերը և վտանգները նկատի առնել նաև օպերատիվ բազմապիսի միջոցառումներից ընտրություն կատարելու ընթացքում՝ հաշվի առնելով օպերատիվ այդ միջոցառումների իրականացման հետ կապված ռիսկերը: Հավաքի ընթացքում ռիսկերը և վտանգները փոխվում են, ինչն առաջացնում է միջոցառման ամբողջ ընթացքում ռիսկերի *դինամիկ* գնահատման անհրաժեշտություն:[19]

19 Ք. Սքոթ և Օ. Ադանգ, Ոստիկանության գործունեությունը ֆուտբոլի միջազգային խաղերի ընթացքում Եվրոպական միության տարածքում. Հասկանալ և կառավարել ռիսկը (Լիվերպուլ, 2009թ.), <http://www.academia.edu/3012119/Policing_Football_Matches_with_an_International_Di-mension_in_the_European_Union_understanding_and_managing_risk>

Մաս II

ՆԱԽՔԱՆ ՀԱՎԱՔԸ. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

ԳԼՈՒԽ 4. ՀՐԱՄԱՆԱՏԱՐԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ

Ոստիկանությունը միշտ առանցքային դերակատարում ունի խաղաղ հավաքների իրավունքի պաշտպանությունը և հավաքների ընթացքում հասարակական կարգի պահպանումը երաշխավորելու գործում: Սակայն ոստիկանության ներգրավման բնույթը, ծավալները և պահը կարգավորվում են տվյալ պետության գործող օրենքներով և ենթաօրենսդրական ակտերով: Որոշ պետություններում ոստիկանությունը պետք է իրազեկվի բոլոր հավաքների մասին և իրավասու է սահմանափակումներ կիրառել նմանօրինակ միջոցառումների նկատմամբ, մինչդեռ այլ պետություններում այդ լիազորություններն ու պատասխանատվությունը վերապահված են տեղական իշխանություններին կամ այլ մարմիններին, և նման դեպքերում ոստիկանության դերը, առաջին հերթին, այդ մարմինների որոշումների իրավակիրառումն ու հասարակական կարգի պահպանումն է:

Հարկ է նշել, որ բազմաթիվ են այն դեպքերը, երբ հավաքները չեն առաջացնում հրամանատարական խիստ ֆորմալ կառուցվածքներ ստեղծելու կամ ոստիկանական մանրամասն օպերացիաներ մշակելու անհրաժեշտություն, բավարար են միայն ոստիկանական ամենօրյա բնականոն գործողությունները և պահանջվում են ծառայություն իրականացնող փոքրաթիվ ոստիկաններ: Եթե հավաքները փոքրամասշտաբ են, ամենայն հավանականությամբ սահմանափակ անհարմարություններ կստեղծեն երթևեկության կամ այլ անձանց իրավունքների համար, չեն առաջանա կոնֆլիկտային վիճակներ, և քիչ հավանական է, որ լինեն ընդդիմադիրներ. ոստիկանությունը կարող է որոշում կայացնել և ծավալել իր հրամանատարական կառույցի միայն մի մասը, որը նկարագրված է ստորև: Սակայն այս գլխում նկարագրված հիմնարար սկզբունքները պետք է կիրառվեն ոստիկանական գործունեության բոլոր հավաքների ընթացքում:

Ոստիկանական կառույցները, որոնք աջակցում են հավաքին, պետք է ապահովեն հրամանատարական միասնական և հստակ շղթա, որպեսզի միշտ հնարավոր լինի պարզել այն վերադասին, որը վերջնական պատասխանատվություն է կրում ոստիկանության ծառայողների գործողությունների կամ անգործության համար: Սա առանձնակի կարևորվում է այն դեպքերում, երբ ոստիկանական օպերացիային մասնակցում են ոստիկանության տարբեր ստորաբաժանումներ կամ աշխարհագրորեն տարբեր տեղերից բերված ոստիկանական ուժեր և այլ մարմիններ՝ ապահովելու ռազմավարական պլանի անշեղ կատարումը, արդյունավետ համագործակցությունը, հստակ պատասխանատվությունը և հաշվետվողականությունը: Հրամանատարական հստակ կառուցվածք ստեղծելը անչափ կարևոր է հավաքների ընթացքում ոստիկանական ծառայության համար՝ անկախ միջոցառման պլանավորված կամ ինքնաբուխ լինելու հանգամանքից: Միասնական հրամանատարության սկզբունքը նախատեսում է, որ յուրաքանչյուր հրամանատար կամ վերադաս պետք է իմանա՝

- Ո՞ւմ է հաշվետու անձը,
- Անձի դերը, պարտականությունները և նպատակները,
- Ի՞նչ ռեսուրսներ են հատկացվել, ի՞նչ ռեսուրս է առկա,
- Անձի գործունեության աշխարհագրական կամ ֆունկցիոնալ տարածքը:

Կարելի է որոշարկել հրամանատարական երեք առանձին մակարդակ, որտեղ հրամանատարական ավագ կազմը համարվում է «ռազմավարական» (ընդհանուր ուղղության ապահովում), հրամանատարական միջին օղակը՝ «օպերատիվ» (ռազմավարական պլանի շրջանակներում ոստիկանական գործունեության կոնկրետ նպատակներ սահմանող) և հրամանատարական կրտսեր օղակը՝ որպես «մարտավարական» (որն ապահովում է ոստիկանության գործողությունների իմաստով իրական «արդյունքները»):[20] Երբեմն այն անվանում են հրամանատարական «ոսկե, արծաթե և բրոնզե» կառուցվածք: Թեև միշտ պետք է լինի մեկ ռազմավարական հրամանատար, երբեմն կարող է առաջանալ մեկից ավելի օպերատիվ հրամանատար և հաճախ՝ մի քանի մարտավարական հրամանատար ունենալու անհրաժեշտություն: Հավաքների ընթացքում ոստիկանական գործողությունների համար հրամանատարական դերեր ստանձնող ծառայողները պետք է պատշաճ պատրաստված և լիազորված լինեն այդ առաջադրանքը կատարելու համար:

Գծապատկեր 2. Հրամանատարական կառուցվածք

Հրամանատարական մակարդակ	Պատասխանատվություն
Ավագ	Ռազմավարական
Միջին	Օպերատիվ
Կրտսեր	Մարտավարական

Ոստիկանության ուժերում գոյություն ունեն կոչումների զանազան համակարգեր և պատասխանատվության ոլորտներ, սակայն այս փաստաթուղթը սահմանում է հրամանատարական կառուցվածքը, ելնելով ավելի շուտ դերակատարումներից և պատասխանատվություններից, քան կոչումներից: Հնարավորության սահմաններում որոշումների կայացումը պետք է կատարվի ամենաստորին մակարդակում՝ անհատական պատասխանատվության շրջանակում:

---

20 ՄԱԿ-ի խաղաղապահ օպերացիաներում ձևավորված ոստիկանական ստորաբաժանումներ, ՄԱԿ-ի Խաղաղապահ օպերացիաների վարչություն, 2013թ., Ref.2009.32, <http://www.un.org/en/ peacekeeping/sites/police/documents/formed_police_unit_policy_032010.pdf>: Հրամանատարական երեք մակարդակների միջև այս տարանջատումը համահունչ է ՄԱԿ-ի սկզբունքներին, սակայն որոշ մասնակից պետություններում մարտավարական և օպերատիվ մակարդակների տերմինաբանությունը փոխված է տեղերով: Հետևողականության նպատակներով այս ձեռնարկում օգտագործվելու է ՄԱԿ-ի առաջարկած տերմինաբանությունը:

ԵԱՀԿ տարածաշրջանի որոշ հատվածներում ոստիկանության ծառայությունն ավելի համայնքակենտրոն է, և ոստիկանության տարբեր աստիճանների ծառայողներ ունեն, իրավիճակից և հանգամանքներից ելնելով, անկախ որոշումներ կայացնելու որոշակի ինքնավարություն ու հայեցողություն: Այս մոտեցումը հաճախ անվանում են «համայնքի հետ ոստիկանական ծառայություն»: ԵԱՀԿ տարածաշրջանի այլ մասերում կենտրոնական կառավարությունն ավելի խիստ է վերահսկում ոստիկանության գործունեությունը, և այս ոճը կոչվում է «համայնքի վրա ոստիկանական հսկողություն»: Երկրորդ դեպքում հրամանատարական կառուցվածքը կարող է ավելի մոտ լինել ռազմական կազմակերպության կառուցվածքին, իսկ որոշումների կայացումը, սովորաբար, փոխանցվում է վերադաս մակարդակներ:

Ռազմավարական հրամանատարություն

Ռազմավարական հրամանատարը ոստիկանության բարձրաստիճան սպա է, որը պատասխանատու է ռազմավարական պլանը մշակելու, ոստիկանական գործունեության ոճը որոշելու և ԶԼՄ-ների հետ աշխատանքի ռազմավարությունը մշակելու, ինչպես նաև միջոցառման համար անհրաժեշտ ռեսուրսները հաստատելու և հատկացնելու համար: Բարդ հավաքների հետ աշխատելու համար նշանակված ռազմավարական հրամանատարը պետք է լինի ոստիկանության բարձրագույն ղեկավար կազմից և հսկողություն ունենա ոստիկանության ռեսուրսների զգալի մասի վրա:

Ռազմավարական հրամանատարը պատասխանատու է ռազմավարական գրավոր պլան կազմելու համար, որտեղ սահմանվում են ոստիկանության՝ հավաքին առնչվող ռազմավարական մտադրությունները (օրինակ՝ խաղաղ հավաքներին աջակցելը, երթևեկության խաթարումները սահմանափակելը, ծանր հանցագործություն կատարելու մեջ կասկածվողներին ձերբակալելը):

Ռազմավարական հրամանատարն է ապահովում հավաքների ընթացքում ոստիկանության համար բավարար ռեսուրսների մատչելիությունը: Երբ ռեսուրսների հատկացման հարցում անհրաժեշտ է սահմանել առաջնահերթություն, հրամանատարն է որոշում՝ որտեղ տեղաբաշխել ռեսուրսները, որ դրանք ավելի լավ օժանդակեն ոստիկանության ընդհանուր դերի կատարմանը: Ռազմավարական հրամանատարը կարող է նաև արգելել որոշ օպերատիվ գործողություններ, քանի որ դրանց կիրառումը նրա համար ցանկալի չէ կամ, հավանաբար, կարող է պնդել, որ կոնկրետ գործողությունների լիազորումը լինի ռազմավարական մակարդակում: Օրինակ՝ հավաք ցրելու ցանկացած որոշման համար կարող է պահանջվել ռազմավարական հրամանատարի հաստատումը:

Ցույցը սկսվելուց հետո ռազմավարական հրամանատարը պետք է հետևի օպերացիային հավաքի վայրից որոշ հեռավորության վրա գտնվող համապատասխան տեղից: Ռազմավարական հրամանատարը պետք է վերահսկի ամբողջ միջոցառումը, ոչ թե կենտրոնանա առանձին խնդիրների վրա, իսկ նրա ներկայությունը հավաքի վայրում կարող է շփոթմունք առաջացնել առ այն, թե ո՞ր կոնկրետ գործառույթի համար ով է պատասխանատու:

Ռազմավարական հրամանատարը պատասխանատվություն է կրում օպերատիվ հրամանատարների շարունակական գործունակությունն ապահովելու համար՝ երկար հավաքների ժամանակ ստեղծելով նրանց համար ընդմիջման և հանգստի հնարավորություններ: Բացի այդ, ակնկալվում է, որ ռազմավարական հրամանատարն է հաստատելու օպերատիվ հրամանատարի պլանները:

Ռազմավարական հրամանատարությունը (կամ, որոշ դեպքերում ելնելով հավաքի առանձնահատկություններից՝ օպերատիվ հրամանատարությունը) կամ նրա ներկայացուցիչները պետք է վաղ փուլերում կապ հաստատեն հավաքի կազմակերպիչների և շահագրգիռ այլ կողմերի հետ՝ ստեղծելով շփում և հաղորդակցության ուղիներ, ինչպես նաև նախանշելով օրվա նախընտրելի արդյունքները:

Ռազմավարական հրամանատարությունը՝

- Մշակում է ռազմավարական պլանը, որոշում է ոստիկանական գործունեության ոճը և մշակում է ԶԼՄ-ների հետ աշխատանքի ռազմավարությունը, դրանց մասին տեղեկացնում է օպերատիվ հրամանատարին(-ներին),
- Հաստատում և հատկացնում է ռեսուրսները,
- Ձևավորում է հասարակական կարգի պահպանման լավ ինտեգրված հրամանատարական կառուցվածք, որն ընդգրկում է անհրաժեշտ բոլոր գործառույթները, այդ թվում՝ օպերատիվ-հետախուզականը, քննչականը և օժանդակողը,
- Ապահովում է որոշումների մատյանի վարումը,
- Կապ է հաստատում հավաքի կազմակերպիչների և շահագրգիռ այլ կողմերի հետ,
- Հաստատում է օպերատիվ հրամանատարի(-ների) պլանը(-ները),
- Որոշումներ է կայացնում մարդու իրավունքների սկզբունքների հիման վրա և այնպիսի գործընթացով, որը հաշվի է առնում օպերատիվ-հետախուզական տվյալները, ռիսկերը և մատչելի տարբերակները, արձանագրում է բոլոր որոշումներն ու գործողությունները,
- Մնում է կենտրոնական հրամանատարական կետում և վերահսկում ընդհանուր օպերացիան (ապահովելով ռազմավարական մտադրությունների համապատասխանությունը միջոցառման ամբողջ ընթացքում):

Աջակցություն ռազմավարական հրամանատարությանը. Հավաքը (երբ պատրաստվում են աջակցել խոշոր հավաքներին) և իր տրամադրության տակ եղող ռեսուրսները վերահսկելու համար ռազմավարական հրամանատարը պետք է տեղակայվի հեռավորության վրա գտնվող հարմար շենքում և անխափան կապ ունենա օպերատիվ հրամանատարի և շահագրգիռ այլ կողմերի հետ: Հրամանատարական սենյակում պետք է տեղակայվի թիմ, որի կազմում են ռադիոօպերատորներ, հեռախոսազանգերի օպերատորներ, մասնագետ խորհրդականներ (ըստ անհրաժեշտության), օպերատիվ ծառայողներ, մատյան վարողներ, հասարակայնության հետ կապերի պատասխանատու և, հավանաբար, նաև շահագրգիռ այլ կողմերի ներկայացուցիչներ, որոնք համանման պաշտոններ են զբաղեցնում իրենց կազմակերպություններում (օրինակ՝ հրշեջ, շտապ օգնություն, ՏԻՄ):

Սենյակը պետք է նաև ունենա՝

- Բավարար թվով հեռախոսներ,
- Մի քանի ռադիո (սարքի խափանման դեպքերի համար),
- Հրամանատարական մատյան կամ իրադարձությունների մատյան,
- Տեսահսկման համակարգ,
- Քարտեզներ կամ քարտեզագրման համակարգ,
- Օպերատիվ պլան,
- Արտակարգ պլաններ,
- Հրահանգման առանձին սենյակ (և/կամ հանդիպումների սենյակ),
- Ձայնա-տեսագրման առկա բոլոր աղբյուրներից օգտվելու հնարավորություն (օրինակ՝ ուղղաթիռ, անօդաչու թռչող սարք [ԱԹՍ]),
- Բջջային հեռախոսակապի ազդանշան,
- Կարևոր հեռախոսահամարների և ազդականչերի ցանկ:

Հավաքների մեծ մասի դեպքում վերահսկողության հագեցած սենյակներ կամ հատուկ ռեսուրսներ չեն պահանջվում: Վերոնշյալներն առաջարկվում են որպես լավագույն պրակտիկայի օրինակ խոշոր միջոցառումների համար կամ այն դեպքերում, երբ պահանջվում են ոստիկանության զգալի ռեսուրսներ:

Օպերատիվ հրամանատարություն

Օպերատիվ հրամանատարները պատասխանատու են ավագ հրամանատարի ռազմավարական մտադրություններն իրականացնելու համար: Այստեղ մտնում են հավաքի համար գործնական պլանավորումը, օպերատիվ պլան կազմելը, անձնակազմի հրահանգումը և ծավալումը, միջոցառման ընթացքում ռեսուրսների կառավարումը: Բոլոր հավաքների դեպքում, բացառությամբ ամենափոքր հավաքների, օպերատիվ հրամանատարները պետք է, սովորաբար, տեղակայվեն

հավաքի վայրից հեռավորության վրա: Եթե խոշոր հավաքների ժամանակ նրանք տեղակայված են հավաքի վայրում, վտանգ կա, որ նրանք կզբաղվեն առանձին խնդիրներով ու հարցերով և կկորցնեն ընդհանուր պատկերի ընկալումը: Դա կարող է շփոթմունք առաջացնել մարտավարական հրամանատարների շրջանում, ովքեր չեն իմանա՝ ով է պատասխանատու կոնկրետ գործառույթի կամ տարածքի համար:

Խոշոր, բարդ կամ երկարատև միջոցառումների կամ մեծ տարածքում տեղի ունեցող միջոցառումների դեպքում կարող է առաջանալ մեկից ավելի օպերատիվ հրամանատարի անհրաժեշտություն: Եթե որոշում է կայացվում ներգրավել մեկից ավելի օպերատիվ հրամանատար, ռազմավարական հրամանատարը պետք է համոզվի, որ բավարարված են հետևյալ պայմանները՝

- Առկա են հստակ և հասկանալի հրահանգներ, որոնք սահմանազատում են հրամանատարական շղթան և պատասխանատվությունը,
- Օպերատիվ մակարդակի հրամանատարական կառուցվածքում չկան բացեր, որոնք կստիպեն ռազմավարական հրամանատարին զբաղվել օպերատիվ որոշումներ կայացնելով,
- Շարունակաբար հստակ են հաղորդակցության և պատասխանատվության շղթաները,
- Օպերատիվ բոլոր հրամանատարները բավարար պատրաստություն ունեն և կոմպետենտ են կատարել իրենց դերերը:

Օպերատիվ հրամանատարը՝

- Մշակում և վերանայում է հավաքի ոստիկանական ապահովման օպերատիվ պլանը և համակարգում դրա իրականացումը,
- Ստեղծում է հրամանատարական կառուցվածք՝ տեղերում օպերատիվ հրամանատարության համար,
- Կապ է պահպանում ռազմավարական հրամանատարի հետ՝ ռազմավարական մտադրություններին պլանի համապատասխանությունն ապահովելու համար,
- Որոշումներ է կայացնում՝ հիմնվելով մարդու իրավունքների սկզբունքների վրա և կիրառելով գործընթաց, որը հաշվի է առնում օպերատիվ-հետախուզական տվյալները, ռիսկերը և մատչելի տարբերակները, արձանագրում է բոլոր որոշումներն ու գործողությունները,
- Մնում է կենտրոնական հրամանատարական կետում, որ կարողանա պատասխանատվություն ստանձնել օպերացիայի բոլոր տարրերի համար,
- Տեղեկացնում է պլանի մասին մարտավարական հրամանատարներին և, միջոցառման ընթացքում պլանի փոփոխության դեպքում, համապատասխան տեղեկություններ է փոխանցում նրանց,
- Պատասխանատվություն է կրում մարտավարական հրամանատարների գործողությունների՝ ռազմավարական մտադրությունների և օպերատիվ պլանի հետ համապատասխանությունը ապահովելու համար,

- Պատասխանատվություն է կրում բոլոր ծառայողներին ռազմավարական մտադրությունների և նրանց առանձնահատուկ դերերի, այդ թվում՝ պարտականությունների սահմանափակումների մասին հրահանգելու համար,
- Պատասխանատվություն է կրում օպերատիվ զանազան տարբերակների կիրառման համար,
- Ապահովում է ծավալած ոստիկանական ուժերի համաչափությունը հասանելի օպերատիվ-հետախուզական տվյալներում նշված սպառնալիքին:

Աջակցություն օպերատիվ հրամանատարությանը. Ընդհանուր իրավիճակին հետևելու համար օպերատիվ հրամանատարը պետք է տեղակայվի միջոցառման վայրից հեռավորության վրա, բայց այնպիսի վայրում, որտեղից նա կարող է անխափան կապ պահպանել հավաքի վայրում գտնվող ոստիկանների հետ և որը հնարավորություն է տալիս օպերատիվ հրամանատարին կայացնել ու արձանագրել համապատասխան բոլոր որոշումները: Օպերատիվ հրամանատարը հրամանատարական սենյակում պետք է տեղակայի թիմ, որի կազմում են ռադիոօպերատորներ, հեռախոսազանգերի օպերատորներ, մասնագետ խորհրդականներ (ըստ անհրաժեշտության), օպերատիվ ծառայողներ, մատյան վարողներ, հասարակայնության հետ կապերի պատասխանատու և շահագրգիռ այլ կողմերի ներկայացուցիչներ (օրինակ՝ հրշեջ, շտապ օգնություն, ՏԻՄ):

Որոշ երկրներում ոստիկանությունն օգտագործում է ավտոբուս՝ մինչև վեց ոստիկանության սպա, այդ թվում՝ օպերատիվ հրամանատարին, հասարակայնության հետ կապերի պատասխանատուին և ռադիոօպերատորներին տեղավորելու համար: Ավտոբուսները կահավորված են՝ ծառայելու որպես կապի կենտրոններ և ոստիկանական գործողությունների ընթացքում որոշակի ճկունություն են ապահովում:

Օպերատիվ հրամանատարական կենտրոնը պետք է նաև ունենա՝
- Բավարար թվով հեռախոսներ,
- Մի քանի ռադիո (սարքի խափանման դեպքերի համար),
- Հրամանատարական մատյան կամ իրադարձությունների մատյան,
- Տեսահսկման համակարգ,
- Քարտեզներ կամ քարտեզագրման համակարգ,
- Օպերատիվ պլան,
- Արտակարգ պլաններ,
- Հրահանգման առանձին սենյակ (և/կամ հանդիպումների սենյակ),
- Բջջային հեռախոսակապի ազդանշան,
- Կարևոր հեռախոսահամարների և ազդականչերի ցանկ:

Մարտավարական հրամանատարություն

Մարտավարական հրամանատարների խնդիրն է ղեկավարել կոնկրետ աշխարհագրական տարածքում ծավալված ոստիկանության ուժերը և պատասխանատվություն ստանձնել օպերատիվ պլանի համաձայն կոնկրետ գործառույթների կամ ծավալված ռեսուրսների համար: Նրանք հաշվետու են օպերատիվ հրամանատարին, իրականացնում են օպերացիան վերհսկելու կոնկրետ խնդիրներ կամ պարտականություններ, իրենց ենթակայության տակ ունեն մի շարք ոստիկաններ: Մարտավարական հրամանատարությունն ունի երկու ձև՝ աշխարհագրական և ֆունկցիոնալ:

- Աշխարհագրական տարածքի մարտավարական հրամանատարը պատասխանատու է կոնկրետ վայրի կամ գոտու համար, որը սահմանում է օպերատիվ հրամանատարը: Իր ենթակայությամբ ունի ոստիկանության մի շարք ծառայողներ և կարող է ղեկավարել օպերատիվ գործողությունների մի շարք տարբերակներ: Նա երաշխավորում է, որ օպերատիվ ծավալման պայմանները բավարարված լինեն նախքան առանձին ոստիկաններին այդ տարբերակները կիրառելու թույլտվություն տալը: Աշխարհագրական տարածքի հրամանատարը պատասխանատու է նաև այդ թույլտվությունը չեղարկելու համար, երբ դրա համար անհրաժեշտություն այլևս չկա:
- Ֆունկցիոնալ հրամանատարը կրում է նույն պատասխանատվությունը, ինչ աշխարհագրական տարածքի հրամանատարը: Սակայն սահմանված ֆիզիկական տարածքի փոխարեն պատասխանատու է կոնկրետ գործառույթի համար: Օրինակների շարքում են՝

  – *Համայնքային հրամանատարներ.* այս հրամանատարները և նրանց ենթակա ոստիկանները պատասխանատու են նախքան հավաքը, դրա ընթացքում և ավարտից հետո հավաքի կազմակերպիչների կամ նրանց ներկայացուցիչների և օպերատիվ հրամանատարի միջև երկխոսության ուղիները բաց պահելու համար: Նրանք պատասխանատու են նաև հասարակության լայն շրջանակների հետ ոստիկանության կապերի համար:

  – *Երթևեկության կազմակերպման հրամանատար.* այս հրամանատարները և նրանց ենթակա ոստիկանները պատասխանատու են հավաքի վայրի շուրջ տրանսպորտի ազատ հոսքերն ապահովելու համար: Նրանք կարող են, ըստ անհրաժեշտության, ուղղել երթևեկությունը շրջանցիկ ճանապարհներ կամ դադարեցնել այն և ապահովել, որ առաջին իսկ հնարավորության դեպքում, տարածքում կվերականգնվի բնականոն վիճակը:

  – *Կապավոր հրամանատարներ.* այս հրամանատարները և նրանց ենթակա ոստիկանները պատասխանատու են հրամանատարական և կառավարման սենյակում ոստիկանական օպերացիային օժանդակող աշխատակազմ

ապահովելու համար: Այս դերը ստանձնած հրամանատարը պետք է ունենա ոստիկանական կապի սարքավորումներն օգտագործելու, գործընկեր արտակարգ ծառայությունների հետ կապի մեթոդները կիրառելու, քարտեզագրման համակարգչային ծրագրի և տեսախցիկների հետ աշխատելու, ինչպես նաև սոցիալական ցանցերը (օրինակ՝ Թվիթերը)՝ որպես ոստիկանության օպերացիային աջակցող հաղորդակցության գործիք մշտադիտարկելու և դրանցից օգտվելու փորձ:

– *Քրեական հետաքննությունների հրամանատար.* այս հրամանատարները և նրանց ենթակա ոստիկանները պատասխանատու են հավաքի ընթացքում հանցագործությունների մասին ստացված հաղորդումները քննելու և բերման ենթարկված անձանց գործերի ձևակերպումը վերահսկելու համար: Նախքան միջոցառումը ռազմավարական հրամանատարը պետք է սահմանի հավաքին առնչվող իրավախախտումների քննության չափանիշները և ձերբակալվածների քրեական հետապնդման կարգը,

– Մարտավարական ֆունկցիոնալ հրամանատարների այլ տեսակներ կարող են հանդիսանալ երկխոսության ստորաբաժանումների, հատուկ միջոցների առանձին տեսակների (օրինակ՝ կրակային աջակցության թիմերի կամ հասարակական կարգի պահպանության ստորաբաժանումների) համար պատասխանատուները կամ մեդիայի հետ կապերի պատասխանատուները:

Մարտավարական հրամանատարների դերն ու պարտականություններն ընդգրկում են՝

- Ոստիկանության ռազմավարական նպատակի և խնդիրների հստակ ընկալում,
- Իր հսկողության տակ գտնվող ոստիկանական գործողությունների մարտավարության իրականացում օպերատիվ հրամանատարության պլանի համաձայն (նաև հրամանատարական հրահանգներով համաձայնեցված գործողություններն արտակարգ իրավիճակներում),
- Որոշումների կայացում իր պատասխանատվության շրջանակում, ոստիկանների հրահանգման և օպերացիայի ընթացքում հսկողության ապահովում իր պատասխանատվության շրջանակում,
- Հարմար դիրքավորում՝ իր դերը ցանկացած պահի կատարելու համար,
- Օպերատիվ հրամանատարին ողջ կարևոր տեղեկատվության հավուր պատշաճի փոխանցում:

Մարտավարական հրամանատարներն ապահովում են իրենց և ենթակաների աշխատանքի կատարումը ռազմավարական մտադրությունների և օպերատիվ պլանի հետ համապատասխանությամբ: Նրանք ապահովում են իրենց բոլոր ենթակաների կողմից այս տեղեկատվության ստացումը՝ նախքան օպերացիայի

առաջին փուլի սկիզբը, ինչպես նաև պատասխանատու են միջոցառումից հետո իրենց ենթակաների հետ արդյունքները վերլուծելու համար:

Մարտավարական հրամանատարն ապահովում է կարևոր տեղեկատվության փոխանցումը օպերատիվ հրամանատարին և կարևոր նոր տեղեկությունների փոխանցումն իր հսկողության ոլորտում ծավալված ոստիկաններին: Նա միշտ պատասխանատու է իր ենթակաների վարքագծի համար:

Դերեր և պարտականություններ

Հրամանատարական բոլոր երեք մակարդակներն իրենց ուրույն դերերն ու պարտականություններն ունեն հավաքը պլանավորելու և նախապատրաստելու, հավաքին աջակցելու և միջոցառումից հետո արդյունքները զեկուցելու և վերլուծելու գործում: Հաջորդող գլուխներում ներկայացվում են յուրաքանչյուր փուլում և հրամանատարական մակարդակում իրականացվող առանձնահատուկ առաջադրանքներն ու գործողությունները:

Միաժամանակ պետք է նկատի առնել, որ որոշ գործողություններ իրականացվում են հրամանատարական բոլոր երեք մակարդակներում և զանազան փուլերում: Մասնավորապես, բոլոր հրամանատարները պարտավոր են կապ պահպանել միջոցառման կազմակերպիչների և այլ կարևոր շահագրգիռ կողմերի հետ, կիրառել նախորդ գլխում նկարագրված որոշումների կայացման մոդելը և ռիսկերի գնահատման գործընթացները, իրենց գործողությունները պլանավորելու և իրականացնելու ընթացքում հիմնվել չորս հիմնական սկզբունքների վրա:

ԳԼՈՒԽ 5. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓՈՒԼ

Հավաքին նախապատրաստվելու համար ռազմավարական հրամանատարը ռազմավարական բոլոր մտադրությունները մեկտեղում է գրավոր պլանում, որը հիմնվում է չորս կարևորագույն ռազմավարական սկզբունքների՝ գիտելիքի, աջակցման, հաղորդակցության և տարբերակման վրա: Ռազմավարական պլանը հակիրճ փաստաթուղթ է, որն ապահովում է ընդհանուր շրջանակ օպերատիվ և մարտավարական հետագա գործողությունների համար: Այն ուղեցույց է օպերատիվ և մարտավարական հրամանատարների համար: Ռազմավարական պլանը նաև հիմք է ծառայում պլանավորման և նախապատրաստման գործընթացների գրավոր արձանագրման և օպերացիայի վերջնական արդյունքների ամփոփման համար:

Որոշ դեպքերում (օրինակ՝ ինքնաբուխ հավաք կամ ֆլեշմոբ) ոստիկանությունը կարող է իրազեկված չլինել պլանավորված հավաքի մասին կամ իրազեկումից հետո ունենալ շատ քիչ ժամանակ և պետք է պատրաստ լինի արձագանքել սեղմ ժամկետներում: Նման իրավիճակներում այդպիսի հավաքներին արձագանքելու և դրանց աջակցելու համար ոստիկանության հրամանատարները պետք է ձգտեն կիրառել չորս հիմնական սկզբունքները (2-րդ գլուխ) և օգտագործել որոշումների կայացման մոդելը (3-րդ գլուխ):

Գիտելիք

Հավաքի մասին տեղեկանալուն պես ոստիկանությունը պետք է ստուգի այդ տեղեկության հավաստիությունը և ճշտությունը: Տեղեկությունները կարող են ստացվել մի շարք ուղիներով, օրինակ՝ պաշտոնական իրազեկումից, մամուլի լուսաբանումներից, սոցիալական ցանցերից (այդ թվում՝ առցանց սոցիալական ցանցերից) կամ գովազդային պաստառներից: Հետևաբար, ոստիկանությունը պետք է համոզված լինի, որ հավաք կազմակերպելու մտադրությունը լուրջ է: Եթե պահանջվում է հավաք անցկացնելու մասին պաշտոնական իրազեկում, ոստիկանությունը, սովորաբար, տեղեկանում է պլանների մասին իրազեկման գործընթացից: Այնժամ տեղեկությունները փոխանցվում են ռազմավարական հրամանատարին ռազմավարական պլանավորման գործընթացը սկսելու համար:

Եթե պաշտոնական իրազեկում չի կատարվում, հավաք անցկացնելու մտադրությունը կարող է հայտնի դառնալ լրատվամիջոցներից կամ սոցիալական ցանցերից, պաստառներից կամ թերթոններից, կամ բանավոր հաղորդակցությունից: Այս փուլում ոստիկանությունը պետք է ստուգի այս տեղեկությունները՝ օպերատիվ-հետախուզական տվյալներ ձևավորելու համար: Տեղեկությունները հում տվյալներ են, իսկ օպերատիվ-հետախուզական տվյալները ստուգված և գնահատված տեղեկություններն են:

Տեղեկությունները կարելի է գնահատել մի քանի ճանապարհով, օրինակ՝ ստուգել տեղեկատվության մի աղբյուրը մեկ այլ աղբյուրի միջոցով կամ ուսումնասիրել անցյալի նմանօրինակ միջոցառումները, ինչը կարող է պահանջել համագործակցություն ոստիկանության այլ ծառայությունների հետ, որոնք աջակցել են նմանօրինակ միջոցառումների և դասեր քաղել նախորդ փորձից: Սակայն տեղեկությունները ստուգելու առաջնային միջոցը պետք է լինի բաց երկխոսությունը ոստիկանության, հավաքի կազմակերպիչների և, ըստ վերաբերելիության, շահագրգիռ այլ կողմերի հետ (օրինակ՝ ՏԻՄ-ի):

Ոստիկանությունը պարտավոր է ուսումնասիրել նախորդ նմանօրինակ միջոցառումները՝ նախկինում բացահայտված սպառնալիքները կամ ռիսկերը պարզելու համար: Այս առումով հատուկ նշանակություն կարող են ունենալ նախորդ միջոցառումների արդյունքների ամփոփման արձանագրությունները և անցյալից քաղած դասերը: Կազմակերպիչների հետ նախկինում կատարած աշխատանքը կարող է նաև օգնել նույնականացնել կարևոր անձանց, նրանց կարողություններն ու ունակությունները: Որոշումների կայացման գործում ռազմավարական հրամանատին աջակցելու համար հաճախ նպատակահարմար է նախօրոք ոստիկանության կոնկրետ աշխատակցի հանձնարարել այդ խնդրի ուսումնասիրությունը:

Աջակցում

Ոստիկանությունը պարտավոր է, հնարավորության սահմաններում, կազմակերպիչների նախընտրած վայրում, ժամին և եղանակով աջակցել բոլոր խաղաղ հավաքներին և պաշտպանել դրանք, ինչպես նաև ապահովել հավաքի մասնակիցների, ոստիկանության աշխատակիցների և հասարակության անդամների անվտանգությունը: Վաղ փուլում ոստիկանությունը ձգտում է պարզել մասնակիցների հավանական քանակը, հավաքի մտադրությունը (ստատիկ է կամ տեղաշարժվող), ժամը և վայրը, հակամարտություն առաջացնելու հավանականությունը: Ցանկացած երկխոսության նպատակն է պարզել՝ ինչպես կարելի է լավագույնս աջակցել հավաքին: Ոստիկանությունը չպետք է ձգտի հետ պահել կազմակերպիչներին հավաք անցկացնելու մտքից, և հարկ չկա ճնշում գործադրել կազմակերպիչների վրա, որ փոխեն իրենց պլանները՝ հարմարեցնելով դրանք ոստիկանության շահերին:

Մի շարք իրավիճակներում հավաքը կարող է լուրջ խոչընդոտներ առաջացնել, որոնք կարող են ստեղծել կյանքին սպառնացող իրավիճակ: Դա կարող է լինել ակնհայտ (հիվանդանոցի հիմնական ճանապարհի կամ հրշեջ կայանի ելքի արգելափակում) կամ պակաս ակնհայտ (արտակարգ իրավիճակների ծառայությունները դժվարություն են ունենում տարեց կամ խոցելի անձանց

հասնելու հարցում): Վաղ փուլերում ոստիկանության և կազմակերպիչների միջև երկխոսությունը պետք է ուղղվի փոխադարձ համաձայնությամբ այս խնդիրների կարգավորմանը, որպեսզի հետագա փուլերում ստիպված չլինեն սահմանափակումներ հարկադրել: Ոստիկանության ներգործուն աշխատանքը կարող է օգնել ձևավորել այնպիսի կապեր, որոնք կարող են օգտագործվել միջոցառման ընթացքում առաջացող հնարավոր բարդ իրավիճակներում:

Հաղորդակցություն

«Անակնկալների բացառման» քաղաքականություն. Ոստիկանությունը պետք է ձգտի հավաքների ընթացքում ոստիկանական գործունեության համար որդեգրել «անակնկալների բացառման» քաղաքականություն, ինչը նշանակում է, որ հավաքի կազմակերպիչները և մասնակիցները պետք է իրազեկ լինեն ոստիկանության մտադրությունների և հնարավոր մարտավարությունների մասին: Նրանք պետք է տեղյակ լինեն ոստիկանության սովորական տեղաբաշխման մասին և չպետք է անակնկալի գան հանկարծակի վերադասավորման կամ ոստիկանության համազգեստի ու սպառազինության նկատված փոփոխության դեպքում: Իդեալական դեպքում ոստիկանությունը նույնպես պիտի ակնկալի «անակնկալների բացառում» միջոցառման ընթացքում, եթե կազմակերպիչները հետևեն համաձայնեցված պլանին և պայմանավորվածություններին: Դա պահանջում է վստահություն զանազան կողմերի, մասնավորապես՝ ոստիկանության և կազմակերպիչների միջև: Նման վստահության ձևավորումը կարող է ժամանակ պահանջել, սակայն մեկնակետը պետք է լինի երկխոսությունը: Չնայած մասնակիցների և ոստիկանության ջանքերին՝ անակնկալներ կարող են լինել: Սակայն առավել հնարավոր սցենարները և արդյունքները հասցեագրելու դեպքում կարելի է նվազեցնել դրանց հավանականությունը: Հասարակական կարգի ներգործուն պահպանումը միշտ էլ նախընտրելի է անկարգություններին արձագանքող գործելակերպից:

Ոստիկանությունը, պլանավորված հավաքի մասին տեղեկանալուց հետո և նույնիսկ այն դեպքերում, երբ իրազեկում չի ստացել, պետք է ձգտի կապ հաստատել կազմակերպիչների հետ: Հաղորդակցությունը երկկողմ գործընթաց է՝ երկխոսությունը հնարավորություն կտա ոստիկանությանը մատնանշել պլանավորված հավաքի հետ կապված հնարավոր մտահոգությունները և հասկանալ կազմակերպիչի կարիքներն ու մտահոգությունները: Լավ գործելաոճ է այն, երբ ռազմավարական հրամանատարը վաղ փուլում նշանակում է ոստիկանության ծառայող, ում խնդիրն է վստահության մթնոլորտ ձևավորել կազմակերպիչների հետ պլանավորման ընթացքում և, ըստ անհրաժեշտության, ապահովել կազմակերպիչների կապը օպերատիվ և մարտավարական հրամանատարների հետ: Կարող է նաև նպատակահարմար

լինի հրամանատարական թիմի հետ հանդիպման հրավիրել հավաքի կազմակերպիչին՝ քննարկելու բոլոր մտահոգությունները և ապագա հավաքների համար վստահություն ձևավորելու նպատակով:

Միջոցառման ընթացքում ոստիկանության հրամանատարները կարող են տեղեկություններ հավաքել կազմակերպիչների հետ կապի, տեղում իրենց տեսածի կամ տեսախցիկների միջոցով: Մշտադիտարկումը և սոցիալական ցանցերի (օրինակ՝ Թվիթերի և Ֆեյսբուքի) միջոցով հաղորդակցությունը հավաքի մասին կարող են ոստիկանության համար օգտակար գործիք լինել: Սոցիալական ցանցերը կարող են օգտագործվել ոչ միայն իրավիճակային իրազեկման նպատակով, այլև միջոցառման մասին թարմացված տեղեկություններ տարածելու, մարդկանց հանգստացնելու և հնարավոր ապատեղեկատվության դեմ պայքարելու համար:

Երկխոսություն. Որոշ դեպքերում կազմակերպիչները չեն ցանկանում կամ նպատակահարմար չեն համարում խոսել ոստիկանության հետ և պետք է բացառել որևէ պարտադրանք այս հարցում: Թեպետ ոստիկանությունը միշտ պետք է շեշտի, որ պատրաստ է երկխոսել բոլոր ցանկացողների հետ, կազմակերպիչների հրաժարումը չի կարող ոստիկանության կողմից հավաքն արգելելու կամ խիստ սահմանափակելու հիմք ծառայել:

Եթե հավաքի կազմակերպիչների և ոստիկանության միջև վստահությունը թույլ է, ապա կազմակերպիչների հետ երկխոսություն ձևավորելու համար ոստիկանության հրամանատարները պետք է ձգտեն գտնել հաղորդակցության այլ ուղիներ: Ոստիկանությունը կարող է նկատի առնել կապի այլընտրանքային մեթոդների օգտագործման հավանականությունը, օրինակ՝ քննարկումներ հեռախոսազրույցով, էլեկտրոնային հաղորդակցության միջոցներով կամ միջնորդի՝ իրավական կամ քաղաքական ներկայացուցչի կամ հասարակական կազմակերպության միջոցով: Միգուցե սա հաղորդակցության իդեալական ձևը չէ, սակայն նախընտրելի է հաղորդակցության ի սպառ բացակայությունից:

Եթե հնարավոր չէ կապ հաստատել կազմակերպիչների հետ, ոստիկանությունը կարող է ձգտել կապ հաստատել մամուլի կամ սոցիալական ցանցերի հետ և նախքան հավաքը հստակ ուղերձներ հղել ոստիկանության մտադրությունների մասին: Հրամայական է, որ ուղերձը լինի այն մասին, որ ոստիկանությունը մտադիր է աջակցել բոլոր խաղաղ հավաքներին և միաժամանակ ապահովի հասարակական կարգի պահպանումը: Ուղերձը պետք է փոխանցվի հավաքի կազմակերպիչների համար հուսադրող և համոզիչ կերպով: Հնարավոր է՝ ոստիկանության հրամանատարները ցանկություն ունենան պարզաբանել, թե որն է խաղաղ հավաքը, և նշել, որ հավաքի կազմակերպիչների կամ մասնակիցների կողմից ատելության կամ բռնության հրահրումը գործող օրենքների խախտում է:

Շահագրգիռ կողմեր. Վաղ փուլում ռազմավարական հրամանատարը պետք է որոշարկի և կապ հաստատի հավաքի ազդակիր այլ կարևոր շահակիրների հետ: Բիզնեսների և բնակիչների հետ նախօրոք հաստատված կապը հնարավորություն կտա մարդկանց մշակել այլընտրանքային մեխանիզմներ, ինչը նվազագույնի կհասցնի միջամտությունն իրենց առօրյային: Շահակիրները պետք է նաև տեղեկացվեն, որ նույնիսկ խաղաղ հավաքը կարող է ժամանակավորապես խանգարել, խափանել կամ խոչընդոտել երրորդ կողմի գործունեությունը, դրսևորել զայրացուցիչ կամ վիրավորական վարքագիծ:

Ոստիկանությունը կարող է նաև կապ հաստատել քաղաքական գործիչների, կուսակցությունների և իշխանության այլ մարմինների հետ, որոնք կարող են կարևոր դերակատարում ունենալ որոշակի հանրային հավաքներից առաջ հանրային լարվածությունը մեծացնելու կամ թուլացնելու գործում: Սակայն կարևոր է նաև, որ ոստիկանությունը պահպանի անկախությունը քաղաքական ազդեցություններից և ընկալվի որպես անկախ մարմին: Ոստիկանությունը պետք է երաշխավորի, որ քաղաքական կուսակցությունների հետ երկխոսության շրջանակում ներգրավվեն ներկայացուցիչներ քաղաքական ամբողջ սպեկտրից:

ԶԼՄ-ներ. Լրատվամիջոցների հետ մասնագիտական հարաբերությունները կարևոր են ոստիկանության բոլոր ծառայությունների համար: Ոստիկանությունը պետք է հիշի, որ լրատվամիջոցներն անկախ մարմիններ են և պարտավոր չեն ներկայացնել ոստիկանամետ տեսակետներ: Միաժամանակ, եթե լրատվամիջոցները հասկանում են ոստիկանության օրինական նպատակները, դրանց լուսաբանումը կարող է նպաստել միջոցառման խաղաղ ընթացքին: Եթե նպատակահարմար է, կարելի է նախքան հավաքը կազմակերպել մամուլի հետ ճեպազրույց և նախանշել ռազմավարական մտադրությունները, ինչը կարող է օգնել խաղաղ հավաքի անցկացմանը: Մեդիա ռազմավարության փոփոխությունը կամ իրականացումն իրական ժամանակով ապահովելու համար կարող է նպատակահարմար լինել ֆունկցիոնալ օպերատիվ հրամանատարներից մեկին նշանակել լրատվամիջոցների հետ կապերի պատասխանատու:

Խոշոր կամ բարդ միջոցառումների դեպքում հարկ է նկատի առնել մեդիա խորհրդատու նշանակելու հարցը՝ միջոցառման հանդեպ լրատվամիջոցների հետաքրքրության վերաբերյալ հրամանատարական խմբին տեղեկություններ տրամադրելու, լրատվամիջոցների հետ որպես կոնտակտային անձ հանդես գալու և մամլո հաղորդագրությունների տեքստերի վերաբերյալ խորհրդատվություն ապահովելու համար:

Ռազմավարական հրամանատարը, հետևաբար, պետք է մշակի մեդիա ռազմավարություն, որտեղ սահմանվում է՝ ինչպես և երբ է տեղեկատվություն տրամադրվելու լրատվամիջոցներին և նշվում է ԶԼՄ-ների հետ կապերի

պատասխանատուն: Լրատվամիջոցներին տրամադրվող ամբողջ տեղեկատվությունը պետք է լինի փաստացի ճիշտ: Եթե ապացուցվի, որ մամուլին տրված տեղեկատվության որևէ հատված իրականությանը չի համապատասխանում, ապա ոստիկանության ներկայացրած բոլոր տեղեկությունները կասկածի տակ կդրվեն: Եթե ոստիկանության աշխատակիցը լիարժեք չի տիրապետում տրված հարցի պատասխանին, նախընտրելի է ասել այդ մասին, քան տալ հնարավոր սխալ պատասխան:

Մեդիա ռազմավարությունը պետք է բաժանվի երեք մասի՝ նախքան միջոցառումը, դրա ընթացքում և դրանից հետո, և այն կարող է՝

- Օժանդակել հանրային անվտանգության հարցերում,
- Հասարակությանը կենսական տեղեկատվություն տրամադրել,
- Նպաստել վստահությանը ոստիկանության հանդեպ,
- Նպաստել հանցագործությունների նախականխմանը,
- Նպաստել ոստիկանության գործողությունների ընկալմանը:

Ոստիկանությունը, որպես լավագույն գործելակերպի դրսևորում, պետք է ԶԼՄ-ների համար՝

- Ապահովի մեկ կոնտակտային անձ,
- Չսպասելով հարցերի՝ կազմակերպի տեղեկությունների տրամադրման կանոնավոր ճեպազրույցներ,
- Ստեղծի մեդիա կենտրոն, որտեղ տեղի կունենան ճեպազրույցները,
- Նախքան հավաքը տեղեկատվություն տրամադրի դրա մասին:

Շատ կարևոր է, որ հրամանատարական բոլոր մակարդակները տեղեկացվեն մեդիա ռազմավարության մասին և իրենց հայտնի լինի կոնկրետ օպերատիվ հրամանատարը կամ մամլո խոսնակը, ում կարող են զանգահարել ԶԼՄ-ների հետ հաղորդակցվելու համար:

Հաղորդակցություն

Կարևոր է, որ ոստիկանությունը հնարավորություն ունենա վաղ փուլում տեղեկություններ հավաքել հավաքի հավանական մասնակիցների, նրանց շրջանակի և բազմազանության մասին: Սա կարևոր է արդյունավետ պլանավորում ապահովելու, պատշաճ ռեսուրսներ նախատեսելու և վաղ փուլից կարևոր խմբերի և կազմակերպությունների հետ կապ հաստատելու համար:

Ռիսկերի գնահատում

Հնարավոր ռիսկերը և վտանգները գնահատելիս՝ ռազմավարական հրամանատարը պետք է միշտ նկատի առնի զանազան հնարավոր սցենարները, որոնք կարող են իրականություն դառնալ մինչև հավաքը և դրա ընթացքում: Սցենարների վրա կարող են ազդել տարբեր գործոններ, այդ թվում՝ ներկաների հնարավոր քանակը, նրանց քաղաքական դիրքորոշումները, հավաքի նպատակը, նրանց կապը միաժամանակ տեղի ունեցող այլ միջոցառումների հետ (օրինակ՝ պետության ղեկավարների այցեր, գագաթաժողովներ), հակընդդեմ ցույցերի առկայությունը, մոտակայքում այլ միջոցառումների առկայությունը, հավաքի վայրը և երթուղին (եթե երթ է լինելու) և օրվա ժամը, եղանակային պայմանները և հնարավոր կարևորություն ունեցող այլ գործոնները:

Տեղեկությունները և օպերատիվ-հետախուզական տվյալները ռիսկերի գնահատման գործընթացի կարևոր տարրեր են: Ռազմավարական հրամանատարը պարտավոր է ապահովել, որ միջոցառման կառավարման իր ղեկավարած օպերացիայի մաս կազմի նաև օպերատիվ-հետախուզական պատշաճ գործառույթը և արդյունավետ կապ լինի տվյալների կազմակերպման և հրամանատարական խմբի միջև, ինչը կապահովի անհրաժեշտ տեղեկատվության հավաքումը և դրա փաստացի օգտագործումը որոշումների կայացման գործընթացում:

Ռազմավարական մտադրություններ

Միջոցառմանը նախապատրաստվելու ընթացքում ռազմավարական պլանի ռազմավարական մտադրությունները մշակելիս՝ ռազմավարական հրամանատարը պետք է միշտ առաջնորդվի ռազմավարական չորս սկզբունքներով՝ գիտելիք, աջակցում, հաղորդակցություն և տարբերակում:

Ռազմավարական պլան. Հավաքի հետ վաղ աշխատանքներ սկսելուց և հնարավոր ռիսկերը հատկորոշելուց հետո՝ ռազմավարական հրամանատարը մշակում է ռազմավարական պլան, որը բխում է ընդհանուր ռազմավարությունից: Ռազմավարությունը հակիրճ, գրավոր փաստաթուղթ է, որը պետք է լինի դինամիկ և ենթակա լինի վերանայումների ընթացիկ սպառնալիքների, ռիսկերի գնահատման ու վերլուծության հիման վրա: Ռազմավարական մտադրությունները, որոնք սահմանում են ոստիկանության դերը և ռազմավարական հրամանատարի պատկերացմամբ միջոցառման ընթացքում ոստիկանության գործողությունները, պետք է լինեն հստակ և որոշակի՝ թյուրըմբռնումները բացառելու համար: Դրանք պետք է պարբերաբար վերանայվեն, որպեսզի հանգամանքների ցանկացած փոփոխության դեպքում լինեն համարժեք: Ռազմավարական մտադրությունների

շարքին կարող են պատկանել մասնակիցների, ոստիկանության աշխատակիցների և հանրության անվտանգության ապահովումը, հավաքից առաջ, դրա ընթացքում և դրանից հետո հանցագործությունների նախականխումը և բացահայտումը, հնարավոր իրավախախտների ձերբակալման քաղաքականությունը[21], ուրիշների իրավունքներին և ազատություններին ցանկացած միջամտություն նվազագույնին հասցնելը:

Ռազմավարական մտադրությունները սահմանելիս հրամանատարը կարող է նկատի առնել հետևյալը՝

- Հավաքի վայրը, մասշտաբը, ժամանակը և չափը,
- Հավաքի տեսակը (օրինակ՝ երթ, հանրահավաք, շքերթ),
- Հավաքի մասնակիցների բազմազանությունը (օրինակ՝ կանանց և տղամարդկանց, չափահասների և երեխաների, ֆիզիկապես առողջ և հաշմանդամություն ունեցող անձանց համամասնությունը),
- Ոստիկանության դերը (օրինակ՝ աջակցություն խաղաղ հավաքին կամ բռնի հավաքի զսպում, օբյեկտների պաշտպանություն),
- Մամուլի ուշադրության մակարդակը (օրինակ՝ կարո՞ղ է արդյոք ապագա հավաքների համար օրվա ընթացքում բազմապատկվել ԶԼՄ լուսաբանումների ազդեցությամբ),
- Ոստիկանության գործողությունների ընդհանուր հետևանքները (օրինակ՝ հետևանքները համայնքների կամ այլ միջոցառումների համար),
- Հավաքի հնարավոր ազդեցությունը ընդհանուր բնակչության և որոշակի փոքրամասնական համայնքների վրա,
- Նմանօրինակ միջոցառումների պատմությունը,
- Ռիսկերի բոլոր գնահատումների արդյունքները:

Երբ երկու մտադրությունների միջև կա հակասություն, կամ հրամանատարի կարծիքով մեկը պարունակում է ավելի մեծ ռիսկեր, հարկ է այդ մասին պարզաբանում մտցնել ռազմավարական պլանի մշակման ընթացքում: Յուրաքանչյուր միջոցառում յուրահատուկ է և պետք է գնահատվի՝ առանձնահատկություններից ելնելով: Ռազմավարական մտադրությունները պետք է հասկանալի լինեն միջոցառման պլանավորմանը և օպերատիվ ծավալմանը մասնակցող ոստիկանության բոլոր աշխատակիցներին: Ռազմավարական մտադրությունները պետք է սպասվող արդյունքները սահմանեն որպես նախընտրելի, ընդունելի և անընդունելի: Սահմանելով հնարավոր արդյունքները՝ ռազմավարական հրամանատարը պետք է կարողանա ձևավորել արտակարգ պլաններ՝ առաջացող անընդունելի արդյունքների խնդիրը լուծելու համար:

---

21 Որոշ երկրներում պահանջվում է նախնական խորհրդակցություն դատախազի հետ:

Գծապատկեր 3. Ռազմավարական արդյունքների օրինակ

Նախընտրելի արդյունք	Ընդունելի արդյունք	Անընդունելի արդյունք
Միջոցառումն անցնում է խաղաղ, առանց լուրջ միջադեպերի:	Թեթև անկարգություն, խնդիրը լուծվել է՝ առանց հետագա բռնություն առաջացնելու:	Լայնածավալ անկարգություններ, գույքին լուրջ վնաս է հասցվել, սպանվել կամ վիրավորվել են բազմաթիվ ոստիկաններ և քաղաքացիներ:

Ռազմավարական հրամանատարը կարող է նաև վաղ փուլում ընտրել ու նշանակել օպերատիվ հրամանատար և հրահանգել նրան, ռազմավարական նպատակները ձևակերպելու ընթացքում խորհրդակցել նրա, համապատասխան խորհրդականների, հավաքի կազմակերպիչների և հիմնական շահագրգիռ կողմերի հետ:

Ոստիկանության գործողությունների պարամետրերը. Ռազմավարական հրամանատարը ցուցումներ է տալիս օպերատիվ հրամանատարին ինչպես վարվել մի շարք խնդիրների դեպքում: Հնարավոր խնդիրներից են՝

- Հավաքը շարունակվում է սպասվածից երկար և, սովորաբար, պետք է շարունակել աջակցել դրան, հաշվի առնելով հնարավոր ազդեցությունն այլ գործոնների, օրինակ՝ այլ հավաքների և հանրային միջոցառումների կամ բացասական ազդեցությունն ուրիշների իրավունքների վրա,
- Հատուկ նշանակության վայրերը (կառավարության մասնաշենքեր, պաշտամունքի վայրեր, հուշահամալիրներ), որոնք ունեն խորհրդանշական կամ ռազմավարական նշանակություն,
- Հատուկ պահպանություն պահանջող կարևոր անձինք,
- Մարտավարական տարբերակներ, որոնք չպետք է կիրառվեն զանազան պատճառներով, օրինակ՝ CS գազի օգտագործման արգելք (2-քլորոբենզալմալոնոնիտրիլի միացություն, որը հայտնի է որպես արցունքաբեր գազ),
- Սահմանել քննության պարամետրերը, ապահովել քննչական խմբին անհրաժեշտ ռեսուրսներով և ամուր կապերով օպերատիվ-հետախուզական խմբի հետ,
- Հավաքի ընթացքում կատարած հանցագործություններին արձագանքելու այլ ձևեր:

Ռազմավարական պլանում ռազմավարական հրամանատարը պետք է նաև սահմանի ոստիկանության գործունեության ոճը (հավաքի հետ շփման ձևը, այսինքն՝ առճակատումից զերծ, աջակցող): Ոստիկանության գործունեության ոճը կարող է անմիջականորեն ազդել հավաքի մասնակիցների, նրանց և

ոստիկանների միջև հարաբերությունների զարգացումների վրա, նաև նպաստել երկխոսությանը կամ կասկածներ առաջացնել և մեծացնել լարվածությունը: Առճակատման տանող ոստիկանական գործելաոճը, որը սահմանափակում է տեղաշարժը, ծավալում է հատուկ միջոցներով զինված ոստիկանության ուժեր և այլն, կարող է հանգեցնել լարվածության և իրավիճակի հնարավոր սրման ու բռնության, եթե անգամ հավաքը խաղաղ էր սկսվել:

Ռեսուրսներով ապահովում. Հավաքի ընթացքում ոստիկանության անվտանգ աշխատանքը երաշխավորելու համար ռազմավարական հրամանատարը պարտավոր է ապահովել համարժեք անձնակազմ (այդ թվում՝ շարային աշխատակիցներ, աջակցող դեր ունեցողներ [քննչական և օպերատիվ-հետախուզական]) և սպառազինություն: Նա պետք է հաշվի առնի մատչելի բոլոր ռեսուրսները, ոստիկանության պատասխանատվության այլ ոլորտների պահանջները և անձնակազմի պատրաստությունն ու հմտությունները: Չափազանց կարևոր է, որ ուժի (այդ թվում՝ ջրցանների կամ արցունքաբեր գազի հրացանների) հնարավոր կիրառման հեռանկարով հավաքի վայրում ծալալվող ոստիկանները լինեն պատշաճ պատրաստված, ստանան հրամանատարական և վերահսկողական արդյունավետ կառույցի աջակցությունը և հստակ հրահանգներ ստանան ուժի առանձին տեսակների կիրառման պատեհ պահի մասին:

Վերջապես, ռազմավարական հրամանատարը պարտավոր է տեղեկացնել օպերատիվ հրամանատարին ռազմավարական մտադրությունների և ռազմավարական պլանի այլ բաղադրիչների մասին, որ օպերատիվ հրամանատարը կարողանա կազմել օպերատիվ պլանը: Ռազմավարական հրամանատարի ստացած նոր տեղեկությունները կարող են պահանջել վերանայել ռազմավարական մտադրությունները, և այդ դեպքում թարմացված տեղեկությունները պետք է հնարավորինս շտապ փոխանցվեն մյուս բոլոր աշխատակիցներին:

Ստուգաթերթիկ
Հրամանատարական խմբի պարտականությունները
ռազմավարական պլանավորման փուլում

<u>Ռազմավարական հրամանատարությունը պետք է՝</u>

- ✓ Հավաքին պատրաստվելու ընթացքում առաջնորդվի չորս հիմնական ռազմավարական սկզբունքներով՝ գիտելիք, աջակցում, հաղորդակցություն և տարբերակում և որոշումների կայացման մոդելով.
- ✓ Ստուգի տեղեկությունները միջոցառման, կազմակերպիչների մասին և այլն,
- ✓ Երկխոսություն սկսի կազմակերպիչների և շահագրգիռ կողմերի հետ,
- ✓ Ձևավորի մեդիա ռազմավարություն,
- ✓ Սկսի հատկորոշել ռիսկերն ու վտանգները,
- ✓ Սահմանի օպերատիվ պարամետրերը և ոստիկանության գործելաոճը,
- ✓ Սահմանի ռազմավարական մտադրությունները,
- ✓ Նշանակի և հրահանգի օպերատիվ հրամանատարին,
- ✓ Ապահովի համարժեք ռեսուրսների տրամադրումը,
- ✓ Մշակի ռազմավարական պլան:

ԳԼՈՒԽ 6. ՕՊԵՐԱՏԻՎ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓՈՒԼ

Ռազմավարական պլանը ստանալուց հետո, օպերատիվ հրամանատարը ստանձնում է նախապատրաստական աշխատանքների հաջորդ փուլի պատասխանատվությունը: Օպերատիվ հրամանատարը մշակում է գրավոր օպերատիվ պլան, որտեղ բացատրվում է, թե ինչպես է ոստիկանությունը մտադիր աջակցել խաղաղ հավաքին: Ռազմավարական պլանի օրինակով՝ օպերատիվ հրամանատարը պլանը պատրաստելիս առաջնորդվում է գիտելիքի, աջակցման, հաղորդակցության և տարբերակման սկզբունքներով: Պլանում նշվում են ոստիկանության կոնկրետ ռեսուրսները և աշխատակիցները, ինչպես նաև նրանց բաշխումն ըստ հավաքի ընթացքում կոնկրետ օպերատիվ գործողությունների: Օպերատիվ տարբերակները գործադրվում են ոստիկանության համապատասխան նպատակներն իրագործելու համար, որոնք իրենց հերթին կապված են ռազմավարական պլանի հետ:

Որոշ իրավիճակներում անհրաժեշտ է նշանակել մի քանի օպերատիվ հրամանատարներ: Այս դեպքում հարկ է ապահովել պատասխանատվության հստակ սխեմա և պարտականությունների հստակ բաժանում օպերատիվ հրամանատարության և ռազմավարական ու մարտավարական հրամանատարությունների միջև: Եթե խնդիրը վերաբերում է երկու հրամանատարություններին, ապա հնարավոր են որոշումների կայացման ուշացումներ և շփոթություն կապված նրա հետ, թե ով է պատասխանատու ոստիկանության կոնկրետ գործողության համար:

- **Օպերատիվ պլանում** նախանշվում է, թե ինչպես է ոստիկանությունն իրագործելու ռազմավարական մտադրությունները և, ավելի կոնկրետ, ինչպես է ոստիկանությունը սպասարկելու հավաքը:
- **Ոստիկանության գործողությունների նպատակները** բխում են ռազմավարական մտադրություններից և կարող են ընդգրկել հատուկ նշանակության օբյեկտների կամ առանձին անձանց պաշտպանությունը կամ հանրային տրանսպորտի աշխատանքի խափանման նախականխումը: Սկզբնական նպատակը պետք է մշտապես լինի հավաքին աջակցելը, սակայն պետք է դիտարկվի ոստիկանության համաչափ արձագանքումը հնարավոր անկարգություններին կամ բռնությանը:
- **Օպերատիվ տարբերակները** ոստիկանության գործունեության նպատակներն իրագործելու համար օգտագործվող միջոցներն են: Օրինակ՝ հավաքին աջակցելու ոստիկանության նպատակին հասնելու համար օպերատիվ հրամանատարը կարող է որպես օպերատիվ տարբերակ ներգրավել համայնքային ոստիկաններին: Մյուս կողմից, երբ խոսքը գնում է բռնի հավաքի մասին, ոստիկանության գործունեության նպատակը կարող է լինել ցրումը, իսկ ծայրահեղ հանգամանքներում, օպերատիվ տարբերակները կարող են ընդգրկել արցունքաբեր գազի և/կամ ջրցանների օգտագործումը:

Ռազմավարական պլանն օպերատիվի վերածելու ընթացքում օպերատիվ հրամանատարը պետք է օգտագործի բոլոր նոր տեղեկությունները և օպերատիվ-հետախուզական տվյալները, վերանայի բոլոր ռիսկերը և, ըստ անհրաժեշտության, առաջարկի ռազմավարական պլանի փոփոխություններ: Անհրաժեշտ բոլոր փոփոխությունները պլանում պետք է կատարվեն, նախքան ոստիկանությունը կհստակեցնի կամ կսահմանի իր գործունեության նպատակները:

Գիտելիք

Նախքան ոստիկանության գործունեության՝ իրավիճակին առավել համապատասխանող նպատակներ որոշելը, օպերատիվ հրամանատարը պետք է հավաքի վերաբերելի և ամենաթարմ տեղեկությունները: Ռազմավարական հրամանատարը տրամադրել է հիմնական տեղեկությունները, սակայն այժմ պահանջվում են լրացուցիչ մանրամասներ տեղանքի ֆիզիկական բնութագրիչների, հավաքի սկզբի և ավարտի կոնկրետ ժամերի, հավաքի պատճառների, հանրային հետաքրքրության, մասնակիցների հավանական քանակի, հնարավոր ընդդիմության, հնարավոր ներկա մասնակիցների և խմբերի մտադրության մասին:

Հարկ է տեղեկություններ հավաքել հետևյալի հարցերի վերաբերյալ՝

- Ինչո՞ւ է տեղի ունենում հավաքը: Ու՞մ օգտին է կամ ու՞մ դեմ: Կարող է արդյո՞ք ոստիկանության ներկայությունը բորբոքել ցուցարարներին կամ կողմնակի դիտորդներին: Հավանական է արդյո՞ք, որ հավաքի թեման առաջացնի հասարակության այլ խմբերի արձագանքը (բռնության դրսևորմամբ):
- Ովքե՞ր են մասնակցելու հավաքին: Ի՞նչ է հավաքի մասնակիցների մասին հայտնի նախապատմությունը: Ինչպիսի՞ն է տարիքային և գենդերային կազմը: Ի՞նչ օպերատիվ-հետախուզական տվյալներ կան մտադրությունների մասին: Ի՞նչ կազմ ունի տեղական համայնքը: Ի՞նչ կազմ ունեն կողմնակի դիտորդները (անցորդները): Կլինեն արդյո՞ք հակընդդեմ ցուցարարներ կամ թշնամաբար տրամադրվածներ:
- Որո՞նք են մասնակիցների մտադրությունները (նկատի առեք, որ հավաքի մասնակիցների և խմբերի մտադրությունները կարող են տարբերվել): Կան արդյո՞ք օպերատիվ-հետախուզական տվյալներ երկրորդային մտադրությունների մասին: Հավաքին մասնակցող որոշ ենթախմբեր կարող է ունենան ևս մեկ բողոքի ակցիա կամ ցույց կազմակերպելու մտադրություն:
- Որտե՞ղ է տեղի ունենալու հավաքը: Կան արդյո՞ք կարևոր վայրեր, որոնք կարող են դառնալ միջոցառման, որոշ մասնակիցների կամ հակընդդեմ ցուցարարների թիրախ: Երթևեկության հետ կապված ի՞նչ մտահոգություններ կան: Ո՞րն է նախատեսված երթուղին:

- Ե՞րբ է տեղի ունենալու հավաքը: Օրվա ո՞ր ժամին և տարվա ո՞ր եղանակին: Ի՞նչ են եղանակային պայմանները: Ի՞նչ հետևանքներ են առաջանում տրանսպորտի աշխատանքի համար (արդյո՞ք հավաքի ավարտին կլինի հանրային տրանսպորտ):
- Ինչպե՞ս են հավաքի վայր հասնելու անհատները: Ինչպե՞ս են նրանք ծրագրում հեռանալ: Գոյություն ունե՞ն հավաքի վայրից ելքի հարմար ուղիներ և տրանսպորտ: Հավաքը լինելու է ստատիկ միջոցառում, թե՞ երթ: Ի՞նչ կոնստրուկցիաներ են հավաքվելու (ելույթ ունեցողների համար հարթակ կամ բարձրախոսներ):

Այս տեղեկությունները կհամալրեն ռազմավարական հրամանատարության արդեն իսկ տրամադրած օպերատիվ-հետախուզական տվյալները: Եթե երևան են գալիս նոր տեղեկություններ, ապա օպերատիվ հրամանատարը պետք է փոխանցի դրանք ոչ միայն ներքև՝ մարտավարական հրամանատարներին, այլ նաև վերև՝ ռազմավարական հրամանատարությանը, որպեսզի համապատասխան ճշգրտումներ կատարվեն ռազմավարական պլանում կամ հատկացվեն լրացուցիչ ռեսուրսներ:

Տեղեկությունները հավաքելու կարևոր մաս է կազմում հավաքի անցկացման վայրում տեղանքի փաստացի տեղագրական ու աշխարհագրական ուսումնասիրությունը: Հակառակ դեպքում կարող են դուրս մնալ որոշ կարևոր գործոններ, օրինակ՝ երևեկության սահմանափակումները, շենքերի վերանորոգման աշխատանքները, ճանապարհային աշխատանքները կամ այլ խոչընդոտներ:

Ռիսկերի գնահատում

Ռիսկերի և վտանգների նախնական հատկորոշումը պետք է կատարի ռազմավարական հրամանատարը: Սակայն ռիսկերի գնահատումը լիարժեք կիրառվում է օպերատիվ պլանավորման ընթացքում: Հաշվի առնելով հասանելի ողջ տեղեկատվությունը՝ օպերատիվ հրամանատարը պետք է ունակ լինի հատկորոշել հավաքի ընթացքում ոստիկանության գործունեության վրա ազդող հնարավոր ռիսկերի և վտանգների մեծ մասը: Ռիսկերի շարքում կարող են լինել հավաքը խանգարելու կամ բռնություն հրահրելու մտադրություն ունեցող խմբերի կամ անհատների ներկայությունը, իսկ վտանգը կարող է լինել ցանկացած երևույթ, որը կարող է դառնալ վնասի կամ վնասվածքի պատճառ (օրինակ՝ տրանսպորտի երթևեկությունը ծանրաբեռնված փողոցով կամ տարածքներ, որտեղ մարդկանց համար կա սայթաքելու կամ ընկնելու վտանգ, օրինակ՝ աստիճաններ կամ ցածր ցանկապատ):

Ռիսկերի և դրանց հետ կապված սցենարների հատկորոշման հիման վրա հրամանատարը կարող է որոշել հավաքի ընթացքում հավանաբար առաջացող ամենակարևոր խնդիրների առաջնահերթությունները և համապատասխան վերահսկողական միջոցներ նախատեսել այդ ռիսկերը մեղմելու կամ վերացնելու համար: Կարող է հարկ առաջանալ, օրինակ, տրանսպորտային հոսքը հսկելու նպատակով պատնեշներ տեղադրելու և մարդկանց վնասվածքներ հասցնելու վտանգը վերացնելու, սայթաքելու վտանգը նվազեցնելու նպատակով միջոցներ ձեռնարկելու, անհատների կամ փոքր խմբերի բռնի վարքի դրսևորման հավանականությունը նվազեցնելու նպատակով որոշակի տեղերում համազգեստով ոստիկաններ տեղակայելու համար:

Ամբոխի ներսում կանանց նկատմամբ սեռական ոտնձգությունների մասին տեղեկությունները ոչ միայն օգտագործվում են կանանց՝ բողոքի ակցիաներին մասնակցելուց հետ պահելու, այլև բուն ցուցարարներին հեղինակազրկելու համար: Իրավախախտները հաճախ համարում են, որ նման հանցագործությունների դեպքում մնալու են անպատիժ: Ոստիկանության համար կարևոր է հստակ նշել, որ չի հանդուրժելու սեռական բռնությունը, և այն պատժվելու է: Հնարավորության դեպքում ոստիկանությունը պետք է նախօրոք կապ հաստատի կանանց խմբերի և այլոց հետ և իրազեկի կանանց անվտանգության մասին: Հավաքի ընթացքում կանանց անվտանգությունն ապահովելու նպատակով նրանց պետք է մշտադիտարկեն կին և տղամարդ ոստիկաններ: Երբ ոստիկանությունը ցույց է տալիս, որ լուրջ է վերաբերվում նման ռիսկերին՝ դրանց ի հայտ գալու հավանականությունը նվազում է:

Դեպքեր են եղել, երբ ոստիկանությունը կամ անվտանգության ուժերն իրենք են հրահրել սեռական բռնություն, ինչը հատկապես բնորոշ է նահապետական հասարակություններին, որտեղ կա համոզվածություն առ այն, որ կինն անելիք չունի փողոցային բողոքների ժամանակ: Քանի որ այս խնդիրը գնալով ավելի մտահոգիչ է դառնում, կարևոր է նկատի առնել նմանօրինակ հարցերը պլանավորման փուլում և կանանց համար նախատեսել սեռական բռնության մասին հավաքի ընթացքում կամ դրանից հետո հաղորդում տալու մեխանիզմ:

Աջակցում

Օպերատիվ-հետախուզական տվյալները և ռիսկերը դիտարկելով՝ օպերատիվ պլանը հստակ ցույց կտա, թե ինչպես է ոստիկանությունը պատրաստվում իրագործել ռազմավարական մտադրությունները: Օպերատիվ հրամանատարի պարտականությունն է վերլուծել ամբողջ միջոցառումը և որոշել՝ երբ են կիրառվելու հետևյալ նպատակները՝ միջոցառման անվտանգ ընթացքին աջակցելու համար:

Ոստիկանության համար մեկնակետը միշտ էլ այն է, թե ինչպես լավագույնս պլանավորել աջակցումը, որ հնարավոր լինի բավարարել կազմակերպիչների սպասելիքները: Նպատակը պետք է լինի խաղաղ հավաքին աջակցելը նույնիսկ այն դեպքերում, երբ մասնակիցները չեն պահպանում ներպետական օրենսդրության բոլոր պահանջները: Թեպետ կազմակերպիչը կարող է խախտած լինել օրենքը, սակայն հավաքի անհատ մասնակիցները կարող են անտեղյակ լինել դրա մասին: Բոլոր դեպքերում, դատական հետապնդումը կարելի է նախաձեռնել միջոցառումից հետո, իսկ միայն իրազեկման պահանջը չբավարարելը երբեք չի կարող հավաքի դեմ ուժ կիրառելու հիմք ծառայել:

Սահմանափակումների կիրառում. Եթե կայացվել է հավաքի նկատմամբ սահմանափակումներ կիրառելու որոշում (իրավասու մարմնի կողմից նախքան միջոցառումը կամ հավաքի ընթացքում ոստիկանության կողմից), ապա նմանօրինակ բոլոր որոշումները պետք է համապատասխանեն մարդու իրավունքների վերը քննարկված սկզբունքներին: Ոստիկանությունը պետք է միշտ ներկայացնի կազմակերպիչներին սահմանափակումներ առաջարկելու կամ կիրառելու հստակ հիմնավորումը և առաջարկի նրանց ողջամիտ այլընտրանքներ այն դեպքերում, երբ սահմանափակումը լուրջ բեռ է առաջացնում հավաքի համար: Միշտ էլ ավելի նախընտրելի է կազմակերպիչների հետ նախապես քննարկել հնարավոր սահմանափակումները, քան առանց նախապես զգուշացնելու հարկադրել դրանք: Որոշ սահմանափակումներ հնարավոր է հեշտությամբ բանակցել, օրինակ՝ վտանգավոր ճանապարհներից խուսափելը, կարևոր օբյեկտների արգելափակումը կանխելը կամ հավաքի ժամը փոխելը: Սակայն այլ սահմանափակումների առաջարկները կարող են մերժվել և, հետևաբար, օրինական կարգով բողոքարկվել կազմակերպիչի կողմից: Հետևաբար, կարևոր է, որ կազմակերպիչները հնարավորինս արագ տեղեկացվեն օպերատիվ պլանավորման փուլում հատկորոշված բոլոր սահմանափակումների մասին: Նախքան սահմանափակումներ կիրառելը, ոստիկանությունը պետք է նկատի առնի հետևյալը՝

- *Կանոնակարգման և սահմանափակման օրինական հիմքերը.* Մարդու իրավունքների միջազգային գործիքները սահմանում են սահմանափակման օրինական հիմքերը: Դրանք չպետք է փոխլրացվեն ներպետական օրենսդրությամբ նախատեսված լրացուցիչ հիմքերով: Սակայն օրինական հիմքերն անհրաժեշտ է մեկնաբանել ներպետական ենթաօրենսդրական կամ իրավասու մարմնի ակտերով՝ տեղական իրավիճակից ելնելով:
- *Հանրային տարածք.* Հավաքները հանրային տարածքի օգտագործման նույնքան օրինական ձև են, որքան ցանկացած առևտրային գործունեություն կամ տրանսպորտային միջոցների և հետիոտների տեղաշարժ: Սա պետք է հաշվի առնել, երբ քննարկվում է սահմանափակման անհրաժեշտությունը:
- *Բովանդակությունից բխող սահմանափակումներ.* Հավաքները կազմակերպվում են ընդհանուր կարծիք արտահայտելու նպատակով և, հետևաբար, նպատակ ունեն փոխանցել ուղերձ: Ուղերձի տեսաձայնային բովանդակության

նկատմամբ սահմանափակումները պետք է թույլատրելիության բարձր շեմ ունենան, և ոստիկանությունը պետք է բացառապես կիրառի դրանք, եթե գոյություն ունի բռնության անմիջական սպառնալիք:

- *Տեսանելիություն և լսելիություն.* Հանրային հավաքները կազմակերպվում են որոշակի թիրախային անձի, խմբի կամ կազմակերպության ուղերձ փոխանցելու նպատակով: Հետևաբար, որպես կանոն, հավաքները պետք է կազմակերպվեն դրանց թիրախային լսարանի համար «տեսանելիության և լսելիության» տիրույթում:
- *Հավաքի ժամի, վայրի և անցկացման ձևի սահմանափակումներ.* Կարգավորող մարմնի տրամադրության տակ է փոխանցվող ուղերձին չմիջամտող հնարավոր սահմանափակումների լայն շրջանակ: Հավաքի ժամի, վայրի կամ անցկացման ձևի նկատմամբ սահմանափակումներ կիրառելու դեպքում պետք է առաջարկվեն ողջամիտ այլընտրանքներ:

Ռազմավարական հրամանատարն ընդհանուր պատասխանատվություն է կրում միջոցառման համար, սահմանում է օպերացիայի ռազմավարական մտադրությունները և պարամետրերը: Նախքան միջոցառումը կիրառված բոլոր սահմանափակումները պետք է արտացոլված լինեն ռազմավարական հրամանատարի վերլուծության և համապատասխան պլանների մեջ: Միջոցառման ընթացքում սահմանափակումները (օրինակ՝ միջադեպի կամ բռնության հետևանքով) կիրառվում են օպերատիվ հրամանատարների որոշումով (և պետք է նախօրոք մանրամասն քննարկված լինեն հրամանատարական խմբի կողմից արտակարգ իրավիճակների դեպքերի վերաբերմամբ): Նման արտակարգ իրավիճակները պետք է նախապես քննարկվեն ռազմավարական հրամանատարի հետ (բացառությամբ կյանքին սպառնացող վտանգի դեպքերի), քանի որ ազդեցություն ունեն ընդհանուր պլանի և հավանաբար նաև հավաքի համար ռեսուրսների ծավալների վրա: Այդուհանդերձ, եթե իրավիճակը պահանջում է (օր.՝ կյանքին վտանգ է սպառնում), ապա նախապես մշակված արտակարգ պլաններում կարող են կատարվել փոփոխություններ:

Ոստիկանությունը միշտ պետք է հիշի, որ հավաքները, հնարավորության սահմաններում, պետք է ընթանան առանց կազմակերպիչներին հարկադրված սահմանափակումների, իսկ բոլոր սահմանափակումները պետք է լինեն իշխանությունների օրինական նպատակներին հասնելու համար նվազագույն անհրաժեշտ չափերի:

Հաղորդակցություն

Հարկ է ընդլայնել ռազմավարական հրամանատարի նախաձեռնած երկխոսությունը՝ ներգրավելով օպերատիվ հրամանատարությանը: Ոստիկանությունը պետք է ձգտի

ապահովել կոնկրետ կազմակերպիչների հետ նույն աշխատակիցների կապի մեջ լինելը: Դա կօգնի ձևավորել անձնական փոխհարաբերություններ և փոխադարձ վստահություն: Հակասական կամ շփոթեցնող ուղերձների փոխանցումից խուսափելու համար ոստիկանությունը ձգտում է մեկ և հստակ սահմանված կապուղի ապահովել արտաքին կազմակերպությունների հետ:

Մինչև օպերացիայի սկիզբը հարկ է ընտրել մարտավարական հրամանատարների, ովքեր կարող են հանդիսանալ կազմակերպիչների հետ կապերի պատասխանատուներ, և համաձայնեցնել նրանց դերերն ու պարտականությունները: Այդ ոստիկանները պետք է տիրապետեն երկխոսության, բանակցություններ վարելու և միջնորդության հմտություններին: Այս փուլում հարկ է հատուկ ուշադրություն դարձնել լեզուների և բարբառների խնդրին՝ թարգմանիչներ ներգրավելու և ամբողջ ընթացքում նրանց ներկայությունն ապահովելու համար:

Ոստիկանությունը պետք է ձգտի ապահովել երկկողմ հաղորդակցությունը: Ոստիկանությունը ոչ միայն տեղեկություններ է հավաքում խաղաղ հավաքին աջակցելու համար, այլև պատշաճ և բավարար տեղեկատվություն է տրամադրում առանցքային կողմերին՝ նրանց հնարավորություն տալով աջակցել խաղաղ հավաքներին:

Ոստիկանությունը պետք է միշտ հաշվի առնի, որ կազմակերպիչների հետ կապն էապես օգնում է բացահայտել նրանց այն ցանկությունները և մտադրությունները, որոնք կապված են միջոցառման հետ, նույնականացնել հնարավոր ռիսկերն ու սպառնալիքները և որոշել ռիսկերը հասցեագրելու և հավաքին աջակցելու ուղղությամբ ոստիկանության գործողությունները: Բաց, դեմ առ դեմ զրույցը կարող է հնարավորություններ ստեղծել նման քննարկումների արդյունքում հաջողության ձեռքբերման և փոխադարձ ընդունելի եզրակացության համար:

Համազգեստ. Ոստիկանության պատշաճ համազգեստը կարևոր դեր է խաղում հանրությանը ճիշտ ուղերձ հղելու համար: Սակայն ոստիկաններն ունեն նաև բռնի հարձակումից պաշտպանված լինելու իրավունք: Ճիշտ պահին ճիշտ համազգեստ կրելու այս նուրբ հավասարակշռությունը պետք է հիմնվի սպառնալիքների հավանականության վրա և նկատի առնի այն ռիսկը, որ ժամանակից շուտ կամ ուշ պաշտպանական սպառազինությամբ ծավալումը կարող է բռնության բռնկման պատճառ դառնալ: Անհատական պաշտպանական միջոցները կարելի է կրել համազգեստի տակ: Բոլոր համազգեստների և սաղավարտների վրա պետք է նշված լինի ոստիկանի անձնական համարը, ինչը կհեշտացնի անձի նույնականացումը, եթե վերջինս դրսևորի ոչ պատշաճ վարքագիծ, և կօգնի պաշտպանել նրան, բժշկական օգնություն ցուցաբերել և հրամանատարության հետ կապ պահպանել:

Տարբերակում

Երբ ոստիկանությունը որոշում է, թե ում հետ է պետք կապ հաստատել, հարկ է հիշել, որ հավաքին կարող են մասնակցել զանազան անհատներ և խմբեր, որոնց նպատակները և շահերը կարող են տարբերվել կազմակերպիչների նպատակներից և շահերից: Կապ հաստատելու նպատակով խմբեր փնտրելու ընթացքում հարկ է ուշադրություն դարձնել հավաքին մասնակցող հատուկ խոցելի խմբերի բացահայտմանը: Հնարավոր է անհրաժեշտություն առաջանա երկխոսության մեջ ընդգրկել տարբեր անհատների և կազմակերպությունների, որոնք կարող են զանազան կերպերով լինել հավաքի ազդակիրները:

Արտակարգ իրավիճակներ

Արտակարգ ծառայությունների հետ համագործակցությունը վաղ փուլերում հնարավորություն կտա ոստիկանության հրամանատարին անդրադառնալ արտակարգ իրավիճակների դեպքերի պլանավորմանը: Սա նշանակում է քննության առնել «ինչ կլինի, եթե»-ները, որոնք կարող են ի հայտ գալ հավաքին ոստիկանական գործողությունների ընթացքում և հանգեցնել լուրջ միջադեպի: Լուրջ միջադեպն արտակարգ իրավիճակ է, որը պահանջում է հատուկ միջոցառումների իրականացում արտակարգ ծառայության(ծառայությունների) կամ տեղական իշխանությունների կողմից: Նման իրավիճակները կարող են պայմանավորվել՝

- Մեծ թվով տուժածներ փրկելու և տեղափոխելու անհրաժեշտությամբ,
- Որևէ միջադեպի արձագանքելու համար արտակարգ ծառայությունների մեծածավալ ռեսուրսներ համախմբելու անհրաժեշտությամբ,
- Մեծ թվով անձանց մահվան և ծանր վնասվածքների սպառնալիքը կանխարգելելու նպատակով արտակարգ և օժանդակ ծառայությունների մոբիլիզացման և կազմակերպման անհրաժեշտությամբ,
- Հանրությունից և լրատվամիջոցներից մեծ թվով հարցումներին (որոնք սովորաբար ուղղված են ոստիկանությանը) պատասխանելու անհրաժեշտությամբ:

Ուշադրության արժանի հնարավոր ռիսկերի և վտանգների թվում են՝

- Հյուսվածքների պատռվածքով կամ ճզմվածքով ծանր վնասվածքները,
- Փակ տարածքներում բռնկված հրդեհները,
- Կառուցվածքների փլուզումը (երբ ելույթ ունեցողների համար ժամանակավոր բեմ կամ լսարանի համար աստիճանաձև շարքերով նստատեղեր են կառուցվում),
- Անհետաձգելի բժշկական օգնություն ցուցաբերելու անհրաժեշտությունը:

Ոստիկանության հրամանատարները պետք է գիտակցեն, որ հնարավոր են տեղական իրավիճակի չնախատեսված փոփոխություններ, որոնք կապ չունեն հավաքի ընթացքում ոստիկանության գործունեության հետ: Դրանց թվում են՝

- Ենթակառուցվածքների աշխատանքի խափանումը,
- Ճանապարհների անսպասելի փակումը,
- Եղանակային բարդ պայմանները:

Օպերատիվ տարբերակներ

Ոստիկանության գործողությունների նպատակները որոշելուց հետո օպերատիվ հրամանատարը պետք է որոշի ոստիկանական այն մարտավարությունները, որոնք գործադրվելու են դրանք իրագործելու համար: Օպերատիվ կոնկրետ տարբերակների կիրառելիությունը որոշվում է ռազմավարական հրամանատարի կողմից ռեսուրսների օգտագործման հավանական սահմանափակումների հիման վրա: Սակայն օպերատիվ հրամանատարը պետք է մշտապես նախապատվություն տա այն տարբերակներին, որոնք խրախուսում են երկխոսությունը և հավաքի խաղաղ ընթացքը (ինչը համահունչ է «ոստիկանության կողմից հասարակական կարգի ներգործուն պահպանությունն ավելի նախընտրելի է, քան անկարգություններին արձագանքումը» բանաձևին): Թեպետ ոստիկանությունը կարող է իր տրամադրության տակ ունենալ զանազան հնարավոր ռեսուրսներ, հնարավորության սահմաններում ռազմավարական մտադրություններն իրագործելու համար ոստիկանության գործունեությունը պետք է առաջնորդվի աջակցման և հաղորդակցության հիմնական սկզբունքներով:

Ուշադրության արժանի առանցքային գործոնների շարքում են՝

- Հանդերձանք (օրինակ՝ աշխատակիցները կրեն ամենօրյա համազգեստ, թե՞ հասարակական կարգի պահպանման հատուկ սպառազինություն),
- Հավաքի վայրում ծավալվող ոստիկանների քանակը,
- Նրանց ծավալման մեթոդը (օրինակ՝ քիչ թվով հետիոտն ոստիկանների չպարտադրող ներկայություն, մեքենաներով ոստիկանության մեծ ուժերի տեսանելի ծավալում, ոստիկանության զսպող տեսանելի ներկայություն խոցելի շենքերում),
- Հավաքի մասնակիցների համար տեսանելի սպառազինության և մեքենաների տեսակները,
- Տեսանելի մարտավարական միջոցները (օրինակ՝ շներ կամ ջրցաններ),
- Հրահանգման ձևը (օրինակ՝ արդյո՞ք լիարժեք ընկալման համար հրահանգման ընթացքում պահանջվում են մասնագիտական լուսանկարներ կամ տեսահոլովակներ),
- Մարտավարական որոշ միջոցների օգտագործումը, որոնք կարող են բացասաբար ազդել հավաքի վրա (օրինակ՝ ցածր թռչող ուղղաթիռներ կամ ոստիկանական շների ներգրավում),

- Ապացույցների հավաքումը,
- Հանցագործությունների մասին հաղորդումները և դրանց քննությունը,
- Ձերբակալությունների իրականացման ռազմավարությունը:

Օպերատիվ հրամանատարը պետք է միշտ նկատի առնի, որ ոստիկանության ներկայությունը կարող է նպաստել լարվածության սրմանը կամ, ընդհակառակը, մարդկանց հանգստություն ներշնչել: Մինչ ոստիկանությունը կարող է շեշտը դնել խոսքային հաղորդակցության վրա, հրամանատարը պետք է նկատի առնի ոչ խոսքային հաղորդակցության կարևորությունը և այն տպավորությունը, որը ոստիկանության ծավալումը կարող է թողնել հավաքի մասնակիցների վրա: Օրինակ, հատուկ սպառազինությամբ, սաղավարտներով և վահաններով մեծ թվով ոստիկանների ծավալումը և ջրցան մեքենաների ու նմանօրինակ այլ միջոցների տեսանելի ներկայությունը կստեղծի լրիվ այլ տպավորություն, քան ոստիկանության ծավալումն ամենօրյա համազգեստով: Եթե ոստիկանությունը ցանկանում է աշխատել հավաքի կազմակերպիչների և մասնակիցների հետ, ապա պետք է ձգտել ծավալել ոստիկաններին այնպիսի սպառազինությամբ և քանակով, որ ստեղծվի այն տպավորությունը, թե ոստիկանությունը պատրաստ է երկխոսել և համատեղ աջակցել հավաքին:

Եթե օպերատիվ հրամանատարն ունի մտահոգություններ, որ հնարավոր են անկարգություններ, ապա մոտակայքում, բայց հավաքի հիմնական մասի տեսադաշտից դուրս, պետք է ծավալվեն համապատասխան քանակով և սպառազինությամբ ոստիկանության ուժեր:

Օպերատիվ հրամանատարը պետք է նաև դիտարկի ծավալվող անձնակազմի գենդերային հավասարակշռության հարցը, հաշվի առնի հասանելի ողջ տեղեկատվությունը և օպերատիվ-հետախուզական տվյալները, ինչը կապահովի կին ոստիկանների համարժեք ներկայությունը և հնարավորություն կտա պատշաճ կարգավորել մի շարք հնարավոր սցենարներ և իրավիճակներ:

Հաջորդ բաժնում ներկայացվում են ոստիկանության հատուկ դերերը, հանդերձանքը և սպառազինությունը, որոնք կարող են օգտագործվել ոստիկանության գործունեության առանձին նպատակներն իրագործելու համար:

Ոստիկանության դերերը

Համայնքի հետ կապերի/երկխոսություն վարելու պատասխանատուներ

Այս աշխատակիցները պատասխանատու են հավաքի մասնակիցների կամ տեղական համայնքի անդամների հետ ուղղակի կապեր հաստատելու համար:

Նրանք պետք է հատուկ պատրաստություն անցնեն հաղորդակցություն և բանակցություններ վարելու համար և լինեն օպերատիվ հրամանատարի անմիջական ենթակայության տակ: Ոստիկանության և հավաքի կազմակերպիչների միջև կապը չի կարող ծառայել որպես հետագայում այդ կազմակերպիչների դեմ օգտագործելու նպատակով օպերատիվ-հետախուզական տվյալներ հավաքելու միջոց:

Այս աշխատակիցները կարող են՝
- Հանրությանը բացատրել ոստիկանության մտադրությունները,
- Ուղիղ կապ հաստատել համայնքի միջնորդների հետ,
- Վստահություն ձևավորել անհատների միջև,
- Բարելավել հաղորդակցության գործընթացը կազմակերպիչների և ոստիկանության հրամանատարության միջև,
- Աջակցել «անակնկալների բացառման» սկզբունքի կիրառմանը:

Սակայն հարկ է զգուշություն ցուցաբերել՝
- և չենթարկել այդ աշխատակիցներին ամբոխի մեջ վտանգի կամ մեկուսացման կամ
- չընդգրկել այդ աշխատակիցներին անկարգությունների ճնշման և հասարակական կարգի վերականգնման գործողություններում:

Հեծանիվով ոստիկաններ

Ոստիկանության որոշ ծառայությունների կողմից հեծանիվներով աշխատակիցների ներգրավումը ապացուցել է իր արդյունավետությունը խմբերի ոչ ագրեսիվ շուրջկալման և ուղեկցման դեպքերում: Նրանք կարևորագույն նշանակություն ունեն հեծանվորդների մասնակցությամբ բողոքներին: Լավ պատրաստված և մարզված հեծանվորդների ստորաբաժանումները կարող են արագ պատնեշ կամ ֆիլտր ստեղծել և դանդաղեցնել հավաքի տեղաշարժը:

Նկատառումները՝
- Պետք է կարողանան հեծանիվները դանդաղ վարել,
- Հեծանվորդ-ոստիկանները պետք է պատշաճ պատրաստված լինեն,
- Նրանց ծավալումը կատարվում է խմբերով, որոնցում ընդգրկված են առնվազն երկու հեծանվորդ,
- Նրանք չեն ներգրավվում այն հավաքներին, որոնք ունեն ագրեսիվ բնույթ ստանալու հավանականություն,
- Նրանք պետք է զգուշություն ցուցաբերեն և չհայտնվեն մեկուսացման մեջ:

Ամբոխի կառավարման մասնագետներ

Սրանք այն ոստիկաններն են, որոնք կրում են ամենօրյա համազգեստ, սակայն հատուկ պատրաստված են միասին գործելու համար և, երբ ծավալվում են միասին որպես մեկ ստորաբաժանում, կարող են օգտագործել խաղաղ հավաքներին կիրառվող մարտավարությունները (բաց շարքեր, ուժեղացված շարքեր, սեպաձև շարքով փոքր թիմերի մարտավարություն):

Նման ոստիկանները կարող են ապահովել համեստ ներկայություն, պարեկություն անել տարածքում, կապ հաստատել մասնակիցների հետ և, ընդհանուր առմամբ, աջակցել հավաքի անցկացմանը:

Նրանք ունեն մի շարք առավելություններ: Պատշաճ պատրաստվածության դեպքում, նրանք կարող են՝

- Հեշտությամբ համագործակցել հավաքի հետ,
- Օգնել ծանր իրավիճակում հայտնված անձանց (օրինակ՝ դժբախտ պատահարների կամ կորած երեխաների դեպքում),
- Ներկայացնել ոստիկանության նվազ ագրեսիվ պատկեր,
- Թույլ տալ հավաքին հանգիստ անցնել իրենց կողքով կամ հանգիստ տեղաշարժվել հավաքվածների միջով՝ կոնկրետ խնդիրներ լուծելու համար,
- Օգնել վերականգնել տարածքի բնականոն վիճակը:

Սակայն, նրանք ունեն նաև թերություններ՝

- Նրանք թույլ են պաշտպանված իրենց վրա նետված առարկաներից կամ իրենց վրա հարձակումներից,
- Արդյունավետ լինելու համար նրանք պետք է համախմբված լինեն իրենց ստորաբաժանման օպերատիվ հրամանատարի ենթակայության տակ:

Հասարակական կարգի հսկողության անձակազմ և ստորաբաժանումներ

Այս ոստիկանները կրում են լրիվ պաշտպանական հանդերձանք, այդ թվում՝ սաղավարտներ, վահաններ, զրահապատ բաճկոններ և մահակներ, հատուկ պատրաստված են հանրային լուրջ անկարգությունները կարգավորելու համար: Նրանք հավաքի տեսադաշտից դուրս են մնում հնարավորինս երկար ժամանակ և ծավալումն իրականացվում է միայն իրավիճակի վատթարացման դեպքում կամ այն դեպքերում, երբ առկա է հակընդդեմ ցուցարարների կամ այլ խմբերի կողմից բռնության կիրառման հավանական ռիսկ:

Նրանք ունեն մի շարք առավելություններ՝

- Լավ պաշտպանված են նետվող առարկաներից և իրենց դեմ հարձակումներից,

- Ունեն հասարակական կարգը վերականգնելու բարձր մակարդակի գիտելիքներ և փորձ, հատուկ պատրաստված են և լավ սպառազինված, պետք է դրսևորեն անձնական կարգապահության բարձր մակարդակ,
- Կարող են արագ տեղաշարժվել և ներազդել հավաքների կամ դրանց առանձին տարրերի վրա, եթե դրանք խախտում են հասարակական կարգը,
- Ունեն հասարակական կարգի պահպանությանն ուղղված ոստիկանության ընդհանուր գործողություններում ուժի անհատական կիրառման հնարավորություն:

Այս ստորաբաժանումների ծավալման թերությունները հետևյալն են՝
- Նրանց ներկայությունն ինքնին կարող է հաճախ բացասական ուղերձ փոխանցել մասնակիցներին,
- Նրանք կարող են դառնալ չափազանց ագրեսիվ և անկարգապահ,
- Պաշտպանական սաղավարտների պատճառով էապես կսահմանափակվի հաղորդակցությունը մյուս ոստիկանների և հանրության ներկայացուցիչների հետ,
- Քանի դեռ նրանց ներկայությունն անհրաժեշտ է, բնականոն իրավիճակը չի կարող վերականգվել: Սակայն սաղավարտներ հանելը և վահաններ վայր իջեցնելը կարող են ոչ խոսքային հաղորդակցության ձև լինել, ինչը կարող է նպաստել լարվածության թուլացմանը,
- Ոստիկանների առողջությունն ու ապահովությունը խնդիր են, քանի որ պաշտպանական հանդերձանքով շոգ եղանակին կարող են արագ ջրազրկվել:

Ձերբակալություն իրականացնող խմբեր

Անկարգության կամ հնարավոր անկարգության դեպքում ձերբակալություններ իրականացնող խմբերի գործարկումը իրենց շրջապատող այլ անձանց շրջանում բռնություն հրահրող անհատներին բերման ենթարկելու և հավաքից հեռացնելու միջոց է:

Ձերբակալություններ իրականացնող խմբերի ներգրավման հետ կապված են հետևյալ նկատառումները `
- Պետք է հատուկ պատրաստված և լավ հանդերձավորված լինեն, ունենան անձնական կարգապահության բարձր մակարդակ,
- Պետք է գործեն կոնկրետ անհատների մասին ճշգրիտ և հուսալի տեղեկությունների հիման վրա,
- Որոշում կայացնեն ձերբակալել հավաքի ընթացքում, թե ավարտից հետո (հավանաբար օգտագործելով տեսահսկման համակարգից կամ ապացույցներ հավաքող խմբերից ստացված ապացույցները),

- Որոշել աշխատակիցների քանակը, ովքեր ստիպված են հեռանալ հավաքի անցկացման վայրից՝ ձերբակալվածների ձևակերպումն արդյունավետ կազմակերպելու համար,
- Նրանց գործողությունները կարող են խթանել համերաշխության գործողություններ, նույնիսկ խթանել մասնակիցների զայրույթը և թշնամությունը ոստիկանության նկատմամբ:

Ապացույցներ հավաքող խմբեր

Հավաքի ընթացքում լուսանկարահանումը և տեսանկարահանումը ոչ միայն հանցագործությունների մասին ապացույցներ հավաքելու միջոց են, այլև հոգեբանական զսպման գործիքներ, որոնք կարող են օրինախախտումներից հետ պահել հնարավոր չարագործներին և խռովարարներին: Հանցագործները կարող են հատուկ մասնակցել հավաքներին հանցանք գործելու (օրինակ՝ գողություն կամ սեռական ոտնձգություն անելու) նպատակով:

Ապացույցներ հավաքելու նպատակը պետք է պարզորոշ հաղորդել կազմակերպիչներին և մասնակիցներին:

Գաղտնի հսկողության սարքավորումների և պրակտիկայի կիրառումը հնարավոր է միայն մարդու իրավունքների տեսանկյունից դրանց օգտագործման հետևանքները դիտարկելուց հետո և, անհրաժեշտության դեպքում, հարկ է դիմել և ստանալ դատարանի թույլտվություն: Հետևաբար, ապացույցներ հավաքող խմբերը պետք է ներգրավվեն բացառապես քրեական վարույթի համար ապացույցներ հավաքելու նպատակով և պետք է՝

- Մշտապես կրեն ոստիկանի համազգեստ,
- Ապացույցները հավաքեն հանրության աչքի առջև,
- Լավ պատրաստված և հանդերձավորված լինեն,
- Պատշաճ հրահանգավորվեն (օրինակ՝ ֆունկցիոնալ հրամանատարի ենթակայությամբ),
- Գործեն օրենքի շրջանակներում,
- Գիտակցեն, որ որոշ դեպքերում տեսախցիկները մոտ տարածությունից անհատների վրա ուղղելը կարող է սադրանք համարվել և հանգեցնել անկարգությունների,
- Ապահովեն լուսանկարների ու տեսագրությունների անվտանգ պահպանումը և բացառեն չլիազորված անձանց կողմից դրանց դիտումը,
- Ունենան ապացույցները պատշաճ կերպով դատարանում ներկայացնելու ունակություն,
- Չտեսագրեն անընդհատ, այլ արձագանքեն աճող լարվածությանը կամ քրեական հանցագործության կամ բռնության վտանգին,

- Պահպանեն այն տեսագրությունները և լուսանկարները, որոնք կարևորություն ունեն իրավապահ մարմինների ընթացիկ աշխատանքի կամ դատարանում որպես ապացույց ներկայացվելու համար, բայց ոչ երկարատև ժամկետով:

Նկատենք, սակայն, որ ոստիկանության բոլոր աշխատակիցները՝ անկախ ծառայողական պարտականություններից, պետք է պատրաստ լինեն գրավոր շարադրել գործողությունների ընթացքում իրենց կատարած դիտարկումները և ցուցմունք տալ դատարանում քրեական հանցագործության վերաբերյալ:

Քաղաքացիական հագուստով ոստիկաններ

Հավաքին քաղաքացիական հագուստով ոստիկանների ներկայությունը (օպերատիվ-հետախուզական աշխատանք կատարելու կամ որպես ձերբակալություն իրականացնող խմբի մաս) պահանջում է մանրակրկիտ պատրաստություն: Նախ, ծպտված ոստիկանների ներգրավումն առնչվում է ընտանեկան և անձնական կյանքի գաղտնիության իրավունքի հետ[22] (ՔՔԻՄԴ, հոդված 17) և, հետևաբար, ծպտված ոստիկանների գործողությունները պետք է գնահատվեն համաչափության և անհրաժեշտության տեսանկյունից:[23]

Հրամանատարները պետք է նաև հաշվի առնեն՝

- Աշխատակիցների անվտանգությունը և հավաքի ամբողջ ընթացքում անվտանգ աշխատելու նրանց կարողությունը,
- Ոստիկանական հանդերձանքի որևէ առարկա (օրինակ՝ հրազեն կամ ռադիո) կորցնելու կամ գողացվելու ազդեցությունն օպերացիայի վրա,
- Այն, որ ոստիկանները չեն կարող գործել որպես սադրիչ գործակալներ կամ հավաքի ընթացքում խրախուսել կամ մասնակցել անօրինական գործողություններին կամ հրահրել դրանք:

---

22 Միացյալ Թագավորության ոստիկանության ծպտված աշխատակից Մարկ Քեննեդիի գործով ապացուցվեց, որ ոստիկանության աշխատակիցները երկարատև, ինտիմ հարաբերությունների մեջ են եղել ակտիվիստների հետ, նրանցից ունեցել են երեխաներ և դարձել նրանց ընդլայնված ընտանիքների անդամներ: Այլ դեպքերում մահացած երեխաների անձնական տվյալներն օգտագործվել են իրավապահ մարմինների աշխատակիցների լեգենդները ստեղծելու համար: Տես՝ Փոլ Լյուիս և Ռոբ Էվանս, «ՄԱԿ-ի պաշտոնյան կոչ է անում Բրիտանիայի կառավարությանը քննել ծպտված ոստիկանների հետ կապված սկանդալը», The Guardian կայք, 23 հունվարի 2013թ., <http:// www.theguardian.com/uk/2013/jan/23/un-official-undercover-police-scandal)>.

23 Խաղաղ հավաքների և միավորումների ազատության իրավունքի մասին ՄԱԿ-ի հատուկ զեկուցողի հայտարարությունը Միացյալ Թագավորություն այցի ավարտին: Լրացուցիչ տես՝ <945&LangID=E#sthash.gUJ3z9To.dpuf>.

Հեծյալ ոստիկաններ

ԵԱՀԿ որոշ երկրներում հեծյալ ոստիկաններին ներգրավում են խոշոր կամ հնարավոր խնդրահարույց հավաքներն ուղեկցելու կամ կառավարելու նպատակով, և որոշակի հանգամանքներում նրանք կարող են ավելի արդյունավետ գործել, քան հետևակ ոստիկանները: Սակայն ձիերը ոստիկանության մարտավարության տարածված տարբերակ չեն և կարող են ընկալվել որպես սպառնալիք հավաքի մասնակիցների համար:

Հեծյալ ոստիկանություն ներգրավելու դեպքում հարկ է նկատի առնել հետևյալը՝

- Հեծյալ ոստիկաններն ավելի լավ են տեսնում հավաքը և անցորդներին, կարող են տեղեկություններ հավաքել մասնակիցների քանակի, վարքագծի մասին և կանխատեսել խնդիրները,
- Տեսանելի լինելու և հավաքի հետ անմիջական շփում ունենալու շնորհիվ կարող են հավաքի մասնակիցների հետ կապ հաստատելու օգտակար միջոց լինել,
- Հավաքի վայրում հեծյալ ոստիկանների համակարգված ծավալման մասին որոշումը պետք է կայացնի օպերատիվ հրամանատարությունը, քանի որ որոշ դեպքերում ձիերը կարող են պատահաբար վնասվածքներ հասցնել հետիոտներին,
- Ոստիկանությունը երբեք չպետք է ձիերը դիտարկի որպես զենք կամ ուժի կիրառման միջոց,
- Հավաքներին ձիեր օգտագործելու դեպքում պետք է նախազգուշացնել մասնակիցներին,
- Ձիերն ունեն հատուկ պահանջներ և խորհրդի համար պետք է միշտ դիմել հեծյալ ոստիկանության ավագ սպային: Մոտակայքում ձիերին անհրաժեշտ է ապահովել ախոռով և անասնաբուժական ծառայություններով, քանի որ դրանք չեն կարող ծառայություն իրականացնել նույն տևողությամբ, ինչ մարդիկ,
- Անհատական պաշտպանության հանդերձանքով հեծյալ ոստիկաններն ունեն ժամանակի և ջրազրկման նույն սահմանափակումները, ինչ հետիոտն ոստիկանները: Հեծյալ ոստիկանները կարող են օգտագործվել ապացույցներ հավաքելու համար, քանի որ բարձր նստած լինելու շնորհիվ ունեն ավելի լավ տեսադաշտ: Նման դեպքերում նրանց սաղավարտների վրա պետք է տեղադրվի տեսախցիկ:

Ոստիկանական շներ

Բազմաթիվ երկրների ոստիկանական կազմակերպություններ օգտագործում են շներին իրենց զանազան աշխատանքներում: Շներին կարելի է օգտագործել առանձին կամ որպես ավելի մեծ թիմի մի մաս: Սակայն, քանի որ շների ներկայությունը կարող է ընկալվել որպես վախեցնելու և սադրելու փորձ, նրանց

պետք է օգտագործել միայն կոնկրետ հանգամանքներում, ոչ թե կանոնավոր կերպով: Շների օգտագործումը խոշոր հավաքների դեպքում նպատակահարմար չէ:

Ոստիկանական շներ ներգրավելու դեպքում հարկ է նկատի առնել հետևյալը՝

- Բացառել շների օգտագործումը ցույցերի ընթացքում անկարգությունների դեմ պայքարելու, ցույցը զսպելու կամ ցրելու նպատակներով,
- Շներն ու կինոլոգները պետք է պատրաստվեն բարձր չափանիշներով,
- Կինոլոգներին միշտ պետք է աջակցեն հետիոտն ոստիկանները,
- Հավաքի մասնակիցները պետք է նախապես ծանուցվեն կինոլոգների և շների ներգրավման մասին,
- Շները չեն կարող տարբերել օրինազանցներին օրինապաշտներից,
- Շների օգտագործումը կարող է համարվել սադրանք, սպառնալիք կամ վիրավորանք, իսկ դրանց ծավալումը կարող է սադրել որոշակի իրավիճակներ,
- Շներին անհրաժեշտ են հարմար փոխադրամիջոցներ և անասնաբուժական ծառայություն. շներին ներգրավելուց առաջ պետք է ստանալ մասնագետի խորհրդատվությունը,
- Շների օգտագործումը կարող է անհամաչափ ազդել շների օգտագործման մասին պատմականորեն ձևավորված ընկալումներ ունեցող որոշակի հավատք ունեցող համայնքների վրա:

Ռեսուրսներ և սպառազինություն

Պատնեշներ

Հաշվի առնելով «տեսանելիության և լսելիության» սկզբունքը՝ խաղաղ հավաքները կառավարելու նպատակով կարող են օգտագործվել զանազան պատնեշներ: Բնույթով բռնի հավաքների տեղաշարժը սահմանափակելու կամ, որոշ դեպքերում, հակադիր խմբերի տեսադաշտը փակելու նպատակով կարող են կառուցվել պատնեշներ, օգտագործվել հատուկ կոնստրուկցիաներ կամ հարամարեցվել գոյություն ունեցող օբյեկտներ:

- Պատրաստի պատնեշներն են բնական պատերը, շենքերը, թփերը կամ այլ բուսականությունը կամ համայնքներն իրարից առանձնացնելու համար կառուցված ֆունկցիոնալ պատերը: Որոշ շինություններ, օրինակ՝ դեսպանատները, կառուցվել են հատուկ նախատեսված պատնեշներով:
- Հատուկ կառուցված պատնեշների շարքում են ամբոխի հսկողության պատնեշները (երբեմն կոչվում են «ֆրանսիական պատնեշներ»), Մոջո ուժային պատնեշները (օգտագործվում են համերգներին և բեմական միջոցառումներին), պարուրաձև պատնեշները (օգտագործվում են ամբոխի տեղաշարժը դանդաղեցնելու համար), պարագծի ցանկապատերը (զանազան ձևերի) և ժապավենը:

- Հարմարեցված պատնեշներ կարող են լինել մեքենաները, ոստիկանները (նաև հեծանիվներով կամ հեծյալ), կամ մետաղական տարաները:

Պատնեշներ օգտագործելու դեպքում հարկ է նկատի առնել հետևյալը՝
- Պատնեշները պետք է տեղում լինեն մասնակիցների գալուց կամ հավաքի մեկնարկից շատ ավելի վաղ,
- Ֆիզիկական պատնեշները սահմանափակումներ են պարտադրում հավաքին, հետևաբար՝ «անակնկալներ բացառելու» մոտեցմանը համահունչ, և հավաքը պաշտպանելու նպատակով կազմակերպիչները պետք է տեղեկացվեն պատնեշներ կիրառելու ոստիկանության մտադրության մասին:
- Դրանք արգելք են ոստիկանության և ցուցարարների տեղաշարժի համար:
- Ոստիկանությունը պետք է ապահովի մուտքի և ելքի հարմար կետերի առկայությունը:
- «Կենդանի» պատնեշները, մի կողմից, ստեղծում են երկխոսության հնարավորություն, իսկ մյուս կողմից՝ կարող են սադրել արձագանք և ագրեսիա:
- Ֆիզիկական պատնեշները կարող են սահմանափակել երկխոսությունը, սակայն, սահմանափակելով ֆիզիկական շփումը, կարող են կանխել ոստիկանության կամ մասնակիցների կողմից չափից դուրս կտրուկ արձագանքը:
- Օգտագործվող պատնեշի տեսակը պետք է համապատասխանի ռիսկերին: Օրինակ՝ հավաքի ագրեսիվ անդամները կարող են հեշտությամբ զենքի վերածել ամբոխի հսկողության պատնեշները:
- Ֆիզիկական պատնեշները չեն կարող հեշտությամբ տեղաշարժվել, ինչը սահմանափակում է ոստիկանության արագ ծավալումը:
- Պատնեշների մեծ մասը սահմանափակում է մարդկանց տեղաշարժը, և անկայուն վիճակներում անհատները կարող են հայտնվել դրանց ծուղակում կամ ճզմվել դրանց մոտ:

Ծխածածկույթ

Ծխի օգտագործումը կարող է ստեղծել տեսողական պատնեշ, որը հնարավորություն կտա վերադասավորել ոստիկանության ուժերը կամ այլ ցուցարարների տեսադաշտից հեռացնել խոցելի մարդկանց:

Ծխածածկույթ օգտագործելու դեպքում հարկ է նկատի առնել հետևյալը՝
- Ծխածածկույթն օգտագործվում է բացառապես ոստիկանության ուժերի վրա բռնի հարձակման դեպքում (հրազենով, հրձիգ նյութերով կամ պայթուցիկ սարքերով),
- Ծխածածկույթ պետք է օգտագործվի բացառապես օպերատիվ հրամանատարի ենթակայությամբ,

- Քամու ազդեցության տակ ծուխը կարող է փոխել իր ուղղությունը, իսկ ուժգին քամին կարող է անարդյունավետ դարձնել ծուխը,
- Ծուխը կարող է թաքցնել ոստիկանությանը հավաքից, ինչպես նաև հավաքը՝ ոստիկանությունից,
- Հավաքի մասնակիցները կարող են շփոթել ծխածածկն արցունքաբեր գազի հետ, ինչը կարող է առաջացնել թշնամական արձագանքներ կամ խուճապ,
- Հավաքի մասնակիցների համար պետք է նախատեսվեն խուճապի դեպքում փախուստի ուղիներ,
- Կարող են հնչել մեղադրանքներ, որ ծուխն օգտագործվել է ոստիկանության կասկածելի վարքագիծը թաքցնելու նպատակով,
- Բացառությամբ արտակարգ իրավիճակների՝ նախքան օգտագործելը պետք է տրվի նախազգուշացում,
- Արգելվում է ծխագլանիկներն ուղղել մարդկանց վրա,
- Ծուխը կարող է բացասաբար ազդել ոստիկանության գործողության վրա:

Ոստիկանական մեքենաների օգտագործումը

Ոստիկանական մեքենաների օգտագործումը՝ որպես մարտավարական միջոց, պահանջում է ճշգրիտ կանոնակարգում: Գոյություն չունեն հանգամանքներ, որոնց առկայության դեպքում ընդունելի կլինի տրանսպորտային միջոցն արագությամբ հավաքի մասնակիցների ուղղությամբ վարելը: Նման արարքը հնարավոր մահաբեր զենքի անխտրական օգտագործում է և մարդու իրավունքների տեսանկյունից չի կարող արդարացվել:

Ոստիկանական մեքենաներ օգտագործելու դեպքում հարկ է նկատի առնել հետևյալը՝

- Մեքենաները կարող են օգտագործվել որպես շարժական պատնեշ,
- Մեքենաները կարող են օգտագործվել որպես բարձրախոսների համակարգ՝ մասնակիցների հետ հաղորդակցելու համար,
- Մեքենաները կարող են օգտագործվել լուսավորելու համար,
- Մեքենաները կարող են օգտագործվել ոստիկանության մեծ թվով աշխատակիցներ, ձերբակալված անձանց կամ սարքավորումներ տեղափոխելու համար,
- Մեքենաները կարող են օգտագործվել նետվող առարկաներից պաշտպանվելու համար,
- Մեքենաները կարող են օգտագործվել անօրինական գործողություններից զերծ պահելու նպատակով ուժ ցուցադրելու համար,
- Վարորդները պետք է անցած լինեն պատշաճ ուսուցում և ունենան համապատասխան վարորդական իրավունք,
- Ազդանշանների կամ լուսարձակների օգտագործումը կարող է ազդել հավաքի վարքագծի վրա:

Արհեստական լուսավորություն

Արհեստական լուսավորությունը կարող է օգտագործվել տարածքը լուսավորելու համար, ինչն օգնում է նվազեցնել առողջությանն ու անվտանգությանը սպառնացող վտանգները կամ բացառել գործողությունների գաղտնիության՝ առանձին անհատների մոտ ձևավորվող ընկալումը: Լուսավորությունը կարող է օգնել հավաքել օպերատիվ տվյալներ և ապացույցներ: Եթե պլանավորված է հավաքն անցկացնել բնական վատ լուսավորության պայմաններում, նախապատրաստական փուլում գուցե հարկ լինի դիտարկել արհեստական լուսավորության օգտագործման հնարավորությունը:

Արհեստական լուսավորության սարքերը կարող են տեղադրվել՝
- Ուղղաթիռի վրա («գիշերային արև» համակարգ),
- Մեքենայի վրա,
- Գետնին,
- Ձեռքում պահվել,
- Որոշ սարքերի դեպքում կարող է պահանջվել արտաքին էներգամատակարարում:

Աջակցություն օդից

Առկայության դեպքում օդից աջակցությունը կարող է մեծ օգուտ տալ հրամանատարական թիմին՝ ապահովելով տարածքի ընդհանուր պատկերը, բարելավելով ապացույցների և տեղեկությունների հավաքումը: Գոյություն ունեն օդային աջակցության զանազան միջոցներ՝
- Ուղղաթիռներ,
- Օդանավեր,
- Դիրիժաբլներ,
- Օդապարիկներ և
- Հեռակառավարվող անօդաչու թռչող սարքեր (ԱԹՍ):

Օդից աջակցության դեպքում հարկ է նկատի առնել հետևյալը՝
- Ծախսը,
- Մատչելիությունը,
- Լիցքավորման և թռիչքի ժամանակը,
- Օդից աջակցությունը կարող է օգնել ռեսուրսների արդյունավետ ծավալմանը,
- Հսկողությունը վերևից կարող է ընկալվել որպես սադրիչ և հանգեցնել հավաքի տեղում լարվածության աճի,
- Օդաչուների դեմ կարող են օգտագործվել լազերներ,
- Օդանավի աղմուկը կարող է խանգարել կապին,
- Անհրաժեշտ են թռիչքի և վայրէջքի հնարավորություններ:

Սպառազինություն

Ոստիկանության կողմից որևէ զինատեսակ կիրառելուց առաջ հարկ է միշտ երաշխավորել, որ ուժն անհրաժեշտ է այդ պահին, և ուժի թույլատրված կիրառումը մշտապես լինելու է համաչափ: Այլ կերպ ասած՝ հարկ է երաշխավորել, որ կիրառվող ուժի ձևը և մակարդակը լինեն ցանկալի նպատակին հասնելու համար նվազագույն անհրաժեշտը և դրա բացասական հետևանքները չգերակշռեն օրինական նպատակը: Սա նշանակում է, որ ուժ չպետք է կիրառվի, եթե դրա պահանջվող մակարդակը չափից ավելի մեծ վնաս է հասցնելու նրանց, ում դեմ այն կիրառվելու է: Բացի այդ, հարկ է միջոցներ ձեռնարկել, որ որևէ վնաս չհասցվի կողմնակի դիտորդներին և խաղաղ մասնակիցներին:

Կարևոր է հիշել, որ ուժի կիրառումը կարող է դառնալ մահվան պատճառ և զենքի ցանկացած կիրառում կարող է առանձնակի վնաս հասցնել որոշակի խոցելի խմբերի, մասնավորապես՝ երեխաների, դեռահասների, տարեցների, հաշմանդամություն կամ ֆիզիկական սահմանափակման այլ ձևեր ունեցող անձանց:

Զենքի կիրառման բոլոր դեպքերը, թույլտվությունների ամբողջ շղթան և տրված նախազգուշացումները պետք է լիարժեք փաստաթղթավորվեն՝ միջոցառման ավարտից հետո ուսումնասիրելու և վերլուծելու համար:

Վահանների շղթա

Պաշտպանական հանդերձանքով ոստիկանները, որոնք կրում են սաղավարտներ և վահաններ, պատնեշ են կազմում և ցուցադրում ուժ, որը կարող է հետ պահել բռնությամբ բնորոշվող վարքագծից: Սակայն որոշ դեպքերում վահանների գիծ կազմող ոստիկանների ծավալումը կարող է հակառակ արդյունքը տալ, խրախուսել բռնություն պարունակող արձագանքներ և սադրել անկարգություններ: Վահանների օգտագործումը հիմնականում պաշտպանական նշանակություն ունի և կիրառվում է նետվող առարկաներից ոստիկաններին պաշտպանելու համար: Հարձակման նպատակով դրանք կարող են օգտագործվել մահակների հետ (տե՛ս ստորև) կամ հարթ մակերեսը կարող է օգտագործվել անհատներին հետ հրելու համար: Պետք է խուսափել վահանի եզրը հարձակման նպատակներով օգտագործելուց, քանի որ դա կարող է լուրջ վնասվածքներ հասցնել, հատկապես, եթե հարվածները հասցվում են գլխի և պարանոցի հատվածներում, ինչը կարող է մահացու լինել:

Վահանների շղթաներ կիրառելու դեպքում հարկ է նկատի առնել հետևյալը՝

- Բոլոր ոստիկանները պետք է կրեն պատշաճ հանդերձանք,
- Վահանների օգտագործումը պահանջում է հատուկ պատրաստություն, ֆիզիկական պատրաստվածություն և ոստիկանների ընտրություն,

- Պետք է գործի հրամանատարության և հսկողության հստակ շղթա՝ առաջին գծի հրամանատարների վրա ուժի կիրառման անհրաժեշտ սահմանները գերազանցող ոստիկաններին զսպելու պատասխանատվությամբ,
- Նման մարտավարության ցանկացած կիրառում սահմանափակում է բանակցելու և հաղորդակցվելու ոստիկանության ունակությունը,
- Երբ այլևս չկա վահաններով ոստիկանների ներգրավման անհրաժեշտություն, վերջիններս պետք է հետ քաշվեն,
- Հարձակման դեպքում իրավախախտները կարող են վերածել վահանները զենքի՝ ծանր վնասվածքներ հասցնելով ոստիկաններին:

Մահակներ

Ոստիկանության կողմից մահակների համակարգված, կարգապահ օգտագործումը կարող է հետ մղել կամ ցրել հավաքի ժամանակ բռնություն կիրառող մասնակիցներին կամ պաշտպանել անհատ ոստիկաններին հարձակումից: Մահակի ցանկացած հարված պետք է արդարացված լինի համաչափության սկզբունքով: Մահակները պետք է կիրառվեն բացառապես այն դեպքում, երբ արդեն օգտագործվել և անարդյունավետ են եղել այլ միջոցներ, որոնք ենթադրում են ավելի ցածր մակարդակի ուժի կիրառում, կամ այդ միջոցների կիրառումը գործնականում նպատակահարմար չէ:
Մահակներ կիրառելու դեպքում հարկ է նկատի առնել հետևյալը՝

- Մահակները կարող են օգտագործվել որպես ուժի ցուցադրություն և տեսանելի նախազգուշացում ցուցարարներին, որ զերծ մնան բռնությունից կամ հեռանան կոնկրետ տարածքից:
- Չպետք է օգտագործվեն սադրելու համար (օրինակ՝ երբ ամբոխին «բորբոքելու» համար մահակներով հարվածում են վահաններին):
- Մահակների օգտագործումը կարող է համարվել ագրեսիվության և սպառնալիքի դրսևորում և հանգեցնել լարվածության և բռնության մակարդակի աճի:
- Հարկ է նախազգուշացնել մահակներ օգտագործելու մասին, սակայն այս պահանջը կարող է չկատարվել, եթե հանգամանքները թույլ չեն տալիս, կամ վտանգը վերացնելու համար անհրաժեշտ է անհապաղ կիրառել մահակներ:
- Եթե չկա մահվան կամ ծանր վնասվածքի սպառնալիք, չի կարելի մահակներով հարվածել գլխին կամ ուսերին, սեռական օրգաններին, ողնաշարին և մարմնի այլ խոցելի մասերին, քանի որ դա կարող է մահվան կամ ծանր վնասվածքի պատճառ դառնալ:
- Երբ մահակների հարվածները ծառայել են օրինական նպատակին, ուժի կիրառումը պետք է դադարեցնել:
- Ուժի կիրառման պատասխանատվությունն ընկնում է ինչպես մահակ կիրառելու կամ այն պատրաստ պահելու հրաման տված հրամանատարի, այնպես էլ մահակն օգտագործող ոստիկանի վրա:

- Մահակների օգտագործումը պահանջում է պատրաստվածության բարձր մակարդակ, արդյունավետ հրամանատարություն և հսկողություն, ինչպես նաև անձնական կարգապահություն:

Ջրցաններ

Ոստիկանությունն օգտագործում է տարբեր տեսակի ջրցաններ, որոնք ունեն զանազան գործառույթներ: Մի մասն ունի ապացույցներ հավաքող տեսախցիկներ (տե՛ս՝ «Ապացույցներ հավաքող խմբեր» բաժինը), մյուսները հնարավորություն ունեն օգտագործել ջրի և քիմիական նյութերի խառնուրդ (տե՛ս՝ «Քիմիական նյութեր» բաժինը): Հավաքներին ոստիկանության գործողությունների ընթացքում կարող են օգտագործվել բացառապես իրավապահ գործունեության, ոչ թե հրշեջ նպատակների համար նախատեսված ջրցաններ: Ջրցանի օգտագործման ցանկացած դեպք պետք է արդարացվի համաչափության սկզբունքով:

Ջրցան մեքենայի հիմնական նպատակն է մեծ քանակությամբ և զգալի ուժով ջուր մղել հավաքի մասնակիցների վրա: Ջրցանները չեն կարող օգտագործվել խաղաղ հավաք ցրելու նպատակով:

Ջրցաններ օգտագործելու դեպքում հարկ է նկատի առնել հետևյալը՝

- Ջրցանների օգտագործման թույլտվություն տալիս են օպերատիվ հրամանատարության կամ ավելի բարձր մակարդակում:
- Ջրցանի գործարկման համար պահանջվում է բավարար ճնշումով ապահով աղբյուրից ջրի անխափան մատակարարում՝ արագ վերալցավորման համար:
- Ջրցանը ուժի ավելի ընտրողաբար թիրախավորող ձև է, քան արցունքաբեր գազը, բայց ավելի քիչ ընտրողաբար թիրախավորող, քան հարվածային ազդեցության զինամթերքը (պլաստիկ փամփուշտներ, ռետինե փամփուշտներ, պլաստիկ փամփուշտներ՝ փշրվող գնդիկներով, փրփուրով փամփուշտներ, ռետինե գնդիկներով փամփուշտներ կամ մանրագնդակներով պարկեր):
- Հավաքի մասնակիցները կարող են ջրցանի ներկայությունը համարել սպառնալիք կամ սադրանք:
- Հավաքի մասնակիցները պետք է նախազգուշացվեն, նախքան ջրցանի օգտագործումը:
- Ջրցանի օգտագործումը կարող է ռիսկեր առաջացնել (ստեղծել սայթաքուն մակերես), իսկ բարձր ճնշումով ջուրը կարող է մարդկանց ընկնելու և վնասվելու պատճառ դառնալ:
- Ջրցաններն ավելի հարմար են ստատիկ, քան շարժական հավաքների կամ երթերի համար:
- Մարդկանց անվտանգ հեռանալու հնարավորություն տալու համար պետք է ապահովված լինեն ցրվելու կամ հեռանալու/ելքի համապատասխան ուղիներ:

- Ջրցանները չեն կարող օգտագործվել այն անձանց դեմ, ովքեր կարող են վայր ընկնել բարձրությունից:
- Բժշկական օգնությունը պետք է հասանելի լինի դրա կարիքն ունեցողներին:
- Ջրցանները պետք է շահագործեն բացառապես համապատասխան ուսուցում անցած աշխատակիցները:
- Հրամանատարները պետք է գիտակցեն, որ ջրցանների պաշտպանության համար անհրաժեշտ են ոստիկաններ:
- Ջրցանը չպետք է օգտագործվի զրոյից ցածր ջերմաստիճանի դեպքում:

Քիմիական նյութեր

CS գազի (հայտնի է որպես արցունքաբեր գազ) կիրառումը հավանաբար ոստիկանության կողմից ամբոխը հսկելու մարտավարություններից ամենահայտնին է (փոքրաթիվ երկրներում օգտագործվում է ավելի թույլ ազդեցությամբ, բայց ավելի թունավոր քլորացետոֆենոնը կամ CN գազը): Քլորոբենզալմալոնոնիտրիլի բյուրեղները փոշիացվում են գազի ամպի մեջ և շնչելու կամ աչքերի և բերանի շուրջ խոնավ մաշկի հետ շփման մեջ մտնելու դեպքում առաջացնում են այրոցի զգացողություն, փոշտոց և հազ: Շատ դեպքերում ազդեցությունն անհետանում է 10-ից 20 րոպեի ընթացքում: Սակայն ավելի տևական կամ բարձր կոնցենտրացիայի գազի ազդեցությունը կարող է առաջացնել ցավոտ բշտիկներ:

CS գազը, սովորաբար, գտնվում է հատուկ հարմարեցված հրացանից արձակած նռնակի մեջ, թեպետ նռնակը կարելի է նաև ձեռքով նետել: Երկու դեպքում էլ հավաքի մասնակիցները կարող են վերցնել և հետ նետել նռնակը ոստիկանության շարքերի ուղղությամբ: Արցունքաբեր գազի կիրառման այլ տարբերակ են փոքր, մարմարագույն գնդիկները, որոնք գոլորշիանում են գետնին ընկնելու պահին: Կիրառման որևէ մեթոդ չպետք է նախատեսի գազի կոնտեյների նետումն անմիջապես մարդու վրա:

Որոշ դեպքերում CS գազը կարելի է ավելացնել ջրցանի ջրին: Սա ուժի ավելի ընտրողական կիրառում է և կարող է ուղղված լինել կոնկրետ անձի դեմ: Այս մեթոդն ավելի քիչ ազդեցություն կունենա ընդհանուր բնակչության վրա, քանի որ բյուրեղներն օդով չեն տարածվում: Սակայն ազդակիր անհատներն ավելի երկար կենթարկվեն CS գազի ազդեցությանը, քանի որ բյուրեղները կներծծվեն նրանց հագուստի մեջ:

Մարտավարական նպատակը պետք է բացառապես լինի հավաքի ցրումը, իսկ արցունքաբեր գազի օգտագործումն այնպիսի տարածքում, որտեղից մարդիկ չեն կարող հեռանալ (օրինակ՝ փակ տարածքներում), պետք է բացառվի: Հավաքը ցրելու մասին որոշումը պետք է լինի անհրաժեշտ և համաչափ: Նախքան գազի օգտագործումը, մասնակիցներին պետք է ներկայացված լինի ցրվելու խնդրանք,

որը նրանք անտեսած պիտի լինեն: Բացի այդ, հավաքը ցրելու համար, նախ, պետք է օգտագործվեն նվազ վնասաբեր միջոցներ: Արցունքաբեր գազ օգտագործելուց առաջ պետք է տրվի նախազգուշացում: Անհրաժեշտ է մանրամասն գնահատել խաղաղ մասնակիցներին և ոչ մասնակիցներին սպառնացող ռիսկերը և համոզվել, որ դրանք ավելի ծանրակշիռ չեն, քան այն փաստացի վնասը, որը կանխվելու կամ կասեցվելու է ցրելու միջոցով:

OC գազը (օլեորեզին կապսիկում կամ պղպեղագազ) այլ նշանակության ևս մեկ քիմիական գրգռիչ է, որը նախատեսված է անհատի դեմքին փչելու համար: Այն կարող է օգտագործվել որպես պաշտպանության միջոց միայն բռնություն կիրառող անհատներից, սակայն հարմար չէ հավաքը ցրելու կամ ոստիկանության պահանջների կատարումը անձին պարտադրելու համար: Սովորաբար, գազը գտնվում է ձեռքի փոքր կրակմարիչ հիշեցնող բալոնում, որն ունի ատրճանակի բռնակ: Բալոնում գազի մեծ ճնշման պատճառով այն չի կարելի օգտագործել մի մետրից մոտ տարածության վրա՝ դեմքին և աչքերին պղպեղագազի հասցրած վնասվածքներից խուսափելու համար:

Թեպետ ոստիկանության ուժերը լայնորեն կիրառում են քիմիական նյութեր, գոյություն ունեն որոշակի պայմաններ, որոնց դեպքում դրանք երբեք չպետք է օգտագործվեն: Օրինակ՝ որպես խաղաղ հավաքը ցրելու միջոց, երբ վերջինիս մասնակցում են տարեցներ, երեխաներ կամ այլ անձինք, ովքեր քիմիական նյութերի ազդեցությունից խուսափելու համար կարող են ունենալ տեղաշարժվելու դժվարություն, ինչպես նաև փակ տարածքներում կամ մարզադաշտերում, որտեղ ելքերը սահմանափակ են և գոյություն ունի կոտրվածքների ու ճզմվածքների վտանգ: Հարկ է կիրառել միայն ստուգված և հաստատված քիմիական նյութեր, որոնք ունեն օգտագործման հստակ ցուցումներ, և օգտագործման ժամանակ ձեռք առնել անհրաժեշտ նախազգուշության միջոցներ՝ անհարկի կամ չափից ավելի մեծ վնասներից կամ վնասվածքներից խուսափելու համար:

Քիմիական նյութեր օգտագործելու դեպքում հարկ է նկատի առնել հետևյալը՝

- Քիմիական նյութերի օգտագործման թույլտվություն տալիս են առնվազն օպերատիվ հրամանատարության մակարդակում:
- Քիմիական նյութերով կրիչները կամ կոնտեյներները երբեք չի կարելի նետել/կրակել անհատների վրա:
- Ոստիկանության տրամադրության տակ պետք է լինեն արդյունավետ պաշտպանական միջոցներ, քանի որ քիմիական նյութերը կարող են ազդել կամ վնասել ոստիկաններին:
- Քիմիական նյութերով զենքերը գործի դնող ոստիկանները պետք է ծանոթ լինեն դրանց ճիշտ օգտագործման կանոններին:
- Հավաքի վայրում քիմիական նյութերի գործածությունը պետք է վերահսկի օպերատիվ հրամանատարը:

- Ցանկալի նպատակին հասնելուց հետո օպերատիվ և մարտավարական հրամանատարությունները պետք է դադարեցնեն քիմիական նյութերի օգտագործումը:
- Եղանակային պայմանները կարող են էապես ազդել քիմիական նյութերի օգտագործման վրա:
- Դրանք հիմնականում ամբոխը ցրելու մարտավարության տարբերակ են և պետք է օգտագործվեն, երբ այլ մեթոդները հաջողություն չեն ապահովել կամ դրանց օգտագործման փորձի դեպքում հաջողությունն անիրատեսական է, բացի այդ, դրանք հարկ է օգտագործել միայն համատարած բռնության առկայության դեպքում:
- Օգտագործելուց առաջ պետք է տրվի նախազգուշացում:
- Դրանք երբեք չի կարելի օգտագործել այնպիսի տարածքներում, որտեղից հավաքի մասնակիցների ցրվելու համար կարող են դժվարություններ առաջանալ (ֆուտբոլի մարզադաշտ կամ փակուղի):
- Հարկ է նկատի առնել ելքի ուղիները խուճապի դեպքերի համար:
- Ելքի ուղին պետք է լինի նպատակահարմար (հաշվի առնելով քամին և քիմիական նյութերի օգտագործման վայրը):
- Վնասվածքներից խուսափելու կամ դրանք նվազագույնի հասցնելու համար ելքի ուղին պետք է պարզ և հստակ լինի հավաքի մասնակիցների համար:
- Ելքի ուղին երբեք չպետք է ձգվի դեպի ոստիկանության շարքերը, եթե չկան կողմնային ուղիներ:
- Օդով տարածվող միջոցների օգտագործման դեպքում հարկ է նկատի առնել այդ տարածքում բնակվողների հարցը (օրինակ՝ գազ չի կարելի օգտագործել հիվանդանոցի մոտակայքում կամ դրա շրջակայքում):
- Բժշկական օգնությունը պետք է հասանելի լինի նրանց համար, ովքեր ունեն այսպիսի օգնության կարիքը:
- Քիմիական նյութերի օգտագործման մասին մանրամասն հաշվետվությունը (ինչու, ինչպես, հաջողության արձանագրված մակարդակը, տուժածների թիվը և այլն) պարտադիր է:

Հարվածային փամփուշտներ

Գոյություն ունի ոչ մահացու հարվածային կամ տրավմատիկ ազդեցության զինամթերքի լայն ընտրանի, որն օգտագործվում է ամբողջ աշխարհում: Դրանցից են փայտե գնդակով փամփուշտները, ռետինե գնդակները, պլաստիկ գնդակները, փրփուրի գնդակները, ռետինե գնդիկներով փամփուշտները և մանրագնդիկներով պարկերը: Գնդակների արագությունն ու տրամաչափը կարող են էապես տարբեր լինել, բայց դրանց տարբեր տեսակների և մոդելների մասին խորհրդատվությունն այս ձեռնարկի շրջանակից դուրս է: Սակայն հավաքների ժամանակ ոստիկանության գործողություններում դրանց օգտագործման հետ կապված կան մի շարք նկատառումներ:

Հարվածային արկերը շատ բարձր տեղ են գրավում ուժի կիրառման միջոցների շարքում և իրենց ազդեցությամբ զիջում են միայն հրազենին: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ ոստիկանությունը պետք է գիտակցի, որ հարվածային արկերը դասվում են ոչ մահաբերների շարքին, սակայն ոչ ճիշտ օգտագործման դեպքում կարող են մահվան կամ ծանր վնասվածքների պատճառ դառնալ: Հետևաբար, հարկ է ձեռնարկել ռիսկերի նվազեցման միջոցներ:

Հարվածային փամփուշտներ օգտագործելու դեպքում հարկ է նկատի առնել հետևյալը՝

- Պետք է օգտագործել բացառապես ստուգված և հաստատված զինամթերքի տեսակներ:
- Պետք է սահմանվեն գործածման տարածության և թիրախների ընտրության հստակ ցուցումներ:
- Ոստիկանները պետք է իրազեկ լինեն դրանց կիրառման հետ կապված ռիսկերի մասին և հետևեն ցուցումներին:
- Նման զենքով ոստիկաններին զինելու թույլտվություն պետք է տա օպերատիվ հրամանատարը, իսկ զենքը կիրառելու թույլտվությունը՝ մարտավարական հրամանատարը:
- Հարվածային փամփուշտները պետք է կիրառվեն բացառապես այն դեպքերում, երբ առկա է անձին ծանր վնասվածքներ հասցնելու կամ մահ պատճառելու անմիջական վտանգ:
- Դրանք պետք է օգտագործեն ուսուցում անցած աշխատակիցները, որոնք համապատասխան կերպով են հանդերձավորված:
- Կրակոցները պետք է թիրախեն բացառապես այն անհատներին, որոնք ծանր վնասվածքներ հասցնելու կամ մահ պատճառելու անմիջական վտանգ են ներկայացնում:
- Հարվածային զենքերից արգելվում է կրակել հավաքի՝ անխտիր բոլոր մասնակիցների վրա:
- Հարվածային գնդակները պետք է արձակվեն բացառապես իրանի ստորին հատվածի կամ ստորին վերջույթների ուղղությամբ (բացառապես ծանր վնասվածքի կամ մահվան անմիջական սպառնալիքին հակազդելու դեպքում):
- Չի կարելի միտումնավոր կրակել գետնին՝ նպատակ ունենալով անդրադարձով խոցել թիրախը:
- Հավաքի վայրում դրանց օգտագործումը պետք է վերահսկի օպերատիվ հրամանատարը:
- Ցանկալի նպատակին հասնելուց հետո օպերատիվ և մարտավարական հրամանատարությունները պետք է դիտարկեն նման զենքերով զինելու և դրանք կիրառելու նպատակահարմարությունը:
- Մարդկանց անվտանգ հեռանալու հնարավորություն տալու համար պետք է առկա լինեն ցրվելու կամ ելքի համապատասխան ուղիներ:

- Բժշկական օգնությունը պետք է հասանելի լինի նրանց համար, ովքեր ունեն այսպիսի օգնության կարիքը: Հարվածային փամփուշտներ պետք է օգտագործվեն, երբ այլ մեթոդները ձախողել են կամ դրանք փորձելու դեպքում հաջողության հասնելն անիրատեսական է:
- Հնարավորության դեպքում՝ նախքան օգտագործելը պետք է տրվի նախազգուշացում:

Հրազեն

«Իրավապահ մարմինների աշխատակիցների կողմից ուժի և հրազենի կիրառման» ՄԱԿ-ի հիմնական սկզբունքները նշում են, որ հրազեն կարելի է կիրառել միայն այն անհատների դեմ, ովքեր անմիջական և իրական սպառնալիք են ներկայացնում որևէ անհատի կյանքի համար: Հրազենի օգտագործումը ուժի կիրառման վերջին, ծայրահեղ ձևն է և մահացու տարբերակը: Հրազենը երբեք չի կարող հանդիսանալ հանրահավաքների կառավարման օպերատիվ միջոց: Հրազենը չի կարող օգտագործվել հավաքը ցրելու նպատակով նույնիսկ այն դեպքերում, երբ շարունակվում են բռնի գործողությունները:

Երբ նույն կամ նմանատիպ արդյունքի հնարավոր է հասնել մատչելի այլ տարբերակով, ապա հրազենի փոխարեն պետք է օգտագործել այդ միջոցը: Անհատի կյանք խլելը հակասում է ոստիկանական ծառայության թիվ մեկ սկզբունքին (կյանքի պաշտպանություն) և խախտում է կյանքի իրավունքը: Հետևաբար, անհատի կյանքը վտանգի ենթարկելն ընդունելի է միայն այն դեպքում, երբ այն նպատակ ունի պաշտպանել կամ փրկել մեկ ուրիշ կյանք:

Եթե, օպերատիվ-հետախուզական տվյալներից ելնելով, հանրային միջոցառման ընթացքում ոստիկանական որոշակի խնդիրներ լուծելու համար հատուկ անհրաժեշտություն կա ծավալել հրազենով զինված ոստիկաններ (սովորական սպառազինությամբ ոստիկանների ծավալման փոխարեն), ապա այդ ոստիկանները պետք է լավ պատրաստված և հանդերձավորված լինեն և հավաքի ամբողջ ընթացքում կատարեն բացառապես հրազենի կիրառման հետ կապված գործառույթ:

Հրազեն օգտագործելու դեպքում հարկ է նկատի առնել հետևյալը՝

- Հասարակական կարգի պահպանության ոստիկանները պետք է զինված լինեն անձնական զենքով, որը գտնվում է գոտու վրա՝ կոճկված պատյանում:
- Հրազենը պետք է հանվի պատյանից միայն այն դեպքում, երբ անմիջական վտանգ է սպառնում ոստիկանի կամ որևէ այլ անձի կյանքին:
- Համապատասխան իրավիճակներում հասարակական կարգի պահպանության ոստիկաններին պետք է աջակցեն երկու բռնակով, ավելի

բարձր մարտական դիպուկությամբ և օպտիկական նշանառության սարք ունեցող զենքերով զինված փոքր խմբեր:

- Հրազենի խմբերը պետք է ծավալվեն օպերատիվ հրամանատարի հրամանով՝ ելնելով միայն ակնհայտ սպառնալիքներից, և պետք է վերահսկվեն տեղում գտնվող մարտավարական հրամանատարների կողմից:
- Հրազենի օգտագործման պատասխանատվությունն ընկնում է հրամանատարության և այն օգտագործող ոստիկանների վրա:
- Հրազեն պետք է օգտագործվի, երբ այլ մեթոդների կիրառումը հաջողություն չի բերել կամ դրանք փորձելու դեպքում էլ հաջողության հասնելն իրատեսական չէ:
- Պետք է արձակվեն միայն թիրախային միակի կրակոցներ և միայն մինչև սպառնալիքի վերանալը: Երբեք ընդունելի չէ ավտոմատ կրակահերթը:
- Երբեք օրինական կամ ընդունելի չէ ամբոխի վրա առանց խտրականության կրակելը:
- Կրակոցները պետք է թիրախավորեն միայն այն անհատներին, որոնք անմիջական և իրական վտանգ են ներկայացնում ցանկացած անձի, այդ թվում՝ ոստիկանների կյանքի համար:
- Հրազենով զինված ոստիկանները պետք է տեղյակ լինեն պատահական գնդակով անմեղ անցորդի խոցելու հնարավորության մասին:
- Ցանկալի նպատակին հասնելուց հետո դրանց կիրառումը պետք է դադարեցվի, և օպերատիվ ու մարտավարական հրամանատարությունները պետք է դիտարկեն նման զենքերով զինելու նպատակահարմարությունը: Ինչպես ուժի կիրառման մյուս բոլոր դեպքերում, ոստիկանության աշխատակիցը պարտավոր է դադարեցնել հրազենի օգտագործումը նպատակին հասնելուց հետո կամ երբ վերացել է դրա օգտագործման անհրաժեշտությունը:
- Խուճապի դեպքերում հավաքի համար պետք է նախատեսված լինեն փախուստի ճանապարհներ:
- Բժշկական օգնությունը պետք է հասանելի լինի նրանց համար, ովքեր ունեն այսպիսի օգնության կարիքը:
- Ոստիկանությունը պետք է արձանագրի հրազենի օգտագործման ցանկացած դեպք, որը պետք է այնուհետ վերլուծել:

Օպերատիվ պլանավորման փուլում
Հրամանատարական խմբի պարտականությունների ստուգաթերթիկ

Ռազմավարական հրամանատարը պետք է՝

- ✓ Օպերատիվ հրամանատարին փոխանցի ռազմավարական պլան,
- ✓ Վերահսկի օպերատիվ պլանի նախապատրաստումը՝ երաշխավորելով դրա համապատասխանությունը ռազմավարական մտադրություններին,
- ✓ Շարունակի երկխոսությունը կազմակերպիչների հետ,
- ✓ Հավաքին ոստիկանության հաջող աշխատանքն ապահովելու համար հատկացնի համարժեք ռեսուրսներ:

Օպերատիվ հրամանատարությունը պետք է՝

- ✓ Առանձին հարցերի շուրջ երկխոսություն վարի կազմակերպիչների հետ,
- ✓ Ռազմավարական մտադրություններին համահունչ ձևակերպի օպերատիվ պլան և ներկայացնի մարդու իրավունքների վրա ազդեցություն ունեցող ցանկացած գործողության մասին որոշումների կայացման հստակ գործընթացներ,
- ✓ Որոշի կոնկրետ իրավիճակներում կիրառելի օպերատիվ տարբերակները և դրանց հետ կապված ռիսկերին արձագանքելու մեթոդները,
- ✓ Համապատասխան ամբողջ տեղեկատվությունը փոխանցի ռազմավարական հրամանատարությանը,
- ✓ Սահմանի ոստիկանության համապատասխան նպատակները,
- ✓ Հաշվի առնելով ռիսկերի գնահատումը՝ սահմանի այդ նպատակներին հասնելու համար պահանջվող մարտավարությունները,
- ✓ Նշանակի օպերատիվ հրամանատարներին:

ԳԼՈՒԽ 7. ՄԱՐՏԱՎԱՐԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓՈՒԼ

Օպերատիվ պլանը կազմելուց հետո օպերատիվ հրամանատարը համապատասխան թվով անձնակազմ է հատկացնում առանձին գործառույթներին և աշխարհագրական տարածքներին: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել նրան, որ համապատասխան խնդիրները դրվեն միայն պատշաճ պատրաստված և համապատասխանաբար սպառազինված ոստիկանների վրա:

Հարկ է դիտարկել մարտավարական հրամանատարների նշանակման հարցը և սահմանել նրանց հատուկ դերերը և գործառույթները: Մարտավարական հրամանատարներին պետք է բավարար ժամանակ տրվի իրենց աշխատանքին նախապատրաստվելու և համապատասխան ստուգումներն իրականացնելու համար, ինչը հնարավորություն կտա խուսափել չնախատեսված խնդիրներից: Նրանք պետք է կազմեն իրենց առանձին մարտավարական պլանները՝ ըստ իրենց վերագրված դերերի:

Հանրային հավաքների ժամանակ մարտավարական խնդիրներ իրականացնող բոլոր ոստիկաններն օգտվում են սեփական իրավունքների և ազատությունների պաշտպանության իրավունքից: Անհրաժեշտ է նկատի առնել ոստիկանության աշխատակիցների առողջության և անվտանգության հարցերը՝ երաշխավորելով նրանց արդյունավետ պատրաստվածությունն ու ռեսուրսներով ապահովումը: Հաջորդող բաժիններում ներկայացվում են մի շարք կարևոր խնդիրներ, որոնք պետք է նկատի առնեն ոստիկանության հրամանատարները:

Գիտելիք

Հրահանգավորում. Ոստիկանների հրահանգավորումը ցանկացած օպերացիայի կենսականորեն կարևոր մասն է, որի նպատակն է ապահովել ծառայություն իրականացնող յուրաքանչյուր ոստիկանի իրազեկումը միջոցառման ռազմավարական մտադրությունների և մարտավարական պարամետրերի մասին: Ոստիկանության բոլոր աշխատակիցները պետք է լիարժեք կերպով հասկանան իրենց առանձնահատուկ դերերն ու պարտականությունները: Հրահանգավորումների ժամանակ ոստիկաններին պետք է նաև հիշեցնել մարդու իրավունքների միջազգային իրավունքից բխող իրենց պարտականությունների, ուժի կիրառման սահմանափակումների և ուժի կիրառման յուրաքանչյուր դեպք վերադաս հրամանատարին զեկուցելու անհրաժեշտության մասին:

Մարտավարական հրամանատարը պատասխանատու է մարտավարական բոլոր հրամանատարների հրահանգավորման համար, որոնք, իրենց հերթին, պետք է հրահանգներ տան իրենց ենթակայության տակ գտնվող բոլոր ոստիկաններին,

նախքան նրանց ծավալումը հավաքի վայրում: Օպերատիվ պլանը պետք է նախապես տրված լինի բոլոր ոստիկաններին՝ պատշաճ տեղեկացումն ու նախապատրաստումն ապահովելու նպատակով: Որպես տարբերակ՝ օպերատիվ պլանը կարող է պաշտպանված կապուղիներով նախապես ուղարկվել ոստիկանության բոլոր աշխատակիցներին: Հարկ է պահպանել բոլոր հրահանգավորումների բովանդակության արձանագրությունները: Խոշոր կամ հնարավոր բարդ օպերացիաների դեպքերում օպերատիվ հրամանատարության լավագույն փորձը ենթադրում է շտաբային վարժանքի կազմակերպում մարտավարական բոլոր հրամանատարների համար, որի ընթացքում կարող են փորձարկվել զանազան սցենարներ և արտակարգ իրավիճակներ:

Լավ հրահանգումը պետք է՝

- Տեղի ունենա հարմար վայրում (հաշվի առնելով խմբի չափը):
- Անցկացվի այնպիսի ժամի և այնպիսի վայրում, որ չլինեն ընդհատումներ:
- Հնարավորություն տա ոստիկաններին՝ իրենց դերերը հստակեցնելու նպատակով հարցեր ուղղել հրահանգող աշխատակցին:
- Ուղեկցվի մարտավարական հրամանատարների գրավոր ցուցումներով, որպեսզի կասկածներ չլինեն յուրաքանչյուր անհատին ներկայացվող պահանջների վերաբերյալ:
- Լինի հետևողական, եթե օպերացիայի ծավալներից ելնելով՝ անհրաժեշտ է իրականացնել մի քանի հրահանգում:

Մարտավարական հրամանատարները պատասխանատու են նաև հավաքի ամբողջ ընթացքում ոստիկաններին փոփոխությունների և զարգացումների մասին տեղեկացնելու համար:

Աջակցում

Ստորև ներկայացված քայլերը հավաքին արդյունավետ աջակցելու նախապայմաններն են:

Ուսուցում. Հավաքին ծառայություն իրականացնող ոստիկանները պետք է անցած լինեն համապատասխան վերապատրաստում և հանդերձավորվեն ըստ իրենց դերերի և կոնկրետ պարտականությունների:

Հանդերձանքի ստուգում. Ոստիկանության յուրաքանչյուր աշխատակից պատասխանատու է սեփական հանդերձանքը ստուգելու և դրված խնդիրների հետ դրա համապատասխանության մեջ համոզվելու համար: Երբ ոստիկանների ծավալումը կատարվում է հատուկ միջոցներով (ոչ մահացու կամ հրազեն), հարկ է մանրամասն գրանցել դրանց սերիական համարները, ում և երբ են դրանք կցվել,

իսկ զինամթերք տրամադրելու դեպքում՝ ոստիկանին տրված փամփուշտների քանակը: Վերադաս աշխատակիցը պետք է վերահսկի այս գործընթացը և ստորագրի արձանագրությունները:

Հավաքի օրը ոստիկանությունը պետք է ունենա բավարար քանակությամբ ռադիոկապի սարքեր (այդ թվում՝ լրացուցիչ մարտկոցներ)՝ մարտավարական հրամանատարների և օպերատիվ հրամանատարի միջև կապն ապահովելու համար: Հատուկ ուշադրության պետք է արժանանան հեռու տեղակայված ոստիկանները, որոնք մեծ հավանականությամբ կարող են առանձնացվել կամ մեկուսացվել ծառայակիցներից: Պետք է տրամադրել նաև բջջային հեռախոսահամարների պատճենած ցանկ՝ ռադիոկապի խաթարման դեպքում կապ պահպանելու համար: Հնարավորության դեպքում, բոլոր ռադիոխոսակցությունները և կարևոր հեռախոսազրույցները պետք է ձայնագրվեն և պահպանվեն՝ հետագա ստուգման համար (եթե դրանք պահանջվեն հետաքննության համար):

Հարկ է ստուգել բարձրախոսները և համոզվել, որ դրանք հարմար են տվյալ հավաքի չափերի և վայրի համար: Էլեկտրոնային ցուցանակները պետք է լինեն համապատասխան լեզվով և ունենան առանձին էներգասնուցում:

Տրանսպորտ. Պետք է ապահովել բավարար քանակությամբ տրանսպորտային միջոցներ՝ հավաքին ծառայություն իրականացնող ոստիկաններին իրենց տեղաբաշխման վայրերը հասցնելու համար: Բացի այդ, հատուկ տրանսպորտային միջոցներ պետք է տրամադրվեն ձերբակալվածների անվտանգ տեղափոխման համար: Եթե աշխատում են նաև բժշկական անձնակազմեր, ապա պետք է ապահովել հարմար տրանսպորտային միջոցներ հիվանդ կամ վնասվածք ստացած անձանց տեղափոխելու համար: Եթե հավաքին ծառայություն են իրականացնում տվյալ տարածքին անծանոթ ոստիկաններ, ապա պետք է նկատի առնել տեղացի վարորդներ ներգրավելու հարցը և ԳՏՀ նավիգատորների օգտագործման նպատակահարմարությունը:

Սնունդ և հանգիստ. Երկար ժամանակ ծառայություն իրականացնող ոստիկաններին անհրաժեշտ է սնունդ և զուգարան: Հրամանատարները պետք է ապահովեն բավարար քանակությամբ սնունդ և կազմակերպեն զուգարանային հարմարություններ կամ նախատեսեն կարճատև փոխարինման հնարավորություն՝ զուգարանից օգտվելու համար: Շոգ կլիմայական պայմաններում ծառայություն իրականացնող ոստիկանների համար առանձնակի կարևորություն ունի ջուրը, որի պահանջն ավելի է մեծանում, երբ ոստիկանների ծավալումը կատարվում է հասարակական կարգի պահպանման հանդերձանքով: Նույն տրամաբանությամբ, ցուրտ կլիմայական պայմաններում հավաքների ընթացքում և դրանցից հետո պետք է ապահովել տաք ըմպելիքներ:

Հանգիստ և վերականգնում. Հավաքի ընթացքում երկարատև ծառայություն իրականացրած ոստիկաններին պետք է տրամադրվի հանգստի համար համարժեք ժամանակ: Հանգիստ պետք է տրվի հրամանատարներին և առաջին գծում եղած ոստիկաններին: Հոգնածությունը նվազեցնում է անհատի՝ որոշումներ կայացնելու կարողությունը, հետևաբար չափազանց կարևոր է ապահովել ոստիկանների պատշաճ հանգիստը, ինչը ենթադրում է փոխարինող անձնակազմի առկայություն: Մանրակրկիտ պլանավորման միջոցով պետք է խուսափել հերթապահության չափազանց երկար տևողություններից:

Շահագրգիռ կողմեր. Մինչև միջոցառումը պետք է հատկորոշել և ներգրավել շահագրգիռ այլ կողմերի: Հրշեջ, փրկարար և շտապ օգնության ծառայությունները պետք է անխափան իրականացնեն իրենց աշխատանքը հավաքի ամբողջ ընթացքում, քանի որ նրանց պարտականությունների կատարմանը ցանկացած միջամտություն կարող է ծանր հետևանքներ առաջացնել տեղական բնակչության անվտանգության համար: Հավաքը կարող է ազդեցություն ունենալ նաև այլ տեղական ծառայություններ մատուցողների վրա և նրանց հետ նախապես ստեղծված կապը կարող է հնարավորություն տալ արագ լուծել խնդիրները:

Օպերացիային տարբեր գործակալությունների մասնակցության դեպքում պետք է ապահովել նրանց լավ համակարգումը: Դա ենթադրում է հրամանատարական հստակ շղթայի ձևավորում, գործակալությունների միջև կապի ապահովման նպատակով նույն ռադիոհաճախականությունների օգտագործում և այլն: Կարող է նպատակահարմար լինել մարտավարական հրամանատարական միասնական սենյակ ունենալը, որտեղ այլ կարևոր շահագրգիռ կողմերի ներկայացուցիչները կկարողանան ուղիղ կապի մեջ լինել օպերատիվ հրամանատարի հետ՝ լայն հասարակության կարիքների բավարարումն ապահովելու համար: Ամեն դեպքում, միջոցառման հիմնական վերահսկողությունը մնում է ոստիկանության հրամանատարական խմբի ձեռքերում:

Հաղորդակցություն

«Անակնկալների բացառում». Նախապատրաստական փուլում երկխոսություն ստեղծելու և ամբողջ ընթացքում այն պահպանելու միջոցով հնարավոր է բաց պահել հաղորդակցության ուղիները (ոչ միայն հավաքի կազմակերպիչների և ոստիկանության միջև, այլև շահագրգիռ այլ կողմերի հետ), ինչը հնարավորություն կտա ոստիկանությանը կայացնել լավ մտածված որոշումներ և հերքել սուտ տեղեկությունները և խուսափել թյուրըմբռնումներից: Ոստիկանությունը պետք է գիտակցի, որ ուրիշները կարող են սխալ ընկալել ոստիկանության գործողությունները և ոստիկանական ուժերի տեղաբաշխումները, հետևաբար գործողությունից առաջ ծանուցումը կարող է նվազեցնել և ցրել լարվածությունը:

Հավաքից առաջ ոստիկանությունը պետք է նաև կապ հաստատի կարևոր քաղաքացիական շահագրգիռ կողմերի հետ և նրանց հետ կանոնավոր կապ պահպանի հավաքին նախորդող ժամանակահատվածում: Որոշ դեպքերում կապը պետք է պահպանել հավաքի ամբողջ ընթացքում և նույնիսկ ավարտից հետո: Հնարավոր է, որ ոստիկանությունից պահանջվի կապ հաստատել տեղական ազդակիր բիզնեսների սեփականատերերի կամ տեղական համայնքի միջնորդների հետ՝ մտահոգություններին արձագանքելու և անհրաժեշտ տեղեկատվությունը փոխանցելու համար:

Կազմակերպիչներ. Կազմակերպիչների հետ կապը պետք է պահպանել հավաքին նախորդող ողջ ժամանակահատվածում և հավաքի ամբողջ ընթացքում: Կապը պահպանելու լավագույն միջոց կարող է լինել բջջային հեռախոսահամարների փոխանակումը: Լավ աշխատակարգ է նաև միջոցառման պլանավորման շատ վաղ փուլում հաղորդակցության հարցերով հատուկ պատասխանատու նշանակելը, որը կմնա այդ պաշտոնին ամբողջ գործընթացի ժամանակ:

Կարգադրիչներ. Հավաքների կազմակերպիչների կողմից միջոցառմանն աջակցելու և օրենքով սահմանված սահմանափակումների կատարումն ապահովելու նպատակով հստակ որոշարկված կարգադրիչներ ներգրավելը լավ աշխատակարգ է (որը պարտադիր չէ, որ լինի օրենքով նախատեսված պարտավորություն): Կարգադրիչները չունեն իրավապահների լիազորությունները և չեն կարող ուժ կիրառել, սակայն փոխարենը պետք է աջակցեն մասնակիցներին խորհրդով (ըստ անհրաժեշտության) կամ ապահովեն հավաքի մասնակիցների համագործակցությունը համոզելու միջոցով:

Մարդու իրավունքների պաշտպաններ. Մարդու իրավունքների պաշտպաններն անհատներ են, ովքեր անհատապես կամ այլոց հետ միասին խաղաղ միջոցներով խրախուսում և պաշտպանում են մարդու իրավունքները: Նրանց դերը ճանաչված է ՄԱԿ-ի «Համընդհանուր ճանաչված մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության և ապահովման ուղղությամբ անհատների, խմբերի և հասարակական մարմինների իրավունքների և պարտականությունների վերաբերյալ» հռչակագրում: Մարդու իրավունքների պաշտպան խմբերի վաղ ներգրավումը կարող է օգնել թուլացնել լարվածությունը և ձևավորել վստահություն: Ոստիկանության հրամանատարները՝ «անակնկալների բացառման» մոտեցման շրջանակներում պետք է ձգտեն մշտական կապ հաստատել իրավապաշտպան կազմակերպությունների հետ, խրախուսեն մտքերի փոխանակումը և արձագանքեն այն մտահոգություններին, որոնք իրավապաշտպան խմբերը ցանկանում են բարձրացնել հավաքների ժամանակ ոստիկանության գործունեության վերաբերյալ:[24]

---

24 «Մարդու իրավունքների պաշտպանների պաշտպանության վերաբերյալ ուղեցույցներ» (Վարշավա, ԺՀՄԻԳ, 2014թ.) <http://www.osce.org/odihr/119633>.

Մարդու իրավունքների պաշտպանները կարող են մասնակցել հավաքների ազատության մշտադիտարկման աշխատանքներին, իսկ ոստիկանությունը պետք է համագործակցի նրանց հետ և աջակցի նրանց աշխատանքին:

Գործարար համայնք. Նախքան միջոցառումը, հարկ է կապ հաստատել հավաքի հնարավոր ազդակիր տեղական բիզնեսների հետ՝ նրանց բացվելու ժամերի, աշխատակիցների փոխադրման և առաքումների վերաբերյալ այլընտրանքային պայմանավորվածություններ ձեռք բերելու համար: Սա հատկապես կարևոր է, եթե կոնկրետ բիզնեսը հավաքի ուշադրության թիրախն է:

Տեղական համայնք. Հավաքի տարածքում բնակվող, աշխատող կամ տրանսպորտից օգտվող անձանց համար հավաքի մասնակիցների քանակի և մասշտաբի մասին վաղ ձեռք բերված տեղեկությունները հնարավորություն կտան նրանց նախատեսել այլընտրանքային տարբերակներ: Տեղեկատվության տրամադրումը հնարավորություն կտա մարդկանց ճշտել տեղափոխվելու երթուղիները, կարգավորել երեխաների խնամքի հետ կապված հարցերը կամ ձեռք բերել կարևոր ապրանքներ մինչև հավաքի սկիզբը: Ոստիկանության հրամանատարները նվազեցնում են համայնքի անդամների և հավաքի մասնակիցների միջև ընդհարման հավանականությունը:

Տարբերակում

Օպերատիվ և մարտավարական հրամանատարները պետք է իրազեկեն բոլոր ոստիկաններին հավաքի մասնակիցների հնարավոր բազմազանության, հավաքի ընթացքում անհատների տարբեր խմբերի կարիքները հասկանալու անհրաժեշտության, խաղաղ և ոչ խաղաղ մասնակիցների միջև մշտապես տարբերակում կատարելու մասին՝ նպատակ ունենալով ապահովել հավաքի անվտանգ ընթացքը:

Նախապատրաստության եզրափակիչ փուլում
հրամանատարական խմբի պարտականությունների ստուգաթերթիկ

Ռազմավարական հրամանատարությունը՝

- ✓ Ռազմավարական մտադրություններին օպերատիվ պլանի համապատասխանությունն ապահովելու նպատակով ստուգում է այն:
- ✓ Ապահովում է բավարար ռեսուրսների տրամադրումը:
- ✓ Երաշխավորում է մեդիա ռազմավարության գործարկումը:
- ✓ Օպերատիվ հրամանատարին փոխանցում է նոր տեղեկություններ:

Օպերատիվ հրամանատարությունը՝

- ✓ Շարունակում է կապ պահպանել կազմակերպիչների և շահագրգիռ կողմերի հետ:
- ✓ Նշանակում և հրահանգում է մարտավարական հրամանատարներին:
- ✓ Երաշխավորում է մարտավարական պլանների համապատասխանությունը օպերատիվ և ռազմավարական պլաններին:
- ✓ Սահմանում է ոստիկանության հրահանգման ժամերը և վայրերը:
- ✓ Կազմակերպում է շտաբային վարժանք կամ իրավիճակների մոդելավորում մարտավարական հրամանատարների համար:[25]
- ✓ Ռիսկերի գնահատման հիման վրա շարունակ վերագնահատում է ոստիկանության գործունեության նպատակները և օպերատիվ տարբերակները՝ դրանց համապատասխանությունը ապահովելու համար:
- ✓ Նոր տեղեկություններ է փոխանցում ռազմավարական հրամանատարությանը:

Մարտավարական հրամանատարությունը՝

- ✓ Կազմում է մարտավարական պլաններ՝ խորհրդակցելով օպերատիվ հրամանատարության և մարտավարական այլ հրամանատարների հետ:
- ✓ Ստուգում է իր պատասխանատվության տակ գտնվող աշխարհագրական տարածքները և սպառազինությունը՝ վաղ փուլում չնախատեսված խնդիրները լուծելու համար:
- ✓ Ապահովում է իր վրա դրված խնդրի լուծման համար անհրաժեշտ անձնակազմի առկայությունը:
- ✓ Ստուգում է իր անձնակազմի պատրաստվածության և հանդերձանքի համապատասխանությունը դրված խնդիրներին:
- ✓ Նոր տեղեկությունների ի հայտ գալու դեպքում՝ փոխանցում է դրանք օպերատիվ հրամանատարությանը:
- ✓ Հետևում է հավաքին ծառայություն իրականացնող ոստիկանների ինքնազգացողությանը:

---

25 Շտաբային վարժանքը նախքան միջոցառումը կազմակերպվող վարժանք է, որը հաճախ իրականացվում է քննարկման ձևաչափով և նպատակ ունի ստուգել պլանների վավերականությունը:

Մաս III

ՀԱՎԱՔՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

ԳԼՈՒԽ 8. ԱՋԱԿՑՈՒՄ ԽԱՂԱՂ ՀԱՎԱՔՆԵՐԻՆ

Ցանկացած հավաքի արդյունավետ աջակցման գրավականը պատշաճ պլանավորումն է: Երբ մշակվում է պլան, որում նշված են ոստիկանության գործունեության հստակ նպատակները, հավաքների մեծ մասի դեպքում չի պահանջվում օպերատիվ կամ ռազմավարական հրամանատարության մասնակցությունը որոշումների կայացմանը: Հավաքների մեծամասնությունը՝ մեծ կամ փոքր, չի ստեղծում լուրջ խնդիրներ, և ունենում է կարճատև միջամտություն այլոց կյանքին: Շատ քիչ թվով հավաքներ են հանգեցնում բռնության կամ անօրինական վարքագծի դրսևորումների:

Ոստիկանությունը պարտավոր է աջակցել այն հավաքներին, որոնց մասին իրազեկվել է կամ որոնց անցկացումը համաձայնեցվել է՝ մշտապես նպատակ ունենալով ապահովել ոստիկանության ռեսուրսների այն նվազագույն առկայությունը, որն անհրաժեշտ է հավաքի խաղաղ ընթացքի համար: Հավաքի ամբողջ ընթացքում մարտավարական հրամանատարները պետք է շարունակաբար վերլուծեն ոստիկանական օպերացիան և օգտվեն որոշումների կայացման մոդելից, որը պետք է լինի իրենց գործողությունների հիմքը:

Այս բաժինը ներկայացնում է հիմնական գործողությունները, որոնք ոստիկանությունը պետք է իրականացնի խաղաղ հավաքներին աջակցելու ընթացքում: Նախ դիտարկվում են այն հավաքները, որոնց վերաբերյալ ոստիկանությունն ունի նախնական տեղեկատվություն (կա՛մ հավաքի կազմակերպիչները պաշտոնապես կամ ոչ ֆորմալ եղանակով իրազեկել են իշխանություններին, կա՛մ կան ոստիկանության օպերատիվ-հետախուզական տվյալներ): Հետո ներկայացվում է ոստիկանության արձագանքումն ինքնաբուխ, առանց իրազեկման կամ ոստիկանությանը նախապես չծանուցված հավաքներին: Դիտարկվում են նաև մի շարք գործոններ, որոնք ազդում են հավաքներին մասնակցողների վարքագծի վրա, և պարզաբանվում է, թե ինչպես հավաքները կարող են վերածվել անկարգությունների և բռնության:

Գիտելիք

Ոստիկանության հրամանատարները պետք է տիրապետեն հավաքի մասին ամենաթարմ տեղեկություններին և ապահովեն, որ հավաքի, մասնակիցների կամ այլ զարգացումների մասին ցանկացած նոր տեղեկատվություն, որը կարող է ազդել միջոցառման վրա, փոխանցվի ոստիկանության համապատասխան աշխատակիցներին:

Աջակցում

Ներկա գտնվել. Կարևոր է, որ հնարավորության սահմաններում, ոստիկանության ծառայողները դիրքավորվեն նախքան մասնակիցների հավաքվելը: Ոստիկանությունը պետք է հնարավորություն ունենա դիրքավորել ծառայողներին և սարքավորումներն ամենահարմար կետերում, տեղադրել պատնեշներ, փակել ճանապարհները, ուսումնասիրել ռիսկերի գնահատումը և համոզվել, որ ամեն ինչ պատրաստ է հավաքին աջակցելու և մասնակիցներին պաշտպանելու համար:

Ոստիկանության ծառայողների նախօրոք ծավալումն առանձնակի կարևոր է, երբ հավաքի վայրը կամ երթուղին առնչվում է վիճելի կամ հատուկ նշանակության տարածքի հետ: Եթե կարևոր է, որ հավաքի կամ բողոքի ակցիայի մասնակիցները չհավաքվեն որոշակի վայրերում, ապա ոստիկանությունը պետք է առաջինը զբաղեցնի այդ տարածքները, ինչը կկանխի կամ կնվազեցնի դժգոհությունը և կբացառի հավաքից կամ դրա մի մասից տարածքն ազատելու նպատակով ոստիկանության կողմից ուժի կիրառման անհրաժեշտությունը:

Տարածքում նախապես ապահովված ներկայությունը հնարավորություն կտա ոստիկանության ավագ սպայական կազմի անդամին հանդիպել կազմակերպիչների և շահագրգիռ այլ կողմերի, օրինակ՝ ԶԼՄ-ների հետ, տրամադրել նրանց թարմացված տեղեկություններ կամ կազմակերպել ճեպազրույց պլանավորված միջոցառումների մասին՝ «անակնկալների բացառման» սկզբունքին համահունչ:

Ոստիկանության հրամանատարները պետք է ընդունեն տարբերությունը ոստիկանության տեսանելի ներկայության և ոստիկանության փաստացի ներկայության միջև: Որտեղ հնարավոր է, ոստիկանների և սարքավորումների մեծ մասը պետք է տեղակայվի հավաքի վայրի մոտակայքում, բայց հավաքին մասնակցող մարդկանց տեսադաշտից դուրս: Այլընտրանքային տարբերակ է հասարակական կարգի պահպանության հատուկ պատրաստված ստորաբաժանումների մանևրային ծավալումն առանց հատուկ միջոցների (անհրաժեշտության դեպքում պաշտպանական հանդերձանքը կարելի է արագ հագնել):

Հանդուրժողականություն. Ոստիկանությունը պիտի միշտ գիտակցի, որ, մի կողմից, իր պարտականությունն է պաշտպանել հասարակական կարգը և օրինականությունը, մյուս կողմից՝ ունեցած դերը նաև որոշակի հայեցողություն է վերապահում: Հանրային հավաքների ժամանակ ծառայության ընթացքում ոստիկանությունը պետք է պատրաստ լինի հանդուրժողականություն դրսևորել օրենքի թեթև խախտումների ու հասարակական կարգի փոքր խախտումների նկատմամբ: Օրենքի՝ չափից ավելի խիստ կիրառումը կարող է առաջացնել հավաքի մասնակիցների զայրույթը, հանգեցնել լարվածության աճի և

ոստիկանության հանդեպ հակակրանքի: Այս մոտեցումը պետք է ակնհայտ լինի օպերատիվ պլաններում, և այն պետք է վերահաստատվի հրահանգումների ժամանակ:

Որոշումների արձանագրում. Ոստիկանության հրամանատարները պետք է ապահովեն իրենց կայացրած որոշումների և տված հրամանների արձանագրումն իրական ժամանակի ռեժիմով, և դրանք պետք է պահպանվեն և հասանելի լինեն միջոցառումների արդյունքների հետագա ամփոփման համար:

Հաղորդակցություն

Գործընթացի մյուս փուլերի օրինակով՝ հարկ է շարունակել բաց երկխոսությունը կազմակերպիչների հետ: Եթե կազմակերպիչը դիմել է կամավոր կամ արհեստավարժ կարգադրիչների օգնությանը, ապա կարելի է նշանակել կապերի համար պատասխանու ոստիկանության աշխատակից, որը տեղեկություններ կփոխանցի կարգադրիչներին կամ հավաքի կազմակերպիչներին (կարգադրիչների բացակայության դեպքում): Տեղեկատվությունը պետք է ներկայացվի ոստիկանության օպերացիայի մասին ճեպազրույցի ընթացքում, իսկ գլխավոր կարգադրիչի հետ կապ պետք է պահել հավաքի ամբողջ ընթացքում:

Մարտավարական հրամանատարներից մեկի առջև պետք է դրվի կազմակերպիչների հետ հավաքի ամբողջ ընթացքում երկխոսության ուղիները բաց պահելու խնդիր, այսինքն՝ հարկ է փոխանցել կազմակերպիչների խնդրանքները օպերատիվ հրամանատարին, իսկ ոստիկանության տեղեկություններն ու խնդրանքները՝ կազմակերպիչներին:

Ոստիկանությունը պետք է երաշխավորի, որ բոլոր աշխատակիցները ազնիվ և հետևողական ուղերձ փոխանցեն նրանց, ում հետ կապի մեջ են հավաքի ընթացքում: Այդ շարքում են միջոցառման կազմակերպիչները, մասնակիցները, միջոցառմանը դեմ եղողները, լրատվամիջոցները և մարդու իրավունքների պաշտպանները: Ոստիկանները պետք է նաև երաշխավորեն տեղեկատվության հոսքի շարունակականությունը միջոցառման ընթացքում և բոլոր կարևոր կողմերի իրազեկումը իրավիճակի և հանգամանքների փոփոխությունների մասին, ինչը համահունչ է «անակնկալների բացառման» սկզբունքին:

Ոստիկանության օպերացիային հավանաբար օժանդակող պարզ տեղեկատվություն հավաքելու փոխարեն ոստիկանությունը պետք է ձգտի նաև պահպանել երկկողմ հաղորդակցություն կարևոր կողմերի հետ: Նպատակը ոչ միայն իրական ժամանակով կազմակերպիչների և մասնակիցների կարծիքներին ծանոթանալն է և եղած մտահոգություններին արձագանքելը,

այլև կազմակերպիչներին տեղեկությունների փոխանցումն է, որի արդյունքում նրանք կկարողանան փոխել վարքագիծն ու աշխատաոճը՝ աճող լարվածությանն արձագանքելու համար: Մասնավորապես, տեղեկատվության երկկողմ փոխանակումը կարող է հավաքի ընթացքում ծնվող և փթթող կեղծ լուրերի դեմ պայքարի արդյունավետ միջոց լինել: Կեղծ լուրերը կարող են առավել խնդրահարույց լինել այնպիսի իրավիճակներում, երբ կազմակերպիչների և ոստիկանության միջև փոխհարաբերությունները վատն են և զուրկ վստահությունից:

Ոստիկանության հրամանատարները պետք է հատուկ ուշադրություն դարձնեն ոստիկանների կրած համազգեստին և սպառազինությանը, հավաքի վայրում անմիջականորեն տեսանելի աշխատակիցների քանակին և մասնակիցների տեսադաշտում եղող մեքենաների կամ այլ սարքավորումների տեսակին: Ոստիկանների արտաքին տեսքը և նրանց ունեցած ռեսուրսներն անխոս հաղորդակցության ձև են, իսկ ոստիկանության տեսանելի ներկայությունը մտադրությունների և ակնկալիքների մասին հստակ ուղերձ է փոխանցում կազմակերպիչներին և հավաքի մասնակիցներին: Ոստիկանության ծառայողներին ամենօրյա համազգեստով տեսնելը կարող է տպավորություն ստեղծել, որ ոստիկանությունը վերահսկում է իրավիճակը և ակնկալում է հավաքի խաղաղ ընթացք, իսկ զանգվածային անկարգությունների դեմ պայքարի հատուկ միջոցներով և հանդերձանքով ոստիկանության ներկայությունը կստեղծի ավելի ագրեսիվ և անկարգությունների սպասող ոստիկանության ընկալում: Զանգվածային անկարգությունների դեմ պայքարի հատուկ միջոցներով և հանդերձանքով ոստիկանության ներկայությունը կարող է մեծացնել լարվածությունը մասնակիցների միջավայրում կամ իջեցնել ոստիկանների դեմ բռնություն կիրառելու արգելքի շեմը, քանի որ նրանք լավ պաշտպանված են երևում: Իրականում կարող է ավելանալ ագրեսիայի և ոստիկանության հետ չհամագործակցելու հավանականությունը:

Տարբերակում

Հրամանատարները պետք է իրազեկեն բոլոր ոստիկաններին հավաքի մասնակիցների հնարավոր բազմազանության և հավաքի ընթացքում մասնակիցների տարբեր խմբերի փոփոխվող կարիքներին արձագանքելու անհրաժեշտության մասին: Նրանք պետք է ի վիճակի լինեն տարբերել հավաքվածների զանազան ենթախմբերը, մասնավորապես՝ իրազեկ լինեն անհատների մասին, ովքեր կարող են իրենց խոսքերով կամ արարքներով նպաստել լարվածության աճին և ում, միգուցե, անհրաժեշտ լինի կառավարել արագ ու վաղ միջամտության միջոցով:

Ոստիկանության վարքագիծը

Ոստիկանության հրամանատարները պետք է հիշեն, որ ոստիկանները նույնքան ենթակա են ամբոխի դինամիկայի ազդեցություններին, որքան հավաքի մասնակիցները: Ոստիկանությունը՝ իր ժողովրդագրական կազմով հաճախ նման է հավաքի մասնակիցներին և ոստիկանները կարող են ունենալ զանազան զգացմունքներ (անհանգստություն, անվստահություն, զայրույթ կամ վախ)՝ հատկապես, երբ ավելանում է լարվածությունը: Ոստիկանների խմբի և ցուցարարների խմբի հիմնական տարբերություններն են այն, որ առաջինները պատրաստված են հասարակական կարգի պահպանությանը, ունեն հատուկ միջոցների ընտրանի և գտնվում են ավագ սպայի ենթակայության տակ: Հետևաբար, կարևոր է, որ օպերատիվ և մարտավարական հրամանատարներն ապահովեն ոստիկանների կարգապահությունը և վերահսկեն նրանց անգամ բանավոր վիրավորանքների առանձին դրսևորումների կամ սադրանքի այլ ձևերի հետ առերեսվելու պայմաններում:

Ոստիկանության հրամանատարները պետք է միշտ ձգտեն ամրապնդել հավաքի մասնակիցների հետ հարաբերությունները: Նրանք պետք է հիշեն, որ հավաքի դինամիկան կարող է փոխվել մասնակիցների և ոստիկանության միջև փոխհարաբերությունների, ինչպես նաև հավաքներին աջակցելու հարցում ոստիկանության դերակատարման օրինականության ընկալման շնորհիվ: Բոլոր հավաքներում կան մասնակիցների տարբեր խմբեր, որոնք տարբեր կարծիքներ ունեն ոստիկանության ու իրար մասին և տարբեր վերաբերմունք են դրսևորում ոստիկանության և միմյանց հանդեպ: Քիչ են այնպիսի հավաքները, որոնք լիովին թշնամաբար են տրամադրված ոստիկանության հանդեպ: Ինչպես ոստիկանության հանդեպ թշնամանքը կարող է աճել ի պատասխան ոստիկանական գործողությունների, նույնպես և նույն պատճառով կարող է ավելանալ համակրանքն ու հարգանքը ոստիկանների հանդեպ: Ոստիկանների հանդուրժողական և մարդասիրական արարքները (օրինակ՝ օգնություն ծանր վիճակում հայտնվածներին) կարող են բարելավել ցուցարարների հետ հարաբերությունները, նպաստել մասնակիցների ինքնահսկողությանը և օգնել թուլացնել լարվածությունը: Մինչդեռ ոստիկանության կողմից ուժի կիրառումը կարող է բացասաբար ազդել մասնակիցների վարքագծի վրա և մեծացնել հավաքի այլ կետերում անկարգությունների հավանականությունը: Ոստիկաններին պետք է միշտ խրախուսել դրական հարաբերություն ունենալ մասնակիցների հետ:

Երբ ոստիկանության գործելաոճն առճակատումն է, նրա լեգիտիմությունը մասնակիցների աչքերում ընկնում է կամ խարխլվում: Երբ ոստիկանությունը, սակայն, ստանձնում է աջակցող դեր և հարաբերություններ է հաստատում մարդկանց հետ, ոստիկանները հավանաբար դրականորեն են ընդունվում մասնակիցների կողմից: Ենթադրվում է, որ ոստիկանության լեգիտիմությունն

ընդունող մասնակիցները խաղաղ վարքագիծ կդրսևորեն՝ զգալիորեն նվազեցնելով անկարգությունների հավանականությունը: Այս մասնակիցները, հավանաբար, կխրախուսեն նաև մյուսներին մնալ խաղաղ և զերծ կմնան փոքրամասնությանը բնորոշ բռնի վարքագծից: Հետևաբար, հավաքի բոլոր փուլերում կապ պաշտպանելը և աջակցելը միջոցառման խաղաղ և հաջող ավարտի գրավականն է:

Ինքնաբուխ հավաքներ

Որոշ դեպքերում հավաքները կազմակերպվում են ի պատասխան ընթացիկ կարևորություն կամ առանձնակի հրատապություն ունեցող ինչ-որ խնդրի, և կազմակերպիչների/մասնակիցների մոտ կարող է առաջանալ ինքնաբուխ հավաքվելու ցանկություն: Նման հանգամանքներում հնարավոր չէ բավարարել օրենքով նախատեսված իրազեկման պահանջները: Այլ դեպքերում հավաքը կարող է կազմակերպվել մոտակայքում եղողներին անակնկալի բերելու նպատակով: «Ֆլեշմոբ»-ի կարգի ինքնաբուխ հավաքը, երբ խումբը շատ արագ հավաքվում է (սովորաբար կազմակերպվում է կարճ հաղորդագրությունների կամ սոցիալական ցանցերի միջոցով) հայտարարություն կամ կարծիք հայտնելու նպատակով, ավարտից հետո արագ ցրվում է: Որոշ հավաքներ կազմակերպվում են առանց ոստիկանությանն իրազեկելու, քանի որ կազմակերպիչները չեն վստահում ոստիկանությանը կամ մտավախություն ունեն, որ հավաքը կարող է արգելվել, և չեն ցանկանում հայտնել, որ այն տեղի է ունենալու:

Թեև նման միջոցառումները կարող են խախտել տեղական օրենսդրությունը, ոստիկանությունը պետք է աջակցի խաղաղ հավաքներին: Եթե ոստիկանությունը հնարավորություն չի ունեցել պատրաստվել միջոցառմանը և ռեսուրսներ հատկացնել դրա համար, կարող է պահանջվել ոստիկանության արագ արձագանքում: Ընդհանուր առմամբ, ոստիկանությունը պետք է ունենա արտակարգ պլաններ՝ նմանօրինակ վիճակներում գործելու համար:

Տեխնոլոգիական վերջին զարգացումները (սոցիալական ցանցերը, բջջային հեռախոսակապը և համացանցը) էապես հեշտացնում են մարդկանց համար հավաքների կազմակերպումը կարճ ժամանակում իրազեկման միջոցով՝ չդիմելով կազմակերպման ավանդական միջոցներին: Իրականում, բազմաթիվ ինքնաբուխ հավաքներ կարող են չունենալ ֆորմալ կազմակերպիչ, այլ ոչ ֆորմալ կերպով կազմակերպվել զանազան սոցիալական ցանցերի միջոցով:

Երբ հավաքը տեղի է ունենում, իսկ ոստիկանությունը նախապես չի ստացել որևէ իրազեկում, ակնկալվում է, որ նախնական գործողությունները պետք է ձեռնարկեն առաջինն այդ վայրում հայտնված ոստիկանները: Առաջին արձագանքողների առաջին խնդիրը պետք է լինի աջակցել խաղաղ հավաքին և գտնել իրավիճակը

կայունացնելու լավագույն միջոցները: Այլ կերպ ասած՝ նրանք պետք է երաշխավորեն, որ տեղի ունեցող միջոցառումը մնա խաղաղ, մասնակիցները լինեն ապահով և, անկարգությունների դրսևորման դեպքում, այդ վարքագիծը չտարածվի կամ չվտանգի ուրիշներին:

Եթե ոստիկանությունն արձագանքում է չպլանավորված հավաքի, ապա ոստիկանության հրամանատարները (օպերատիվ կամ մարտավարական մակարդակներում) պետք է նախ գնահատեն իրավիճակը և կիրառեն 3-րդ գլխում ներկայացված որոշումների կայացման մոդելը՝ հավաքին արձագանքելու և աջակցելու մեթոդները գնահատելու համար: Կարևոր է, որ ոստիկանությունը փորձ կատարի երկխոսություն հաստատել կազմակերպիչների հետ՝ ոստիկանության և կազմակերպիչների մտադրությունները հասկանալու համար: Ոստիկանությունը պետք է զգուշավորություն ցուցաբերի, որ իր գործողություններ չսադրեն հավաքի մասնակիցներին անկարգությունների կամ չվտանգեն նրանց: Իրավիճակի տեսողական գնահատում կատարելով՝ ոստիկանությունը կկարողանա համարժեք ռեսուրսներ հատկացնել հավաքին առավել արդյունավետ կերպով աջակցելու համար: Եթե հավաքը բնույթով բռնի է, ապա գերակայություն է դառնում բռնության զսպումը: Չպլանավորած հավաքների մեծ մասը շարունակում է լինել խաղաղ և պահանջում է ոստիկանության՝ սովորականից մի փոքր ավելի մեծ ուշադրությունը:

Ոստիկանության թիվ մեկ խնդիրը պետք է լինի հանրային անվտանգությունը, իսկ հավաքների մեծ մասի ընթացքում և դրանից հետո (երբ մարդիկ հեռանում են տարածքից) անհրաժեշտ է վերահսկել տրանսպորտային հոսքերը: Հարկ է նաև նկատի ունենալ հավաքի հնարավոր հակառակորդներին և նրանց կողմից լարվածություն ստեղծելու կամ բռնի գործողությունների դիմելու հավանականությունը:

Ոստիկանությունը պետք է նաև հաշվի առնի հավաքին անուղղակի ներգրավված անձանց անվտանգության խնդիրները: Միգուցե անհրաժեշտ լինի հավաքի շրջակայքում փոխել տրանսպորտային հոսքերը և տարածել տեղեկություններ տրանսպորտի ուշացումների մասին: Հարկ է տեղյակ պահել ծառայություններին (մասնավորապես՝ հրշեջ և շտապ օգնության ծառայություններին), քանի որ դրանց ուշացումը կարող է ազդել միջադեպին հրատապ արձագանքելու կարողության վրա: Ոստիկանությունը պետք է նաև ուշադրություն դարձնի տարածքում գտնվող տեղական համայնքին և բիզնեսներին: Խոշոր հավաքները կարող են գրավիչ լինել պատեհապաշտ հանցավոր տարրերի համար: Ի վերջո, ոստիկանությունը պետք է հաշվի առնի մասնակիցների և մոտակայքում գտնվող անձանց սեռատարիքային կազմը և այլ գործոններ:

Եթե հավաքը շարունակվում է երկար ժամանակ, ոստիկանությունից կարող է պահանջվել ձևավորել հրամանատարական շղթա, սահմանել ռազմավարական

մտադրությունները, հավաքին ոստիկանության գործունեության նպատակները, հատկացնել օպերատիվ միջոցներ և ռեսուրսներ, շարունակել պաշտոնական շփումները կազմակերպիչների հետ: Ցանկացած խաղաղ հավաք կարող է որոշակի անհարմարություններ ստեղծել հանրության համար, սակայն ոստիկանության նախնական գործողությունները պետք է ուղղված լինեն աջակցելուն, այլ ոչ թե հավաքը հեռացնելուն կամ ցրելուն, եթե չկա հանրային անվտանգության համար ակնհայտ վտանգ: Հավաքը արգելելու կամ ցրելու ցանկացած որոշում պահանջում է մանրամասն դիտարկել բոլոր ազդակիրների իրավունքները և ազատությունները, ինչպես նաև իրավիճակի սրման և ցրելու հետ կապված վնասների ռիսկերը:

Մասնակիցներին հավաքը լքելու հնարավորության ընձեռում

Հավաքի մասնակիցները ինչ-որ փուլում որոշելու են թողնել հավաքի վայրը: Հավաքների մասնակիցներին և այլ անհատներին պետք է հնարավորություն տալ ցրվել բնական ճանապարհով և լքել տարածքն առանց ոստիկանության միջամտության: Հարկ է նկատի ունենալ մասնակիցներին հավաքի վայրից դեպի անվտանգ ճանապարհներ մուտք ապահովելու և նրանց՝ բռնությամբ սպառնացող թշնամաբար տրամադրված հակառակորդների հարձակումներից պաշտպանելու խնդիրները:

Եթե հավաքը ցրվում է ոստիկանության՝ ցանկացած ակտիվ գործողության արդյունքում, ապա պետք է միշտ հաշվի առնել մի շարք գործոններ՝

- Մարդկանց հեռանալու հնարավորություն տալու համար ելքի կամ փախուստի հարմար ուղիների առկայությունը,
- Փոքր ցրված խմբերը կարող են ավելի մեծ դժվարություն ստեղծել ոստիկանության համար, քան մեկ խոշոր խումբը,
- Ցրվելուց հետո անհատները պետք է հնարավորություն ունենան վերադառնալ տուն,
- Պարզապես ոստիկանների մեծ խմբերի տեսանելի ներկայությունը կարող է հետաձգել հավաքի բնականոն ցրվելը, հետևաբար կարելի է հեռացնել ոստիկաններին տեսադաշտից՝ պատրաստ պահելով անհապաղ ծավալման համար,
- Ոստիկանությունը պետք է նաև հաշվի առնի հավաքը ցրելուն առնչվող այլ կոնկրետ խնդիրներ, որոնք կարող են անհամաչափ ազդել կանանց, երեխաների կամ հաշմանդամություն ունեցող անձանց անվտանգության վրա:

Եթե հավաքը չի ազդում կամ աննշան է ազդում այլոց իրավունքների ու ազատությունների կամ տեղական բնակչության բարեկեցության վրա և կազմակերպվում է անվտանգ վայրում, ապա ոստիկանությունը պետք է թույլ տա մասնակիցներին մնալ այդտեղ և լուծել հավաքի երկարատև ներկայության հարցը՝ երկխոսության միջոցով:

Աջակցման փուլում հրամանատարական խմբի պարտականությունների ստուգաթերթիկ

Ռազմավարական հրամանատարությունը՝

- ✓ Մշտադիտարկում է հավաքին ոստիկանության գործունեությունը՝ երաշխավորելով դրա համապատասխանությունը մարդու իրավունքների պահանջներին,
- ✓ Վերանայում է ռազմավարական մտադրությունները՝ օպերացիային դրանց համապատասխանությունն ապահովելու համար,
- ✓ Համագործակցում է օպերատիվ հրամանատարի հետ՝ բավարար ռեսուրսներով ապահովելու համար,
- ✓ Հրահանգում է օպերատիվ հրամանատարին:

Օպերատիվ հրամանատարությունը՝

- ✓ Ապահովում է մարտավարական բոլոր հրամանատարների հրահանգումը օպերացիայի մասին,
- ✓ Տեղեկություններ է փոխանցում ռազմավարական հրամանատարից և ռազմավարական հրամանատարին,
- ✓ Ղեկավարում է ոստիկանության գործողությունները մարդու իրավունքներին և ռազմավարական մտադրություններին համահունչ,
- ✓ Մշտապես ուսումնասիրում է ոստիկանության գործողության նպատակները կամ ոստիկանության մարտավարությունների կիրառումը և որոշում կայացնում դրանք փոխելու կամ անփոփոխ թողնելու մասին (ելնելով ռիսկերի գնահատումից և նոր տեղեկատվությունից),
- ✓ Ապահովում է հանցավոր վարքագծի բոլոր ապացույցների պատշաճ քննությունը,
- ✓ Շարունակում է հետևել իրեն ենթակա ոստիկանների վիճակին:

Մարտավարական հրամանատարությունը՝

- ✓ Հրահանգում է իրեն ենթակա բոլոր ոստիկաններին:
- ✓ Ապահովում է բոլոր ոստիկանների գործողությունների համապատասխանությունը մարդու իրավունքների պահանջներին և հակազդում է ոչ պատշաճ բոլոր գործողություններին կամ վարքագծին:
- ✓ Առաջին իսկ հնարավորության դեպքում զեկուցում է ուժի կիրառման յուրաքանչյուր դեպքի մասին:
- ✓ Ապահովում է հանցագործության (այդ թվում՝ ոստիկանության անօրինական գործողությունների) բոլոր ապացույցների հավաքումը, պահպանումը և փոխանցումը քննչական խմբին:
- ✓ Տեղեկություններ է փոխանցում օպերատիվ հրամանատարից և օպերատիվ հրամանատարին:
- ✓ Թույլատրում կամ արգելում է ոստիկանական մարտավարությունների հավուր պատշաճի կիրառումը:
- ✓ Հետևում է իրեն ենթակա ոստիկանների վիճակին:

ԳԼՈՒԽ 9. ՀԱԿԱԶԴՈՒՄ ԱՆԿԱՐԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԵՎ ԲՌՆՈՒԹՅԱՆԸ

Ոստիկանությունը պետք է հիշի, որ հավաքների ճնշող մեծամասնությունը շարունակում է բնույթով խաղաղ լինել, պահպանում է օրենքը և այլ պահանջները, իսկ ավարտին մասնակիցներն անաղմուկ հեռանում են: Անկարգությունները և բռնությունը համեմատաբար հազվադեպ երևույթներ են, թեպետ նման դեպքերի լուսաբանման անխուսափելիության շնորհիվ կարող է ստեղծվել տպավորություն, որ դրանք տեղի են ունենում ավելի հաճախ, քան իրականում:

Ոստիկանությունը պետք է միշտ հաշվի առնի այն հանգամանքը, թե ինչպես են իրենց իրականացրած (կամ չիրականացրած) գործողությունները և կատարած (կամ չկատարած) հայտարարությունները նպաստում լարվածության աճին հավաքից առաջ կամ դրա ընթացքում: Ոստիկանությունը գրեթե չի վերահսկում հավաքվողների քանակը, սակայն որոշում է հաղորդակցության ծավալները, և այդ պատճառով էլ արդյունավետ հաղորդակցությունը (ոչ միայն հավաքի մասնակիցների և կազմակերպիչների, այլև ավելի լայն շրջանակի հետ, օրինակ՝ սոցիալական ցանցերով) և «անակնկալների բացառման» քաղաքականությունն այդքան կարևոր են: Խրախուսելով լավ վարքագիծը՝ ոստիկանությունն ավելի մեծ հնարավորություն է ստեղծում հավաքի խաղաղ ընթացքի համար, քան երբ մշտապես սպասում է վատ վարքագծին արձագանքելու համար:

Քանի դեռ հավաքը մնում է ոչ բռնի (նույնիսկ, երբ անօրինական է), ոստիկանությունը պետք է խուսափի ուժ կիրառել: Արդեն նշվել է, որ ուժը պետք է կիրառվի միայն այն դեպքում, երբ ոչ մի այլընտրանք չկա: Ցանկացած իրավիճակում ուժի կիրառումը պետք է լինի նվազագույն անհրաժեշտ չափով՝ հասարակական կարգը վերականգնելու համար: Ոստիկանությունը պետք է ունենա զանազան օպերատիվ տարբերակներ, որոնք կարող են գործարկվել հավաքը կառավարելու ընթացքում ուժի կիրառումից խուսափելու համար և, ուժի կիրառումից առաջ, հարկ է օգտագործել տարբերակներ, որոնք միջամտության փոխարեն ենթադրում են հաղորդակցություն, երկխոսություն և ապացույցների հավաքում: Հնարավորության դեպքում ոստիկանությունը պետք է համբերատար լինի և ժամանակ հատկացնի, որ լարվածությունը նվազեցնելու կամ անկարգությունները զսպելու ոչ ֆորմալ միջոցներն ազդեցություն ունենան:

Լարվածության թուլացում (դեէսկալացիա)

Դեէսկալացիա եզրույթը հաճախ սխալ է հասկացվում: Այն հավասարազոր չէ պասիվ մնալուն: Դեէսկալացիան լարվածության ակտիվ թուլացումն է հաղորդակցության և զանազան գործողությունների միջոցով, ոչ

թե անկարգությունների և բռնության փաստացի գործողությունների սկզբին սպասելը: Դեէսկալացիան պետք է համարվի ոչ թե պարզապես արձագանքում փոփոխվող իրավիճակին, այլ լինի ոստիկանության դրական և ներգործուն մարտավարությունը: Եթե իրավիճակը լարվել է և կիրառվել է ուժ, ոստիկանությունը պետք է ակտիվորեն և հնարավորինս արագ վերականգնի բնականոն վիճակը: Ինչպես բազմիցս նշվում է ձեռնարկում, ոստիկանության հրամանատարները հնարավորության դեպքում պետք է օգտագործեն հաղորդակցությունը՝ որպես լարվածությունը թուլացնելու միջոց: Մասնավորապես, ոստիկանության բոլոր հրամանատարները պետք է հավաքի ողջ ընթացքում կապ պահպանեն հավաքի կազմակերպիչի և այլ կարևոր դերակատարների հետ՝ դեմ առ դեմ շփումների կամ բջջային հեռախոսների միջոցով: Եթե կապն ընդհատվել է, ապա կապի ուղիների վերագործարկումը, երկխոսությունը և միջնորդությունը կամ հավաստիացումը չափազանց կարևոր են և պետք է լինեն նորմ: Ոստիկանությունը պետք է պատրաստ լինի բացատրել սեփական գործողությունները կամ անգործությունը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ ընդունել սեփական սխալը: Երկխոսությունը և հաղորդակցությունը կարող են մեծ ազդեցություն ունենալ լարվածությունը թուլացնելու հարցում: Ոստիկանության մշտական նպատակը պետք է լինի վերականգնել ողջամիտ կարգը և պահպանել լարվածության ցածր մակարդակը: Սակայն պետք է լինի նաև այն գիտակցությունը, որ ոստիկանության և բնակչության ընկալումները կարող են տարբերվել:

Լարվածության թուլացումը կարող է պահանջել ոչ խոսքային հաղորդակցություն, որի միջոցով ոստիկանության մտադրությունները փոխանցվում են մարդկանց ավելի մեծ խմբի (օրինակ՝ ջրցանի կամ ոստիկանության այլ մեքենաների հեռացումը տեսադաշտից, երբ դրանք այլևս անհրաժեշտ չեն): Կարելի է նաև փոխարինել պաշտպանական հանդերձանքով հասարակական կարգի պահպանության ստորաբաժանումներն ամենօրյա համազգեստ կրող տեղացի ոստիկաններով: Սակայն ոստիկանության հրամանատարը միշտ հաշվի է առնում, որ անհրաժեշտության դեպքում պարտավոր է ապահովել իր ենթակաների պաշտպանությունը:

Զսպում

Անկարգությունների դեմ պայքարի միջոցներից մեկը բռնարարների զսպումն է: Գոյություն ունեն զսպման զանազան ձևեր: Ամենաթույլ ձևը ենթադրում է աջակցություն հավաքի մասնակիցներին՝ ապահովելով նրանց անվտանգությունը երթևեկող տրանսպորտային միջոցներից: Կարող է պահանջվել ավելի էական միջամտություն, որի համար հարկ կլինի ներգրավել ոստիկանության զգալի

ռեսուրսներ (օրինակ՝ խաղաղ երթի ուղեկցումը ագրեսիվ տրամադրված ընդդիմադիրների կողքով)։

Ոստիկանության օգտագործած առավել հակասական մեթոդներից մեկը հայտնի է որպես «շուրջկալում»։ Այս դեպքում ոստիկանությունը սահմանափակում է հավաքի (դրա առանձին հատվածների) շարժը՝ ֆիզիկապես պահելով նրանց որոշակի տարածքում։ Տեսության համաձայն այդպիսով ոստիկանությունը սահմանափակում է այն մարդկանց խմբի շարժը, որոնք բռնություն պարունակող վարքագիծ են դրսևորում, կամ տեղաշարժն այն դեպքում, երբ առկա է հասարակական անկարգությունների կամ գույքին լուրջ վնաս հասցնելու անմիջական վտանգ։ Ժամանակի ընթացքում շուրջկալվածներն ազատ են արձակվում փոքր, կառավարելի խմբերով։

Ոստիկանության հրամանատարները պետք է միշտ նկատի ունենան, որ գոյություն ունի շուրջկալման անհամաչափության վտանգը՝ տևողության տեսանկյունից (հատկապես, եթե գործողությունը վատ է պլանավորված ու համակարգված) և այն դեպքում, երբ շուրջկալվածների մեջ մեծ թիվ են կազմում խաղաղ վարքագիծ դրսևորածները։ Կա նաև շուրջկալից դուրս եղողների կողմից համերաշխության գործողություններ կազմակերպելու վտանգը։ Այսպիսով, շուրջկալումը կարող է լինել հակաարդյունավետ։ Պետք է լինեն ընթացակարգեր, որոնք ելքի հնարավորություն են տալիս շուրջկալման մեջ պատահաբար հայտնված մարդկանց։ Երբ հավաքի միայն մի մասն է մասնակցում բռնի գործողություններին, մյուս մասին պետք է թույլ տալ շարունակել խաղաղ հավաքը։ Շուրջկալումը միշտ պետք է նպատակ ունենա կանխել բռնության շարունակությունը կամ աճը և խաղաղ հավաքը շարունակելու հնարավորություն տալ։

Կարևոր է, որ հավաքի կազմակերպիչները և շուրջկալվածներն իրազեկվեն շուրջկալման պատճառների և դրա հնարավոր տևողության մասին։ Շուրջկալված տարածքում հայտնված անձանց պետք է հնարավորություն տալ բավարարել իրենց հիմնական կարիքները՝ ըստ անհրաժեշտության օգտվել զուգարանից և ջուր խմել (առանձնակի կարևոր է, երբ եղանակը ծայրահեղ շոգ է կամ ցուրտ)։ Ոստիկանությունը պետք է միշտ հաշվի առնի հավաքին մասնակցողների բազմազանությունը և, հետևաբար, շուրջկալման մեջ հայտվածների կազմը։ Շուրջկալման տարածքից ելքի հնարավորություն պետք է տրվի, մասնավորապես, հնարավոր խոցելի անձանց՝ հղիներին, երեխաներին, տարեցներին և հիվանդություն կամ վնասվածքներ ունեցողներին։ Շուրջկալում պետք է իրականացվի միայն նվազագույն անհրաժեշտ տևողությամբ, և դրա անհրաժեշտությունը հարկ է վերանայել կանոնավոր պարբերականությամբ։

Շուրջկալումը լուրջ անհանգստություններ է առաջացրել հավաքների բազմաթիվ մասնակիցների, մարդու իրավունքի պաշտպան խմբերի և որոշ

դատարանների մոտ: Մի շարք հանգամանքներում ոստիկանության կողմից շուրջկալումը համարվել է անօրինական: Շուրջկալումը ոչ խտրական լինելու միտում ունի՝ ոստիկանությունը տարբերություն չի դնում մասնակիցների և ոչ մասնակիցների կամ խաղաղ և ոչ խաղաղ մասնակիցների միջև: Մի կողմից լարվածությունը կարող է մեծանալ, երբ որոշ անհատների թույլատրվում է հատել ոստիկանական շղթան, իսկ մյուսներին՝ արգելվում է դա անել, մյուս կողմից՝ ոստիկանության կորդոնը, որը չի թույլատրում լքել տարածքը, կարող է խախտել անհատի՝ ազատության և ազատ տեղաշարժի իրավունքները:[26] «ԵԱՀԿ ընտրված մասնակից պետություններում խաղաղ հավաքների մշտադիտարկման վերաբերյալ» ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի 2014թ. զեկույցը նշում է, որ «ամբոխի վերահսկման ռազմավարությունները, որոնք հիմնվում են զսպման (շուրջկալման կամ «փարախման») վրա պետք է կիրառվեն միայն այն դեպքերում, երբ անհրաժշտ են լուրջ վնասները կամ վնասվածքները կանխելու համար, և ոստիկանության այլընտրանքային մարտավարությունները, որոնք կրում են ազատության և ազատ տեղաշարժի իրավունքներն ավելի քիչ սահմանափակող բնույթ, կիրառելի չեն»:[27] Շուրջկալման միջոցով զսպումը պահանջում է նաև ոստիկանության զգալի մարդկային ռեսուրսներ և երկարատև ժամանակահատվածներով մեծ թվով ոստիկանների ծավալում:

Հավաքի ցրում

Հավաքի մասնակիցների բնականոն ցրվելը և դրա համար պայմաններ ստեղծելը միշտ էլ պետք է լինեն ոստիկանության նախընտրած տարբերակը: Ոստիկանության կողմից հավաքի ցրումը պետք է մշտապես համարվի ծայրահեղ միջոց, որին հարկ է դիմել ի պատասխան բռնարարքների կամ բռնության անմիջական սպառնալիքի դեպքում:

Օպերատիվ այլ տարբերակներ կիրառելուց առաջ ոստիկանությունը պետք է նախևառաջ դիմի տարածքն ազատելու բանավոր կոչերի և տեսողական ծանուցումների՝ բանակցելով կազմակերպիչների կամ կարևոր ազդեցիկ անձանց և կարգադրիչների հետ հավաքի վայրից շարժը կազմակերպելու համար: Սա պետք է լինի սովորական մոտեցում, երբ մարդիկ հրաժարվում են հեռանալ, եթե արդեն իսկ բռնությունը համատարած բնույթ չունի, և ցանկացած հապաղում կարող է անմիջական վտանգ ստեղծել հասարակական կարգն ապահովող ոստիկանների համար:

---

26 «Խաղաղ հավաքների ազատության ուղեցույցներ», Ծանոթագրություն 1, էջ 79

27 ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ. «ԵԱՀԿ ընտրված մասնակից պետություններում խաղաղ հավաքների մշտադիտարկման վերաբերյալ զեկույց», Վարշավա, 17 դեկտեմբերի 2014թ., <http://www.osce.org/odihr/132281?download=true>.

Բռնությամբ ուղեկցվող հավաքը ցրելու համար ուժ կիրառելու որոշում կայացնելու դեպքում հրամանը պետք է տա օպերատիվ հրամանատարը: Որոշումը պետք է լիարժեք փաստաթղթավորվի և ներկայացնի ընտրված տարբերակների ամբողջական հիմնավորումը:

Ուժ կիրառելուց առաջ հավաքին միշտ պետք է տրվեն նախազգուշացումներ: Միակ բացառությունն այն դեպքում է, երբ ցանկացած ուշացում կարող է անմիջականորեն հանգեցնել մահվան կամ ծանր վնասվածքների: Նախազգուշացում պետք է տրվի ձայնի ուժեղացման համապատասխան սարքի միջոցով, պատշաճ ձևակերպումներով և մի քանի անգամ կրկնելով: Նախազգուշացումը պետք է լինի հստակ և լսելի, չխոչընդոտվի այլ ձայներով (օրինակ՝ շարժիչների բարձր աղմուկով): Կարող է անհրաժեշտություն առաջանալ մի քանի տեղերում նախազգուշացում տալու, որպեսզի բոլոր մասնակիցները լսեն այն: Եթե հավաքը բազմալեզու է, ապա ոստիկանությունը պետք է նախազգուշացնի մի քանի լեզուներով և, եթե հնարավոր է, օգտագործի նաև ձեռագիր պաստառներ կամ էլեկտրոնային հայտարարությունների լուսատախտակներ:

Նախքան երկրորդ նախազգուշացում տալը կամ ուժ կիրառելը, ոստիկանությունը պետք է ենթարկվելու բավարար ժամանակ տա մասնակիցներին: Եթե հնարավոր է, պետք է ձայնագրել կամ տեսագրել նախազգուշացումը և հանրության արձագանքը:

Եթե ոստիկանությունը որոշում է, որ ուժի կիրառումն անհրաժեշտ է, ապա դա պետք է արվի թիրախային միջամտություններով, որոնք ուղղված են բռնարարների դեմ, բռնությունը կանգնեցնելու և հասարակական կարգը վերականգնելու համար նվազագույն անհրաժեշտ չափով են: Ոստիկանությունը պետք է նկատի ունենա հավաքի մասնակիցների բազմազանությունը և ուժի ցանկացած կիրառման հնարավոր ազդեցությունը առանձնակի խոցելի անհատների վրա:

Եթե մասնակիցների փոքր մասն է դրսևորում բռնի վարքագիծ, ապա գործողությունը պետք է ուղղվի կոնկրետ այդ անհատների դեմ՝ թույլատրելով մնացած մասնակիցներին շարունակել հավաքը կամ ցրվել բնական ճանապարհով: Հավաքը ցրելու մարտավարություն կիրառելու որոշումը պետք է հիմնված լինի մեծամասնության, այլ ոչ թե առանձին անհատների գործողությունների վրա:

Հրամանատարական խմբի պարտականությունների ստուգաթերթիկ

Ռազմավարական հրամանատարը՝

- ✓ Շարունակ հետևում է հավաքի ցրմանը՝ համոզվելու համար, որ պաշտպանվում են մարդու իրավունքները,
- ✓ Որոշում է կայացնում հավաքը ուժով ցրելու անհրաժեշտության մասին,
- ✓ Իր հսկողության տակ է վերցնում այն ռեսուրսները, որոնք այլևս անհրաժեշտ չեն օպերատիվ հրամանատարին,
- ✓ Ապահովում է ոստիկանության անօրինական գործողությունների մասին բոլոր հաղորդումները քննելու համար պատշաճ ռեսուրսների մատչելիությունը: Այն հանգամանքներում, երբ քննությունը այլ կազմակերպություն է կատարում, անհապաղ զեկուցում է հարցը և տրամադրում մատչելի բոլոր ապացույցները:

Օպերատիվ հրամանատարը՝

- ✓ Աջակցում է հավաքի խաղաղ ցրվելուն,
- ✓ Շարունակաբար վարում է երկխոսություն կազմակերպիչների և շահագրգիռ կողմերի հետ,
- ✓ Եթե խաղաղ ցրվելը հնարավոր չէ, հայցում է կամ տալիս է ուժ կիրառելու թույլտվություն, բայց միայն նպատակահարմարության պարագայում,
- ✓ Ապահովում է օպերատիվ տարբերակներ գործարկելու հրամանների կանոնավոր վերանայումը և, երբ հանգամանքները այլևս այդ չեն պահանջում, հետ է կանչում համապատասխան հրամանները,
- ✓ Ապահովում է այլևս չպահանջվող ռեսուրսների վերադարձը ռազմավարական հրամանատարի հսկողության տակ,
- ✓ Շարունակում է համապատասխան տեղեկությունների փոխանցումը ռազմավարական կամ մարտավարական հրամանատարությանը:

Մարտավարական հրամանատարը՝

- ✓ Շարունակում է տեղեկությունների փոխանցումը ռազմավարական կամ օպերատիվ հրամանատարությանը,
- ✓ Արձանագրում է ոստիկանության կողմից ուժի կիրառման բոլոր դեպքերը և մանրամասները փոխանցում օպերատիվ հրամանատարությանը,
- ✓ Ապահովում է ոստիկանների արհեստավարժ, օրինական և մարդու իրավունքների պահանջներին և օպերատիվ պլանին համահունչ գործելակերպը,
- ✓ Շարունակում է հետևել իր ենթակաների վիճակին,
- ✓ Մշտադիտարկում է հավաքից հեռացողների անվտանգությունը՝ հատուկ ուշադրություն դարձնելով առանձնակի ռիսկային գործոնների ենթակա խմբերին (օրինակ՝ միայնակ տուն վերադարձող կանայք, տեղաշարժման խնդիրներ ունեցող անձինք, ԼԳԲՏԻ մասնակիցներ):

Մաս IV

ՀԱՎԱՔԻՑ ՀԵՏՈ

ԳԼՈՒԽ 10. ԳՈՐԾՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՈՒՄ

Հավաքը սահմանվում է որպես ժամանակավոր միջոցառում, սակայն չկա համընդհանուր համաձայնություն առ այն, թե որքան կարճ կամ երկար տևելու դեպքում է հավաքը շարունակում համարվել ժամանակավոր միջոցառում: Վերջին տարիներին ավելանում են շատ ավելի երկարատև հավաքները, որոնք հաճախ ապահովում են ցուցարարների կիսամշտական ներկայությունը, վրանատիպ կառույցների և նրանց կարիքների բավարարման համար անհրաժեշտ այլ հարմարությունների առկայությունը տվյալ վայրում:

Այս գլխում ներկայացված հիմնական սկզբունքները և գործողությունները պետք է ընդունվեն բոլոր տեսակի հավաքների համար՝ անկախ այն հանգամանքից, թե եղել են բռնություններ կամ անկարգություններ, թե ոչ: Տարածքից հեռացող մարդիկ պաշտպանության կարիք ունեն, մասնավորապես եթե հավաքն ունի բռնության կիրառման հակված ընդդիմադիրներ, և կա ատելության հողի վրա հանցագործությունների վտանգ:

Խոշոր հավաքներից հետո խոցելի անձինք, այդ թվում՝ կորած երեխաները կամ անձի դեմ ուղղված հանցագործությունից տուժողները, հաճախ հայտնվում են ոստիկանության ուշադրության դաշտում: Այդ պատճառով էլ տեղում անհրաժեշտ են համապատասխան պատրաստություն ունեցող աշխատակիցներ՝ նման դեպքերի հետ աշխատանք տանելու համար: Մինչև հավաքի լիարժեք ցրվելը տեղում պետք է լինեն բժշկական անձնակազմ և սարքավորումներ:

Ռեսուրսների կառավարում

Հավաքից հետո անհրաժեշտ է աստիճանաբար վերադարձնել ռեսուրսները տեղական ոստիկանության հրամանատարներին, որոնք շարունակելու են տվյալ տարածքում ոստիկանության ամենօրյա ծառայության իրականացումը: Հասարակական կարգի պահպանության ոստիկանական ռեսուրսների դուրս բերման արագությունը կախված է կոնկրետ հանգամանքներից: Սակայն ոստիկանները նախ պետք է վերադառնան ոստիկանության իրենց բաժանմունքներ և որոշ ժամանակ մնան պատրաստ վիճակում, մինչև ծառայության ավարտի հրաման ստանալը: Այս դեպքում, եթե հավաքը ցրվելու ընթացքում տեղի ունենան միջադեպեր, խնդիրը կարգավորելու համար ոստիկանության հրամանատարության տրամադրության տակ դեռևս կլինեն բավարար ռեսուրսներ:

Հավաքի ավարտից մինչև ծառայության ավարտն ընկած ժամանակահատվածում ռազմավարական հրամանատարը պետք է ռեսուրսներ հատկացնի հնարավոր միջադեպերին արձագանքելու համար: Խնդիրների շարքում կարող են լինել՝

- Հանցագործության վայրի զննությունը,
- Պատնեշների և երթևեկության նշանների հեռացումը,
- Ձերբակալվածների հսկումը, տեղափոխումը և ձևակերպումը,
- Ապացույցների փաստաթղթավորումը,
- Ոստիկանական հանդերձանքի և սպառազինության վերադարձը և հաշվառումը:

Ուժի կիրառման արձանագրում

Ոստիկանի կողմից ուժի կիրառման մասին, առաջին իսկ հնարավորության դեպքում, զեկուցվում է վերադասին, և կազմվում է գրավոր արձանագրություն: Եթե վերադասը համարում է, որ ուժի կիրառումն արդարացված չի եղել կամ ոստիկանի դեմ բողոք է ստացվել, ապա ռազմավարական հրամանատարն ապահովում է բավարար ռեսուրսների հատկացումը ապացույցների պահպանման և ուժի կիրառման քաղաքականության ու կարգերի համաձայն քննություն իրականացնելու համար: Կարող է նպատակահարմար համարվել առանձնացված խմբի ստեղծումը, որի առաջ օպերատիվ հրամանատարը խնդիր կդնի հավաքել հետագա քննարկման և վերլուծության համար անհրաժեշտ նյութերը:

Ոստիկանների ստացած վնասվածքները

Վնասվածքներ ստացած ոստիկաններին պետք է հասանելի լինեն բժշկական ծառայություններ: Ենթադրվում է երկարատև խորհրդատվություն և սթրեսի կառավարման հարցերում օգնություն, օրինակ՝ հետտրավմատիկ սթրեսային խանգարման կամ սթրեսին սուր արձագանքման վիճակներում: Տրավմատիկ միջադեպերի մասնակցած ոստիկանները կարող են չունենալ տեսանելի ֆիզիկական վնասվածքներ, բայց կրեն հուզական խանգարումներ, որոնք կարող են դրսևորվել այլ ձևերով: Նման դեպքերում ոստիկաններին պետք է տրամադրել մասնագիտական բուժում մինչև նրանց վերադարձը պարտականությունների լիարժեք կատարմանը:

Սպառազինության վերադարձը

Հրազենը և ոչ մահաբեր սպառազինությունը վերադարձնելիս կարևոր է, որ վերադասները ստուգեն և համոզվեն, որ միջոցառումից հետո հետ է հանձնվում սպառազինության և զինամթերքի նույն քանակությունը, ինչ տրվել է միջոցառումից առաջ: Ցանկացած տարբերություն պետք է ուղեկցվի զեկուցագրով և, անհրաժեշտության դեպքում, հղումներ արվեն ուժի կիրառման

մասին զեկույցներին: Սպառազինությունը չհաշվառվելու կամ կորցնելու բոլոր դեպքերը պետք է ենթարկվեն քննության:

Ձերբակալված անձինք

Հավաքի ընթացքում մասնակիցների ձերբակալումը (վարչական, քրեական կամ այլ հանցագործություն կատարելու հիմքով) պետք է բավարարի բարձր շեմի պահանջներին՝ հաշվի առնելով ազատության և անվտանգության իրավունքը, ինչպես նաև այն հանգամանքը, որ ցանկացած միջամտություն հավաքի ազատությանն անխուսափելիորեն կախված է ժամանակի գործոնից: Ձերբակալումը պետք է օգտագործվի առավել ծայրահեղ վիճակներում, երբ չձերբակալելը կհանգեցնի ծանր քրեական հանցագործությունների:[28]

Միջոցառման ընթացքում օրինական կարգով ձերբակալված անձանց պետք է վերաբերվել հարգանքով: Նրանց, առանց անհարկի ձգձգման, պետք է տեղափոխել ոստիկանության բաժանմունք, որտեղ ձերբակալող ոստիկանը և բաժանմունքում ընդունող ոստիկանը պետք է կազմեն ձերբակալման արձանագրություն:

Ձերբակալված անձը պետք է իրազեկվի իր ձերբակալման պատճառների մասին իրեն հասկանալի լեզվով և հնարավորինս արագ պետք է ազատ արձակվի կամ կանգնի դատարանի առաջ՝ իր պահման օրինականության հարցը պարզելու համար: Հարկ է մանրամասն փաստաթղթավորել անձի ձերբակալումը և նրա հանդեպ վերաբերմունքն անազատության մեջ գտնվելու ամբողջ ընթացքում: Ձերբակալված անձն իրավունք ունի իր ձերբակալման մասին իրազեկել երրորդ կողմի, ունենալ փաստաբան և անցնել բժշկական զննություն:

Կարևոր է ձերբակալվածների տարբեր խմբերին պահել իրարից առանձին՝ հաշվի առնելով նրանց տարիքը, սեռը և ձերբակալման պատճառները: Հետևաբար, կանայք և տղամարդիկ, երեխաները և չափահասները պետք է պահվեն իրարից առանձին: Ձերբակալվածների պահման պայմանները պետք է լինեն հարմարավետ և համապատասխանեն հիգիենայի չափանիշներին՝ բավարար լուսավորությամբ և տեղաշարժվելու տարածքով: Ձերբակալվածներին պետք է հասանելի լինեն սանհանգույց, լոգարան և պատշաճ սնունդ: Խմելու ջուրը և բժշկական օգնությունը պետք է տրամադրվեն ցպահանջ:

---

28 «Մարդու իրավունքների պաշտպանների պաշտպանության վերաբերյալ ուղեցույցներ», Ծանոթագրություն 1

Պետք է սահմանված լինեն կանգնեցնելու, զննելու, բերման ենթարկելու կամ ձերբակալելու կարգերը: Չափազանց կարևոր է, որ պետությունն ընդունի հավաքի մասնակիցներին օրինական կանգնեցնելու և զննելու կամ ձերբակալելու ուղեցույցներ: Նման ուղեցույցները հստակ ցուցումներ են տալիս այն մասին, թե երբ են նման գործողությունները տեղին, ինչպես պետք է դրանք իրականացվեն, ինչպես պետք է վերաբերվել անհատների հետ ձերբակալումից հետո: Ուղեցույցները մշակելու ընթացքում հարկ է հաշվի առնել անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիության, ազատության և ազատ տեղաշարժի իրավունքներին առնչվող միջազգային օրենսդրությունը:[29]

Հրամանատարական խմբի պարտականությունների ստուգաթերթիկ

Ռազմավարական հրամանատարությունը՝
- ✓ Աստիճանաբար անց է կացնում ոստիկանության աշխատանքն ամենօրյա ռեժիմի,
- ✓ Ռեսուրսներ է հատկացնում քննության համար,
- ✓ Ապահովում է արդյունավետ քննության անցկացումը:

Մարտավարական հրամանատարությունը՝
- ✓ Վերահսկում է ձերբակալվածների պատշաճ պաշտպանությունը, տեղափոխումը և ձևակերպումը,
- ✓ Վերահսկում է ապացույցների հավաքումն ու քննությունը:

Օպերատիվ հրամանատարությունը՝
- ✓ Ապահովում է ոստիկանների կողմից ուժի կիրառման պատշաճ արձանագրումը,
- ✓ Հանցագործությունների կատարման կասկածների դեպքում՝ ապահովում է համապատասխան հաղորդումների ներկայացումը և քրեական արդարադատության ընթացակարգերի կատարումը,
- ✓ Ապահովում է ձերբակալվածների մասին տեղեկությունների պատշաճ արձանագրումը,
- ✓ Ապահովում է ձերբակալված և պահվող անձանց պատշաճ ձևակերպումը և հարգալից վերաբերմունքը նրանց նկատմամբ,
- ✓ Ղեկավարում է հանցագործության կատարման վայրի զննությունը,
- ✓ Ապահովում է սպառազինության վերադարձը,
- ✓ Ապահովում է ոստիկաններին բժշկական օգնության տրամադրումն ըստ անհրաժեշտության:

29 *Նույն տեղում*

ԳԼՈՒԽ 11. ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ ԵՎ ՔԱՂՎԱԾ ԴԱՍԵՐ

Ոստիկանության համար շատ կարևոր է դասեր քաղելթե՛ իրենց հաջողություններից, թե՛ ձախողումներից: Հավաքի ավարտին հարկ է իրականացնել ընդհանուր վերլուծություն, որի ընթացքում կդիտարկվի կատարված աշխատանքը և կվերլուծվի արդյունքների համապատասխանությունը Ռազմավարական պլանին ու ռազմավարական կոնկրետ մտադրություններին:

Նույնիսկ այն դեպքերում, երբ ամեն ինչ կարծես սահուն է ընթացել, հավաքի ավարտից հետո հարկ է կատարել լիարժեք վերլուծություն ոստիկանների և կարևոր արտաքին շահագրգիռ կողմերի հետ: Հավասարապես կարևոր է նշել դրական և բացասական բոլոր կողմերը: Վերաբերելի ամբողջական տեղեկությունների հավաքագրումը հնարավորություն է տալիս ոստիկաններին, շահագրգիռ կողմերին և, հնարավորության դեպքում նաև, հավաքի կազմակերպիչներին փոխանակել իրենց կարծիքները և տպավորությունները՝ նախանշելու համար այն դասերը, որոնք կարող են հանգեցնել հետագա պլանների կամ կազմակերպական քաղաքականությունների փոփոխության, կամ հիմք ծառայել պատրաստության վերանայմանը՝ ապագայում հավաքների ժամանակ ոստիկանության ծառայությունը բարելավելու համար:

Կենսական է, որ ներգրավված ողջ անձնակազմը՝ անկախ կոչումներից, ընկալի, որ արդյունքների ամփոփման իմաստը միջոցառումների մասին լիարժեք և ճշգրիտ տեղեկություններ ներկայացնելը և գործունեությունը բարելավելն է և չի հետապնդում մեղավորներին մատնանշելու նպատակ: Բոլոր ոստիկանները, որոնք մասնակցել են ոստիկանության օպերացիային, պետք է իրենց ներդրումն ունենան նաև արդյունքների ամփոփմանը: Այս ամենը պետք է բացատրվի շահագրգիռ կողմերին և գործընթացում ներգրավված այլ կողմերին, որոնք պետք է իմանան՝ արդյո՞ք տեղեկատվությունը տրամադրվելու է նաև լրատվամիջոցներին, թե ոչ:

Արդյունքների ամփոփման ձևերը

Սովորաբար գոյություն ունի արդյունքների ամփոփման երեք ձև՝ արդյունքների «թեժ» (կամ անմիջական) ամփոփում, արդյունքների ամփոփում կազմակերպության ներսում և արդյունքների միջգերատեսչական ամփոփում: Արդյունքների թեժ ամփոփումը տեղի է ունենում բոլոր միջոցառումներից հետո, կազմակերպության ներսում. այն պետք է տեղի ունենա համեմատաբար խոշոր միջոցառումների ավարտին, իսկ միջգերատեսչականը այն ժամանակ, երբ միջոցառման սպասարկումն ընդգրկում է միջգերատեսչական արձագանքման խոշոր բաղադրիչներ կամ ներգրավված են բազմաթիվ համայնքներ:

Արդյունքների ամփոփումը պետք է հաշվի առնի հետևյալ նկատառումները՝
- Այն պետք է իրականացվի բաց և ազնիվ եղանակով:
- Նպատակը պետք է լինի անձնական, խմբային կամ կազմակերպության մակարդակի փորձի ընկալումը և դասեր քաղելը:
- Պետք է համահունչ լինի մասնագիտական պարտականություններին:
- Պետք է հավասարապես արժևորի բոլոր մասնակիցներին:
- Պետք է պատշաճ արձանագրվի և արդյունքները տրամադրվեն խմբի անդամներին:

Արդյունքների թեժ (կամ անմիջական) ամփոփում. Արդյունքների ամփոփման այս ձևը տեղի է ունենում միջոցառումից անմիջապես հետո, երբ մարդիկ ցրվել են: Հրամանատարները հավաքում են տեղեկություններն իրենց ենթականերից, իսկ համայնքի հետ կապի կամ երկխոսության համար պատասխանատուները՝ հավաքի կազմակերպիչներից: Այս տեղեկությունները փոխանցվում են ռազմավարական հրամանատարին՝ հետագա միջոցներ ձեռնարկելու համար:

Այն հավաքներին, որտեղ սպասվում են հնարավոր բռնի գործողություններ և/կամ մեծ թվով անձանց ձերբակալություններ, պետք է ստեղծել հատուկ փաստահավաք խումբ, որը հանդիպում է բոլոր ոստիկանների հետ, մինչև այդ օրվա ծառայության ավարտը, ինչը հնարավորություն է տալիս՝
- Ապահովել ուժի կիրառման բոլոր դեպքերի պատշաճ արձանագրումը,
- Հավաքել ոստիկաններին հայտնի բոլոր ապացույցները և փոխանցել դրանք քննչական խմբին,
- Հատկորոշել աջակցության կարիք ունեցող աշխատակիցներին (օրինակ՝ հոգեբանական տրավմայի հարցերով խորհրդատվություն):

Արդյունքների թեժ ամփոփումը հնարավորություն է տալիս՝
- Ապահովել ամփոփման մասնակիցներից կարևոր տեղեկությունների արագ հավաքագրումը,
- Հավաքել և արձանագրել բոլոր միջադեպերին վերաբերող տեղեկությունները,
- Արագ քննարկել զանազան խնդիրներ և մտահոգություններ,
- Արձագանքել անվտանգության առանցքային խնդիրները,
- Շնորհակալություն հայտնել անձնակազմին և շահագրգիռ կողմերին:

Մարտավարական բոլոր հրամանատարները, նախքան իրենց հավաքագրած տեղեկություններն օպերատիվ հրամանատարությանը ներկայացնելը, կազմակերպում են արդյունքների փոքրամասշտաբ ամփոփում:

Հավաքի ավարտից հետո օպերացիայի գործողությունների քննարկումը խմբերում արդյունքներն ամփոփելու պարզ, բայց արդյունավետ միջոց է, որի

հիմնական նպատակն է դասեր նախանշել հետագայի համար:[30] Այն հիմնված է չորս հարցերի պատասխանների վրա՝

- *Ի՞նչ էինք պատրաստվում անել:* Ո՞րն էր մեր մտադրությունը: Ի՞նչ պետք է տեղի ունենար: Արդյո՞ք հրամանատարի և ոստիկանության ծառայողների մտադրությունները տարբեր են եղել: Դուք ի՞նչ մտքեր եք ունեցել:
- *Ի՞նչ արեցինք փաստացի:* Ի՞նչ ցույց կտար տեսախցիկը: Առանց մեղավորներ փնտրելու՝ դիտարկեք հիմնական իրադարձությունները, ժամանակագրությունը և դերերը:
- *Ի՞նչ սովորեցինք:* Ուշադրություն է դարձվում մեր քաղած դասերին, ոչ թե հետագա անելիքներին: Ի՞նչ գիտենք հիմա, որ չգիտեինք նախկինում: Ի՞նչ ուժեղ և թույլ կողմեր ենք բացահայտել: Ի՞նչ խորհուրդ կտայինք նրան, ով սկսում է նախապատրաստել նման օպերացիա:
- *Ի՞նչ ենք պատրաստվում անել:* Ինչպե՞ս ենք պատրաստվում հաջորդ նմանատիպ միջոցառմանը: Ի՞նչ կփոխենք:

Ուսումնառության մեկ այլ արդյունավետ տարբերակ է քննարկումը գործընկերներից կազմված գնահատող խմբերում, որոնց կազմում ոստիկանության տարբեր ծառայությունները ներկայացնող փորձառու ոստիկաններ են, որոնք հետազոտողների հետ համագործակցելով՝ տեղերում իրականացնում են դիտորդական հետազոտություններ՝ լավագույն պրակտիկան և քաղված դասերը բացահայտելու համար:[31]

Արդյունքների ամփոփում կազմակերպության ներսում. Արդյունքների ամփոփումը կազմակերպության ներսում պետք է իրականացվի այն դեպքերում, երբ անհրաժեշտ են կոնկրետ տեղեկություններ միջոցառման մասին կամ երբ միջոցառումը տեղի է ունեցել երկար ժամանակահատվածում: Ամփոփման նման ձևը հետևում է նույն ձևաչափին, թեպետ նյութերը ներկայացվում են գրավոր:

Արդյունքների ամփոփումը կազմակերպության ներսում՝

- Տեղի է ունենում միջոցառումից հետո չորս շաբաթվա ընթացքում (բացառիկ դեպքերում կարող է տևել ավելի երկար),
- Ընդգրկում է նույն հիմնական դերակատարներին, ինչ արդյունքների թեժ ամփոփումը,
- Պետք է անդրադառնա կազմակերպության, ոչ թե անհատական խնդիրներին,

---

30 Տե՛ս՝ «Օպերացիայի ավարտից հետո արդյունքները վերլուծելու գործնական ուղեցույցներ» <http://www.commonknowledge.org/ docs/Nancy%20Dixon%20-%20After%20Action%20 Review%20(AAR)%20Guidelines.pdf>.

31 «GODIAC – Երկխոսության և հաղորդակցության լավագույն պրակտիկան՝ որպես քաղաքական հավաքների ոստիկանական ապահովման ռազմավարական սկզբունքներ Եվրոպայում. Դաշտային հետազոտությունների ձեռնարկ» (Ստոկհոլմ, Պոլիսեն, 2013), <http:// polisen.se/ PageFiles/321996/Field_study_Handbook_2013.pdf>.

- Պետք է դիտարկի թե՛ ուժեղ, թե՛ թույլ կողմերը, ինչպես նաև գաղափարները՝ ուղղված ապագային,
- Հնարավորություն է տալիս շնորհակալություն հայտնել անձնակազմին և շահագրգիռ կողմերին:

Արդյունքների միջգերատեսչական ամփոփում. Երբ հավաքի աջակցմանը մասնակցել են մի շարք գերատեսչություններ կամ ներգրավված են բազմաթիվ համայնքներ կամ շահագրգիռ կողմեր, հարկ է կազմակերպել արդյունքների միջգերատեսչական ամփոփում: Ամփոփման ձևաչափը մնում է նույնը: Սակայն կարելի է կիրառել բազմամակարդակ ամփոփման գործընթաց, երբ արդյունքների ամփոփումներ են իրականացվում զանազան գործակալությունների ներսում: Դրանց արդյունքները տրամադրվում են կենտրոնական մարմնին, որը հավաքում և մշակում է տեղեկությունները:

Արդյունքների միջգերատեսչական ամփոփումը՝
- Տեղի է ունենում միջոցառումից հետո վեց շաբաթվա ընթացքում (բացառիկ դեպքերում կարող է տևել ավելի երկար),
- Պետք է կենտրոնանա միջգերատեսչական համակարգման կամ համայնքի վրա ազդեցության հարցերի վրա,
- Պետք է դիտարկի ուժեղ և թույլ կողմերն ապագայի տեսանկյունից,
- Մասնակցության հնարավորություն է տալիս արտաքին շահագրգիռ կողմերին, կարող է ընդունել հանրային երկխոսության կամ հանրային միջոցառումների ձևաչափեր,
- Հնարավորություն է տալիս շնորհակալություն հայտնել անձնակազմին և շահագրգիռ կողմերին:

Արդյունքների ամփոփման համար պետք է ներգրավել անկախ արտաքին մարմին, երբ՝
- Հավաքի կամ ցրվելու ընթացքում տեղի է ունենում լուրջ միջադեպ,
- Բռնկվել է խոշոր մասշտաբի բռնություն,
- Օգտագործվել են ոստիկանության մեծ ուժեր,
- Ստացվել է ոստիկանության անօրինական գործողությունների մասին հավաստի հաղորդում,
- Ռազմավարական հրամանատարի կարծիքով դա կնպաստի ոստիկանության ապագա ծառայությանը:

Եթե անհրաժեշտ է արդյունքների նմանօրինակ ամփոփում, ապա դրան ներկա գտնվելու հնարավորություն պետք է տրվի կազմակերպիչներին, մասնակիցներին և այլ շահագրգիռ կողմերի:

Քաղված դասեր

Կազմակերպության ներսում կամ թեժ ամփոփումն ավարտելուց և բոլոր փաստաթղթերը թարմացնելուց և մշակելուց հետո՝ ռազմավարական հրամանատարը պարտավոր է կազմել զեկույց, որում պետք է ներկայացվեն միջոցառումից դասեր քաղելու հիմքերը:

Այս զեկույցը պետք է՝
- Ամփոփի իրադարձությունների հաջորդականությունը,
- Նույնականացնի բոլոր ներգրավված սուբյեկտների գործառույթները,
- Նկարագրի ոստիկանների գործողությունները,
- Զերծ մնա անհատական գործողությունների քննադատությունից,
- Ներկայացնի ճշգրիտ ժամանակացույց,
- Լինի փաստահենք, հակիրճ և օբյեկտիվ:

Այս զեկույցը հնարավորություն կտա ոստիկանությանը՝
- Ցուցադրել՝ որտեղ է արձագանքումը եղել արդյունավետ, իսկ որտեղ՝ ոչ, ինչպես նաև ներկայացնել տեղի ունեցածի օբյեկտիվ պատճառները,
- Առաջարկել ոստիկանության ապագա աշխատանքը բարելավելու ուղիները,
- Խրախուսել բաց մշակույթ:

Համագործակցություն հանրության հետ. Մի կողմից՝ քաղած դասերի մասին փաստաթուղթը պետք է դառնա ոստիկանության կազմակերպության ներքին պատրաստության գործընթացի մասը, մյուս կողմից՝ այն պետք է օգտագործվի որպես արտաքին շահագրգիռ կողմերի, այդ թվում՝ հավաքի կազմակերպիչների, մասնակիցների, քաղաքական գործիչների և քաղաքական կուսակցությունների, լրատվամիջոցների և մարդու իրավունքների պաշտպան կազմակերպությունների հետ կապերն ու վստահությունը վերահաստատելու գործընթացի կամ հանրային հաշվետվողականության շարունակական գործընթացի մաս:

Նմանօրինակ երկխոսությունը և հաղորդակցությունը հատուկ կարևորություն են ստանում, եթե հավաքին տեղ են գտել բռնություններ կամ անկարգություններ, կամ հանրությունը քննադատել է միջոցառման ընթացքում ոստիկանության գործողությունները: Սա ոստիկանության՝ դրական, համայնքակենտրոն, հաշվետու գործունեության կենսական բաղադրիչ է և ոստիկանության՝ մարդու իրավունքների վրա հիմնված գործունեության հիմնարար մաս: Երբ ոստիկանության գործունեությունը հավաքին բացասաբար է ընկալվում և, մասնավորապես, ոստիկանությունն ուժ է կիրառել (կամ չի կարողացել պաշտպանել հավաքն ուրիշներից), ապա դա խնդրահարույց ժառանգություն և բեռ է ապագա միջոցառումների համար, քանի որ մեծացնում է հիասթափության, թշնամության և զայրույթի վտանգը: Այսպիսի նախապատմությունը հետագա միջոցառումներին

կարող է հեշտությամբ հանգեցնել առճակատման ոստիկանության հետ: Հանրության հետ պատշաճ համագործակցության, թափանցիկ գնահատման և, եթե անհրաժեշտ է, քննության միջոցով դա պետք է կանխել:

Արձանագրությունների վարում. Պլանավորման գործընթացի, դերերի և պարտականությունների, որոշումների կայացման գործընթացների հիմքում ընկած ռազմավարական մտադրությունների և այդ որոշումների արդյունքների մասին տեղեկությունները պետք է հասանելի լինեն քննության համար (հատկապես այն որոշումներ դեպքում, որոնք ազդում են անհատի իրավունքների և ազատությունների վրա): Օգտագործելով այս ձեռնարկում ներկայացված մոդելները և պլանավորման համակարգը՝ ոստիկանության հրամանատարական խումբը պետք է կարողանա կազմել կառուցվածքային պլաններ և որոշումների մատյաններ, որոնք կհանդիսանան արդյունքների ամփոփման գործընթացի մաս և կնպաստեն ապագա միջոցառումների նախնական պլանավորման գործընթացին:

Միջոցառման ավարտին կամ, օրեր շարունակ տևող միջոցառումների դեպքում, հերթափոխի ավարտին ոստիկանության բոլոր աշխատակիցները պետք է վերլուծեն իրենց գործողությունները և համոզվեն, որ իրենց և այլոց գործողությունների վերաբերյալ կազմվել են ճշգրիտ արձանագրություններ: Բոլոր գրառումները պետք է ստորագրվեն, կնքվեն, դրանց վրա պետք է ֆիքսել ամսաթիվը՝ նշելով կազմելու ժամը, ապա ներկայացվեն վերադասի ստուգմանն ու ստորագրմանը:

Բոլոր ոստիկանները պետք է արձանագրեն քրեական հանցագործության կամ կարգապահական խախտման վերաբերյալ բոլոր դիտարկումները կամ պահպանված ապացույցները: Ոստիկանները պարտավոր են արձանագրել նաև ուժի կիրառման բոլոր դեպքերը, և դրա մասին պետք է անհապաղ զեկուցել վերադասին:

Բացի այդ, հրամանատարները պետք է կազմեն ստացված տեղեկությունների և ծառայողական պարտականությունները կատարելու ընթացքում կայացրած որոշումների գրավոր արձանագրություն: Օպերատիվ հրամանատարությունը պետք է արձանագրի բոլոր կարևոր որոշումները՝ ներկայացնելով որոշման հիմքերը, առկա տարբերակները և որոշման արդյունքը: Օգտագործելով որոշումների կայացման մոդելը հրամանատարները կարող են վստահ լինել, որ արձանագրել են բոլոր կարևոր փաստերը: Մարտավարական հրամանատարները նույնպես պետք է արձանագրեն իրենց ստացած և օպերատիվ հրամանատարությանը փոխանցած բոլոր տեղեկությունները, քանի որ դա կարող է որոշումների կայացման գործընթացի մաս կազմել: Եթե արձանագրության կամ մատյանի վարման համար մարտավարական հրամանատարը ներգրավել է մեկ

այլ աշխատակցի, հրամանատարը պարտավոր է ստուգել մատյանի գրառումները և համոզվել, որ դրանք ճիշտ են արտացոլում փաստերը:

Օպերատիվ հրամանատարը նույնպես պատասխանատվություն է կրում իր բոլոր ենթակաների գրառումները ժամանակին ավարտելու համար, այնուհետ, նշելով ամսաթիվը, ստորագրում է փաստաթղթերը մինչև ոստիկանների հերթափոխի ավարտը: Բացառություն կարող է արվել վնասվածքների պատճառով բժշկական օգնություն ստացող ոստիկանների կամ ծառայողական այլ պարտականություններ կատարելու պատճառով այդ պահին զբաղված ոստիկանների դեպքում: Նման դեպքերում, նրանք պետք է ավարտեն իրենց գրավոր փաստաթղթերը գործնականում հնարավոր ամենակարճ ժամկետում, որից հետո դրանք պետք է ստորագրի օպերատիվ հրամանատարը:

Օպերատիվ հրամանատարը պարտավոր է պահպանել միջոցառման գրավոր ժամանակացույցը, որտեղ նշված են ստացված տեղեկությունները, ոստիկանության ուժերի ծավալումները և գործողությունները, միջադեպերը և ոստիկանության արձագանքումը: Նրան օգնում է խումբ, որն արձանագրում է այդ բոլոր մանրամասները, սակայն դարձյալ օպերատիվ հրամանատարն է պարտավոր երաշխավորել այդ արձանագրությունների ճշտությունը և ստորագրել դրանք որպես իրադարձությունների և փաստերի ճշգրիտ արձանագրում: Օպերատիվ հրամանատարից պահանջվում է պահպանել կայացրած կարևոր որոշումների և ռազմավարական հրամանատարությանը իր փոխանցած տեղեկությունների անձնական գրառումներ: Նրանից պահանջվում է նաև ստուգել և ստորագրել օպերատիվ հրամանատարների արձանագրությունները:

Ռազմավարական հրամանատարությունից նույնպես պահանջվում է արձանագրել իր որոշումների կայացման գործընթացները և ռազմավարական մտադրությունների բոլոր փոփոխությունների հիմնավորումները: Նրանք պարտավոր են նաև ստուգել և ստորագրել օպերատիվ հրամանատարության արձանագրությունները:

Այս արձանագրությունները թափանցիկության և հաշվետվողականության կենսական ապացույց են և ստուգման հնարավորություն են տալիս պետությանը, քաղաքացիներին կամ վերահսկողական մարմիններին: Դրանք նաև օգտագործվում են արդյունքների ամփոփման ընթացքում տեղեկությունների մշակման համար: Հարկ է հիշել, որ գաղտնի բնույթի տեղեկությունները պահանջում են զգուշավորություն՝ անհատների անձնական կյանքին անհարկի միջամտությունը բացառելու համար: Ոստիկանությունը պարտավոր է հարգել տեղեկատվության գաղտնիությունը մի շարք պատճառներով (օրինակ՝ անձնական կյանքի անձեռնմխելիությունը, հանցագործությունների

քննությունը, անմեղության կանխավարկածի սկզբունքը և պետական անվտանգությունը)։ Մյուս կողմից, ոստիկանությունը պարտավոր է վերլուծել տեղեկությունները և հավասարակշռություն գտնել այն ամբողջությամբ կամ մասնակի հրապարակելու կամ, անձնական կյանքի գաղտնիության իրավունքից ելնելով, այն չհրապարակելու միջև։ Ոստիկանությունը երբեք չպետք է թաքցնի տեղեկատվությունը զուտ իրավախախտումները, ոստիկանության սխալները կամ անօրինական գործողությունները թաքցնելու համար։

Գործողությունների ծրագիր. Քաղված դասերի մասին զեկույցի եզրափակիչ մասը պետք է ներկայացնի առաջարկություններ հետագա բարելավումների վերաբերյալ։ Այս առաջարկությունները պետք է վերածվեն գործողությունների ծրագրերի, որոնք սահմանում են կազմակերպության ներսում բարելավումների պլանը։

Գործողությունների ծրագիրը պետք է լինի՝

- **Առանձնահատուկ** — մանրամասն նկարագրում է գործունեությունը, ձախողությունները, լավագույն պրակտիկան և թերությունները, ինչպես նաև բարելավման համար անհրաժեշտ գործողությունները,
- **Չափելի** — նշում է՝ ինչպես ի ցույց դնել իրականացված բարելավումները,
- **Իրագործելի** — պետք է ունենա նպատակներ, որոնց կազմակերպությունը կարող է հասնել,
- **Վերաբերելի** — պարունակելու է բարելավումներ, որոնք փաստացի վերաբերում են ոստիկանությանը, այլ գործակալություններին վերաբերող առաջարկությունները ուղարկվում են նրանց՝ սեփական վերլուծության համար,
- **Ժամանակահեն** — պարունակելու է բարելավումների իրականացման իրատեսական ժամկետներ։

Զեկույցը և դրանում զետեղված փաստերը պետք է տրամադրվեն այլ գերատեսչությունների կամ հրապարակվեն հանրության համար, եթե չեն պարունակում գաղտնի տեղեկություններ։ Նախքան հանրության համար զեկույցը հրապարակելը, դրանից պետք է հանել գաղտնի տեղեկությունները։ Քաղված բոլոր դասերը պետք է հանգեցնեն ոստիկանության բոլոր խմբերի (հատուկ ուշադրություն դարձնելով հրամանատարներին) պատրաստման ծրագրերի փոփոխության։

Արդյունքների ամփոփման և գնահատման ընթացքում հրամանատարական խմբի պարտականությունների ստուգաթերթիկ

Ռազմավարական հրամանատարությունը՝

- ✓ Ապահովում է արդյունքների ամփոփման պատշաճ իրականացումը յուրաքանչյուր միջոցառումից հետո,
- ✓ Մշակում է օպերատիվ հրամանատարից ստացված տեղեկությունները և ներկայացնում դիտողություններ,
- ✓ Արդյունքների ամփոփման հիման վրա պատրաստում և կազմում է զեկույց՝ կից առաջարկություններով և գործողությունների ծրագրով,
- ✓ Ապահովում է ռազմավարական որոշումների փաստաթղթավորումը և ստուգում ու ստորագրում է օպերատիվ հրամանատարի գրառումները:

Օպերատիվ հրամանատարությունը՝

- ✓ Մարտավարական հրամանատարներից հավաքում է արդյունքների ամփոփման տվյալները և ներկայացնում դիտողություններ,
- ✓ Հավաքում և մշակում է տեղեկություններ՝ մինչև ռազմավարական հրամանատարին ներկայացնելը,
- ✓ Ապահովում է միջոցառման ժամանակացույցի, ոստիկանության ուժերի ծավալումների, միջադեպերի և գործողությունների գրավոր արձագանքումը,
- ✓ Արձանագրում է կայացված բոլոր կարևոր որոշումները,
- ✓ Ստուգում ու ստորագրում է մարտավարական հրամանատարի գրառումները:

Մարտավարական հրամանատարությունը՝

- ✓ Հավաքում է արդյունքների ամփոփման տվյալներ իր ենթականերից կամ շահագրգիռ կողմերից և ներկայացնում է դիտողություններ,
- ✓ Հավաքում և մշակում է տեղեկություններ՝ մինչև օպերատիվ հրամանատարին ներկայացնելը,
- ✓ Ապահովում է ենթակաների կողմից արձանագրությունների և գրառումների լիարժեք պատրաստումը, ստուգում և ստորագրում է դրանք.
- ✓ Արձանագրում է իր կայացրած որոշումները և գրի առնում այլ կարևոր տեղեկությունները,
- ✓ Միջոցառումից հետո աջակցություն է ապահովում ոստիկաններին (հանգիստ, արտաժամյա ծառայության փոխհատուցում, ստացված վնասվածքների բուժում, սթրեսների կառավարում, հոգեբանական խորհրդատվություն, կատարողականի գնահատում, պարգևատրում և այլն:

Հավելված

ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

Հասկացությունների բառարանը պարզաբանում է ձեռնարկում օգտագործված հիմնական հասկացությունները: Ներկայացված սահմանումները ծառայում են սույն ձեռնարկի նպատակներին և չեն հանդիսանում ԵԱՀԿ պաշտոնական սահմանումները:

Հավաք	Ընդհանուր կարծիք արտահայտելու նպատակով մի խումբ անհատների նպատակային ներկայություն հանրային վայրում
Հակընդդեմ հավաք	Մեկ այլ հավաքին արտահայտված կարծիքներին անհամաձայնություն արտահայտելու նպատակով կազմակերպված հավաք, որը տեղի է ունենում նույն կամ գրեթե նույն վայրում և ժամին ինչ հիմնական հավաքը
Վտանգ	Այն ամենը, ինչ կարող է մարմնական վնասվածք պատճառել անհատին
Օրինական հավաք	Հավաք, որը համապատասխանում է ներպետական օրենքների և օրենսդրության բոլոր պահանջներին
Ոչ մահաբեր զենք	Զենքի համակարգ կամ օպերատիվ տարբերակ, որը թեպետ նախատեսված չէ մահ պատճառելու համար, որոշակի կիրառման դեպքում կարող է առաջացնել կյանքի հետ անհամատեղելի վնասվածքներ
Իրազեկում	Ծանուցում, որը տեղեկացնում է պլանավորվող հավաքի մասին և չի հանդիսանում հավաքվելու թույլտվության հայտ
Օպերատիվ հրամանատար	Աշխարհագրական տարածքի կամ որոշակի գործառույթի համար պատասխանատու ոստիկանության կրտսեր սպա
Կազմակերպիչ	Հավաքի համար հիմնական պատասխանատվություն կրող անձ կամ անձինք
Խաղաղ հավաք	Հավաք, որտեղ հավաքական խմբի և առանձին մասնակիցների գործողությունները կրում են խաղաղ բնույթ (անգամ սակավաթիվ մեկուսի անձանց կողմից հրահրած բռնարարքների դեպքում)
Ոստիկանության նպատակներ	Օրինական նպատակներ, որոնք օպերատիվ տարբերակների միջոցով իրագործում է ոստիկանությունը՝ հավաքի ընթացքում հասարակական կարգի պահպանության ռազմավարական մտադրություններին հասնելու համար

Համաչափության սկզբունք	Սկզբունք, որը պահանջում է, որ իշխանությունների օրինական նպատակին հասնելու համար նախապատվությունը միշտ տրվի նվազագույն միջամտության միջոցներին
Բողոք	Առանձին անձի, խմբի կամ կազմակերպության կողմից անհամաձայնության կամ առարկության ֆորմալ արտահայտում, որը կարող է լինել հավաքների, ոչ բռնի ուղղակի ակցիայի կամ քաղաքացիական անհնազանդության ձևաչափով
Ցույց	Ստատիկ (անշարժ) հանրահավաք
Ռիսկ	Վտանգի՝ մարդկանց մարմնական վնասվածքներ կամ գույքային վնասներ պատճառելու հավանականությունը
Համընթաց հավաքներ	Հավաք, որը տեղի է ունենում նույն վայրում և նույն ժամին, ինչ մեկ այլ հավաք, սակայն որևէ կապ չունի մյուս միջոցառման հետ
Ինքնաբուխ հավաք	Հավաք, որը տեղի է ունենում որպես հրատապ արձագանքում իրադարձությանը կամ նորությանը
Կարգադրիչ	Հավաքի կազմակերպիչի(-ների) հետ համագործակցող անհատ, ում պարտականությունն է աջակցել միջոցառմանը և օգնել ապահովել համապատասխանությունը պարտադրված օրինական սահմանափակումներին
Ռազմավարական հրամանատար	Ոստիկանության ավագ սպա, որը կարող է ռեսուրսներով ապահովել հավաքի ընթացքում ոստիկանության օպերացիան կամ վերահսկել այդ օպերացիան
Ռազմավարական մտադրություններ	Գերակա մտադրությունները, որոնք սահմանում են հավաքին առնչվող ոստիկանական գործունեության նպատակները
Մարտավարական հրամանատար	Ոստիկանության միջին օղակի սպա, ում պարտականությունների շրջանակում է հավաքի ընթացքում ոստիկանության գործունեության պլանավորումը և ղեկավարումը
Մարտավարական տարբերակներ	Ոստիկանության նպատակներին հասնելու համար ոստիկանության տրամադրության տակ եղող կոնկրետ միջոցներ
Ապօրինի հավաք	Հավաք, որն ընթանում է հավաքները կարգավորող օրենքի պահանջների խախտումով
Բռնություն	Ֆիզիկական ուժի ապօրինի օգտագործում կամ չարաշահում
Բռնի վարքագիծ	Վարքագիծ, որը ֆիզիկական կամ զգայական վնաս է պատճառում կամ սպառնում պատճառել ուրիշներին
Բռնի հավաք	Հավաք, որի ընթացքում դրսևորվում է հավաքական վարքագիծ, որը ֆիզիկական կամ զգայական վնաս է պատճառում կամ սպառնում պատճառել ուրիշներին

ՆԱԽՔԱՆ ՀԱՎԱՔԸ, ԴՐԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԵՎ ԴՐԱՆԻՑ ՀԵՏՈ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԱԿԱՆ ՏԱՐԲԵՐ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԻ ԴԵՐԵՐԻ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐ

ՆԱԽՔԱՆ հավաքը

Ռազմավարական հրամանատարությունը՝

- Հավաքի համար մշակում է ռազմավարական պլան՝ ռազմավարական մտադրություններով, որոշում է ոստիկանական գործունեության ոճը և մեդիա ռազմավարությունը:
- Ձևավորում է ռազմավարական պլան, որը հիմնվում է չորս հիմնական սկզբունքների վրա՝ աջակցում, գիտելիք, հաղորդակցություն և տարբերակում:
- Գիտի՝ ինչ տեղեկություններ են անհրաժեշտ ռազմավարական պլանում օգտագործելու համար, որտեղից կարելի է ստանալ այդ տեղեկությունները և ինչպես կարելի է տեղեկությունները վերածել օպերատիվ հետախուզական տվյալների:
- Գիտի՝ ինչպես աջակցել տվյալ ցույցին, ինչ է անհրաժեշտ աջակցման համար և որոնք են ռիսկերը:
- Պլանավորում է՝ ինչպես է իրականացվելու հաղորդակցությունը կազմակերպիչների և շահագրգիռ այլ կողմերի հետ, ով է լինելու դրա պատասխանատուն:
- Հետևում է «անակնկալների բացառման» սկզբունքին և նպատակ ունի ձևավորել երկխոսություն:
- Ձևավորում է վստահություն, այդ նպատակով մշակում է մեդիա ռազմավարություն:
- Տարբերակում է զանազան մասնակիցներին և նրանց (հավանական) նպատակները:
- Ապահովում է օպերատիվ և մարտավարական հրամանատարության պատշաճ տեղեկացվածությունը ռազմավարական պլանի, այդ թվում՝ մեդիա ռազմավարության մասին:
- Ստեղծում է պատշաճ ինտեգրված հրամանատարական կառուցվածք (այն դեպքերում, երբ անհրաժեշտ է մեկից ավելի մարտավարական հրամանատար, ապահովում է հրամանատարական հստակ շղթայի և հաղորդակցման ուղիների առկայությունը), որն օժտված է անհրաժեշտ գործառույթներով (այդ թվում՝ օպերատիվ-հետախուզական, քննչական և աջակցման գործառույթներով):
- Սահմանափակումներ է սահմանում մարտավարական տարբերակների համար:
- Այդ մասին տեղեկացնում է օպերատիվ մակարդակին:
- Ռեսուրսների հատկացման մասին որոշումներ է կայացնում:
- Կապ է պահպանում կազմակերպիչների և այլ շահագրգիռ կողմերի հետ:
- Հաստատում է օպերատիվ պլանը(ները):
- Արձանագրում է կայացված որոշումները:

Օպերատիվ հրամանատարությունը՝

- Ռազմավարական պլանի հիման վրա իրականացնում է հավաքի գործնական պլանավորում և կազմում օպերատիվ պլան, որը բացատրում է ռազմավարական պլանի և, ընդհանուր առմամբ, հավաքի ընթացքում ծառայության իրականացումը:
- Սահմանում է ոստիկանական գործունեության նպատակներ (ելնելով ռազմավարական մտադրություններից), որոշում մարտավարական տարբերակներ, նախապատրաստում անձնակազմի հրահանգումը և ծավալումը, կառավարում ռեսուրսները հավաքի ընթացքում:
- Ռազմավարական հրամանատարության հետ ճշտում է օպերատիվ պլանների համապատասխանությունը ռազմավարական մտադրություններին:
- Ձևավորում է հրամանատարական կառուցվածք՝ օպերատիվից մինչև առաջնագիծ:
- Երաշխավորում է, որ ներգրավված ոստիկանական ուժերը համարժեք են հավաքին և օպերատիվ-հետախուզական տվյալներով նշված ռիսկերին/սպառնալիքներին:
- Արձանագրում է կայացված որոշումները:
- Նախապատրաստում է օպերատիվ մակարդակի համար հրահանգավորում, բացատրում ռազմավարական մտադրությունները, ինչպես նաև ռազմավարական պլանով կիրառելի հնարավոր սահմանափակումները, օպերատիվ պլանը, այդ թվում՝ ոստիկանական գործունեության նպատակները և մատչելի օպերատիվ տարբերակները:

Մարտավարական հրամանատարությունը՝

- Հասկանում է ռազմավարական մտադրությունները և իրականացնում օպերատիվ պլանը:
- Վերահսկում է որոշակի աշխարհագրական տարածքում կամ առանձին գործառույթի կատարման համար ծավալած ռեսուրսները:
- Տեղեկացնում է ենթականերին ռազմավարական մտադրությունների և օպերատիվ պլանի վերաբերյալ:

Հավաքի ԸՆԹԱՑՔՈՒՄ

Ռազմավարական հրամանատարությունը՝

- Մշտադիտարկում է միջոցառումը, հետևում է ընդհանուր օպերացիային:
- Ըստ անհրաժեշտության՝ վերանայում է ռազմավարական մտադրությունները:
- Համագործակցում է օպերատիվ հրամանատարի հետ:
- Արձանագրում է կայացված որոշումները:

Օպերատիվ հրամանատարությունը՝

- Աջակցում է միջոցառմանը:
- Ուսումնասիրում և, ըստ անհրաժեշտության, ադապտացնում է ոստիկանական գործունեության նպատակները և կիրառվող մարտավարությունները:
- Ապահովում է, որ մարտավարական հրամանատարները հավատարիմ մնան ռազմավարական մտադրություններին և օպերատիվ պլանին:
- Հետևում է հավաքին տեղակայված ոստիկանների վիճակին:
- Արձանագրում է կայացված որոշումները:
- Ապահովում է քրեական բոլոր միջադեպերի քննությունը (անհապաղ կամ հետագայում):
- Ապահովում է կարևոր տեղեկությունների փոխանցումը վերև՝ ռազմավարական հրամանատարին:
- Ապահովում է կարևոր տեղեկությունների փոխանցումը ներքև՝ մարտավարական հրամանատարին:

Մարտավարական հրամանատարությունը՝

- Վերահսկում է ոստիկաններին:
- Պատասխանատվություն է ստանձնում իր ենթակայության տակ գտնվող ոստիկանների գործողությունների համար:
- Հնարավորինս հրատապ զեկուցում է ուժի կիրառման բոլոր դեպքերի մասին:
- Ապահովում է հանցագործությունների, այդ թվում՝ ոստիկանության անօրինական գործողությունների ապացույցների պատշաճ հավաքումը, պահպանումը և փոխանցումը քննչական խմբին:
- Պատասխանատվության շրջանակում կայացնում է որոշումներ, թույլատրում կամ արգելում ոստիկանական որոշակի մարտավարությունների կիրառումը:
- Ապահովում է կարևոր տեղեկությունների փոխանցումը վերև՝ օպերատիվ հրամանատարությանը:
- Ապահովում է կարևոր տեղեկությունների փոխանցումը ներքև՝ հավաքին տեղակայված ոստիկաններին:
- Հետևում է հավաքին տեղակայված ոստիկանների վիճակին:

Հավաքից ՀԵՏՈ

Ռազմավարական հրամանատարությունը՝

- Ապահովում է արդյունքների պատշաճ ամփոփման իրականացումը:
- Հավաքում է օպերատիվ հրամանատարությունից ստացված ողջ տեղեկատվությունը:
- Պատրաստում և կազմում է զեկույց՝ քաղված դասերով:
- Ապահովում է ռազմավարական բոլոր որոշումների արձանագրումը:
- Հաստատում է օպերատիվ հրամանատարության զեկույցը:

Օպերատիվ հրամանատարությունը՝

- Տեղեկություններ է հավաքում մարտավարական հրամանատարության կազմակերպած արդյունքների ամփոփումներից:
- Ամբողջական տեղեկատվություն է հավաքում մարտավարական հրամանատարությունից և փոխանցում այն ռազմավարական հրամանատարությանը:
- Ապահովում է միջոցառման ժամանակագրության, ոստիկանական ուժերի ծավալման, միջադեպերի և գործողությունների արձանագրությունների կազմումը:
- Ապահովում է կայացված կարևոր որոշումների արձանագրությունների կազմումը:
- Հաստատում է մարտավարական հրամանատարության զեկույցը:

Մարտավարական հրամանատարությունը՝

- Օպերացիայի մասնակից ոստիկանների հետ ամփոփում է արդյունքները:
- Հավաքում է արդյունքների ամփոփումների տվյալները, այդ թվում՝ շահագրգիռ կողմերից, և փոխանցում դրանք օպերատիվ հրամանատարությանը:
- Ապահովում է ենթակաների կողմից արձանագրությունների և գրառումների լիարժեք պատրաստումը, ստուգում և ստորագրում է դրանք:
- Արձանագրում է իր կայացրած որոշումները և գրի առնում այլ կարևոր տեղեկությունները:
- Միջոցառումից հետո աջակցություն է ապահովում դրա կարիքն ունեցող ոստիկաններին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ԵՎ ՕԳՏԱԿԱՐ ՀՂՈՒՄՆԵՐ

Տպագիր աղբյուրներ

"Policing Assemblies", Amnesty International, 2013,
https://www.amnesty.nl/sites/default/files/ainl_phrp_short_paper_policing_assemblies.pdf>.

"Manual of Guidance on Keeping the Peace", Association of Chief Police (ACPO), 2010,
<http://www.acpo.police.uk/ProfessionalPractice/UniformedOperations.aspx>.

Alexander E. Berlonghi, "Understanding and planning for different spectator crowds", Safety Science, Vol. 18, No. 4, 1995, pp. 239-247.

J. Bliss, C. Fallon, N. Headen, and R. Gaskins, "Crowd Reactions to Sublethal Weapons: Universal Triggers for Crowd Violence", *Proceedings of the Human Factors and Ergonomics Society Annual Meeting,* Vol. 48, 2004, pp. 243-254.

"European Police Code of Ethics", Council of Europe, 2001,
<https://wcd.coe.int/ViewDoc.jsp?id=223251>.

"Understanding Crowd Behaviours Guidance and Lessons Identified", Emergency Planning College (Leeds: University of Leeds, 2009),
<https://www.gov.uk/government/publications/understanding-crowd-behaviours-documents>.

"Egypt – Keeping Women Out: Sexual Violence Against Women in the Public Sphere", FIDH, 2014,
<http://www.fidh.org/en/north-africa-middle-east/egypt/15140-egypt-epidemic-of-sexual-violence-continues>.

"Recommendations for Policing Political Manifestations in Europe", Godiac 2013,
<http://polisen.se/en/Languages/The-Swedish-Police/ International-cooperation/Cooperation-in-Europe/The-Godiac-Project/>.

"Field study Handbook", Godiac, 2013,
<http://polisen.se/PageFiles/321996/Field_study_Handbook_2013.pdf>.

"Adapting to Protest", Her Majesty's Inspector of Constabulary, 2009,
<http://www.hmic.gov.uk/publication/adapting-to-protest/>.

"Adapting to Protest – Nurturing the British Model of Policing", Her Majesty's Inspector of Constabulary, 2010, <http://www.hmic.gov.uk/ publication/adapting-to-protest-nurturing-the-british-model-of-policing/>.

J. Hoggett, and C. Stott, "Crowd psychology, public order police training and the policing of football crowds", *Policing: An International Journal of Police Strategies & Management,* Vol.33 No: 2, 2010, pp. 218–235.

"Demonstrating respect for rights? A human rights approach to policing protest", Houses of Parliament, Human Rights Joint Committee, 2009, <http://www.publications.parliament.uk/pa/jt200809/jtselect/jtrights/47/4702.htm>.

K. Lansing, The Rite of Return: *Coming Back from Duty-Induced PTSD* (USA: High Ground Press, 2012).

T.D. Madensen, and J.Knutsson, Preventing Crowd Violence (Lynne Riener, Boulder, Colorado, 2011).

"Handling of the Media during political demonstrations, Observations and recommendations", OSCE Special Report, 2007, <http://www.osce.org/fom/25744>.

"Guidebook on Democratic Policing by the Senior Police Adviser to the OSCE Secretary General", OSCE, SPMU Publication Series Vol.1, 2nd edition, 2008, <http://www.osce.org/spmu/23804>.

"Guidelines on Freedom of Peaceful Assembly" (2nd edition), OSCE ODIHR & Venice Commission, 2010, <http://www.osce.org/odihr/73405>.

"Handbook on Monitoring Freedom of Peaceful Assembly", OSCE ODIHR, 2011, <http://www.osce.org/odihr/82979>.

"Guidelines on Protection of Human Rights Defenders", OSCE ODIHR, 2014, <http://www.osce.org/odihr/119633>.

S. Reicher, *The psychology of crowd dynamics,* in M.A. Hogg and R.S. Tindale (eds.), *Blackwell handbook of social psychology: Group processes,*. (Oxford: Blackwell., 2001).

S. Reicher, C. Stott, J. Drury, O. Adang, P. Cronin, and A. Livingstone, "Knowledge Based Public Order Policing: Principles and Practice", *Policing*, Vol. 1, No. 4, 2007, pp. 403-415.

S. Reicher, C. Stott, P. Cronin, & O. Adang, "An integrated approach to crowd psychology and public order policing", *Policing: An International Journal of Police Strategies & Management,* 2004, pp. 558-572.

Roberts, and T. Garton Ash (eds.), *Civil Resistance & Power Politics: The Experience of Non-Violent Action from Gandhi to the Present Day* (Oxford: Oxford University Press, 2011).

C. Stott, & O. Adang, *Understanding and managing risk. Policing football matches with an international dimension in the European Union,* (UK: Bavnebanke Press, Slagelse, 2009).

"Dialogue Police: Experiences, Observations and Opportunities", Swedish National Policing Board, 2010, <http://polisen.se/en/Languages/Service/Publications/Hallare/Dialogue-Police/>.

"Standard Minimum Rules for the Treatment of Prisoners", United Nations, 1977, <http://www.refworld.org/docid/3ae6b36e8.html>.

"Code of Conduct for Law Enforcement Officials", United Nations, 1979, <http://www.ohchr.org/EN/ProfessionalInterest/Pages/LawEnforcementOfficials.aspx>.

"Basic principles on the use of force and firearms by law enforcement officials", United Nations, 1990, <http://www.ohchr.org/EN/ProfessionalInterest/Pages/ UseOfForceAndFirearms.aspx>.

"Authority, Command and Control in United Nations Peacekeeping Operations", United Nations, Policy, Department of Peacekeeping Operations/Department of Field Support, Ref. 2008.4, February 2008, <http://www.peacekeepingbestpractices.unlb.org/PBPS/Library/Authority,%20Command%20and%20Control%20in%20UN%20PKOs%20FINAL%20SIGNED%2015%20Feb%2008.pdf>.

"Formed Police Units in United Nations Peacekeeping Operations, Policy (Revised)", United Nations, Department of Peacekeeping Operations/ Department of Field Support, Ref. 2009, 32, 2009, <http://www.un.org/en/peacekeeping/sites/police/documents/formed_police_unit_ policy_032010.pdf>.

Առցանց ռեսուրսներ

Կազմակերպություն	Կայք
Քաղաքացիական ազատությունների պաշտպանության ամերիկյան միություն	https://www.aclu.org/
Amnesty International	www.amnesty.org
Հոդված19	http://www.article19.org/
Ոստիկանության պետերի ընկերակցություն (ՄԹ)	www.acpo.police.uk
Քաղաքացիական ազատությունների պաշտպանության կանադական միություն	http://ccla.org/
Համագործակցության պետությունների մարդու իրավունքների նախաձեռնություն	www.humanrightsinitiative.org
Եվրոպայի խորհուրդ	www.coe.int
Մարդու իրավունքների եվրոպական դատարան	www.echr.coe.int
Մարդու իրավունքների միջազգային դաշինք (FIDH)	http://www.fidh.org/en/
Human Rights Watch	www.hrw.org
Ոստիկանության պետերի միջազգային ընկերակցություն	www.theiacp.org/
Միջազգային քրեական դատարան	www.un.org/law/icc/index
Կարմիր խաչի միջազգային ֆեդերացիա	www.ifrc.org
Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակ	www.osce.org/odihr
Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն	www.osce.org
Ամերիկյան պետությունների կազմակերպություն	www.oas.org
Միավորված Ազգերի Կազմակերպություն	www.un.org
ՄԱԿ-ի պաշտոնական փաստաթղթերի համակարգ	http://documents.un.org